


Հայաստան

ՓԵՏՐՈՒՄ

87



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1 — Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Զանձն իմ Փառաւորեայ
- 14 — Ա. ՃԻԻՂԵԱՆ Հին երգերու արահետով
- 15 — Պ. ՍՆԱՊԵԱՆ Միջնարար — 5
- 33 — Ա. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Անաւարտ մի երգ՝
Նիւ Եսթի գետնուզում
- 35 — Կ. ՊԵՆՆ Դիակատունը եւ ուրիշ քերթուածներ
- 41 — Բ. ԲԷՊԱՊՃԵԱՆ Կոթքփրիտ Պեննի մօտեցման փորձ մը
- 45 — Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Միլան Գիւնտերա — սեւ հեզանճի
վարպետը
- 56 — * * * Գիշերն անուշ է...
- 65 — Փ. Տ. Ա. Յառաջաբան
- 68 — Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Վարուժան Խտըշեանի
«Հայաստանի լեռներուն սրինգահարը»
- 73 — Ս. ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ Վաչէ Ատրուցիի
«Փայտաշիլներու պահարանը»
- 76 — * * * Գառնիկ Աղղարեանի մահը
- 76 — Գ. ԱԴՊԱՐԵԱՆ Ապրիլ — մեռնիմ
- 78 — * * * Հայկ Պալեանի մահը
- 79 — Պ. Ս. Դու ... գործ ես արել,
մե՞նք ... յանձն եմք առել





Քաղաք

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՁ. ՏԱՐԻ. ԹԻԻ 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1987 ՊԵՅՐՈՒԹ

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ

ԶԱՆԶՆ ԻՄ ՓԱՌԱԻՈՐԵԱԼ

Ասիլ առաջ մեկ-երկու հատուած ներկայացուցած ենք մեր աշխատակիցներին Սմբատ Փանոսեանի «Զանգն իմ Փառաւորացի» ծաւալուն վեպին, որ, ինչպէս կը տեղեկացնէր մեր նախորդ թիւին մէջ արուած հաղորդագրութիւնը, «Գեորգ Մելիքիանցի» գրական մրցանակի դառնակազմին կողմէ արժանի համարուած է հրատարակութեան:

Ասիլ լայն գաղափար մը տալու համար վեպին բնոյթին մասին, կը ներկայացնենք մեկ-երկու հատուած եւս:

Մ Ի Զ Ն Ա Ր Ա Ր

1

ԲԼԻՑՈՎ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԱԾ ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎ

Երկու կարեւոր գէպեր պատահեցան Համաշխարհային Երկրորդ պատերազմի վախճանին...

Ֆուլթոն քաղաքին մէջ, Անկլո-սաքսոն Միսթըր Զրրիլ պատերազմ կը յայտարարէր իր նշանաւոր ճառով՝ երէկի դաշնակից կարմիր ցարին դէմ Մեծն Ռուսիոյ... Միեւնոյն օրը, պատմական զուգադիպութեամբ, Զանգն իմ Փառաւորացի թիւին մէջի մտորէ էֆենտի Թորայեան, Մեծ Քաղաքի Հաֆ-հաֆ Քաղիքի գրականի մէջ ամակիրներու գաղտնի ժողովին, կը բանար սպիտակ գրի մը ծալքերը...

Handwritten signature and date: 1987 9/9

digitised by A.R.A.R.@

Ֆեմփարեակութեան շրջանին, քսաներեք տարի առաջ, Թորայեան ամօջին ֆանֆերով ծնունդ կ'առնէր Ջաննն իմ Փառաւորեալի Ընկերակցու-
 բիւնը, որ քաղաքական բնոյթ կրելով հանդերձ, կը հետապնդէր հասպաշտա-
 կան նպատակներ: Ակիզքի տասներկու տարիները, մանուկ Փառաւորեալին
 համար եղան փորձութեան դժնդակ ու երաշտ տարիներ: Փողոցին մէջ կամ
 հրապարակներուն վրայ անդադար թակոցներ ստացաւ դիտուելու եւ կոնակելու:
 Ազգային առճական արժատներէ զուրկ երեւոյթ մըն էր, խորթ՝ ժամանակի
 մտայնութեան եւ պատմութիւն չինած մարդոց: Երջանիկ պատանութիւն եւս
 չունեցաւ, երբ կը բոլորէր յաջորդ երկոտասան տարիները, ապրելով հանդերձ
 քեմփերէն հետու, ազատ շրջաններու մէջ: Ջաննն իմ Փառաւորեալին համար
 աննպաստ ժամանակներ էին: Ֆեմփարեակ հայեր ծուռ աչքով կը դիտէին
 Երկրէն շտկած-բերած էֆէնտիական արխտոկրատիան եւ իր կարմիր Ֆէսը
 ցուցադրող Փառաւորեալը: Սերորէ Թորայեան եւ տիկին Սաթենիկ, երբ զի-
 րար թիւոցած կ'անցնէին հասարակ, աշխատանք, անշնորհ, հազուած, աղ-
 քատ քեմփերներուն քովէն, քիթ կը բռնէին եւ արհամարհանք կ'ունենային
 առհասարակ ժողովուրդին հանդէպ: Ինքզինքնին կը համարէին վերի արտի
 ցորեն եւ կը տոնքային: Հիմնադրեցին Փառաւորեալը, որպէսզի ու ժի մէջ մնա-
 ր իրենց մեկուսապաշտական ետ: Քսաներեք տարուան մէջ Ջաննն իմ Փառա-
 ւորեալը թիւով չէր զարգացած, կորովի զուրկ դասակարգ մնացեր էր. ահա թէ
 ինչու ծեծ ուտելը եւ դատնութիւնները հասած էին ոչ բազմալի համեմատու-
 թիւներու ...

Սերորէ Թորայեանի տուն մէջ կայացած այդ գաղտնի ժողովին, որուն
 նախագահութիւնը տանձնած էր Խորէն Բարձրիկեան, մնայուն քարտուղա-
 րութեամբ՝ Արշակ Մեղայեանի, տանտիրուհին, Սաթենիկ Թորայեան, հիւրեր
 ընդունելու պէս ոտքի՝ առաջին խօսք առնողը եղաւ.

—Սերորէի եւ իմ ուրախութիւնը անչափելի է, սիրելի այր մարդիկ եւ
 բարեկամներ. մենք, այժմ, քաղաքիս մէջ կը ներկայացնենք մեր ժողովուրդին
 համեմբ. վերցուցէք ճշտակցանին վրայէն համեմբ՝ ազն ու պղպեղը, ի՞նչ կը
 մնայ հոն՝ անհամ ապուր մը. ահա, մեզմէ դուրս՝ հայ հասարակութեան իս-
 կութիւնը, համեմբ զուրկ պաղած ապուր, որուն զգալ զարնելն իսկ պժգանք
 կը պատճառէ մեր նրբացած քիմքերուն: Ջաննն իմ Փառաւորեալը, մեր շնոր-
 հիւ, սիրելի եւ յարգարժան այրեր, այսօր իր քսաներեք տարին կը բոլորէ. մաղ-
 թենք եւ յուսանք, որ անիկա ունենայ իր յիստիւնը, հարեւրը եւ շատ մը հարեւր-
 ներ...

Գաղտնի ժողովին հանգամանքը արդիւք չեղաւ, որ, նախագահութեան
 աթոռէն ձայնը բարձրացնելով՝ Խորէն Բարձրիկեան պոռար.

—Կեցցէ՛ մեր բոլորիս սիրելի տիկնանց տիկին Սաթենիկը...

Կարճ այդ ընդմիջումէն ետք, Սաթենիկ Թորայեան, ուրախութեան
 արցնքաշողը աչքերուն, բայց յուզկոտ բարկութեամբ ճշաց գրեթէ.

—Ա՛յ կը բաւեն մեր քաջածնէրը. շատ տառապեցանք մեր թշնամիներ-
 թէն. խոտցնենք Ջաննն իմ Փառաւորեալին շարքերը, զօրացնենք զայն նորա-
 կոչներու բազմութեամբ. ժամանակը մեր հաշուոյն կ'աշխատի այսօր:

Ապա՛ յուռ վայրկեան մը յանձնեց իր յուզկոտ հեւքին եւ բոլորովին այլ
 ձայնաչելտով՝ ըսաւ.

—Ես վերջացուցի. բարի էք եկած բոլորդ մեր մեծ յարկին տակ ժողովի:

Տիկին Սաթենիկ չիղնցաւ մէկէն եւ, աթոռ մը փնտռելու պէս՝ ուզողակի
 նստեցաւ: Վաղարշ Արշակունիի քով, անկէ սպասելով դժմաստանական քանի մը
 խօսք, իր փայլուն ելոյթին ի պատիւ: Արշակունիին առիթ յունեցաւ ար-
 տայալուելու: Սերորէ Թորայեան ոտքի կ'ելած՝ կը խօսէր.

—Յարգելի եղբայրներ, սիրելի տիկիներ եւ ազնուաշնորհ օրիորդներ, որոնց ներկայացուցիչները կը գտնենք հոս, յանձինս մեր կողակիցին, Սաթեմիկին եւ օրիորդ Մեխակեանին: Ընդունուած է, թէ կիներուն մազը երկար կ'ըլլայ եւ խելքը՝ կարճ. իսկ չեզո՞ւն. բոլորդ փորձառութեամբ զխելք-չատ երկար ու թոյլ Աւելցնեմ, որ այդ ամէնով հանդերձ, անոնք կը մնան մեր սրտին եւ զլիտուն թազը եւ, ցաւ ի սիրտ՝ բացակայ են մեր այսօրուան ժողովին. թող ներողամիտ գտնուին առնուած որոշումին համար: Այս ժողովին մէջ ծեծուելիք հարցերը պէտք է մնան գաղտնի: Փոքր չեզում ճշ պիտի ընենք սկզբունքային մեր տեսարանութեան մէջ. պիտի զգուշանանք ձեռնոց նետել մեր հակառակորդներուն. ծտա է ներդադրի ծածը...: Դուք, յարգարժան եղբայրներ, հիմա հարց պիտի տաք, թէ ի՞նչ, առնելու ենք մեր անկողիներն ու փապունք՝ պատրաստուելով մեկնելու: Ի հարկէ՞ ոչ. մեր հակացողութեան ոգին հաշա եւ համաձայն չէ Հայրենիքին մէջ կիրարկուած ռեժիմին տուեալներուն հետ: Մեր անտեսական մակարդակին եւ ճաշակին խոտոր են այնտեղի պայմանները: Սակայն կայ մեծապէս միւս երեսը: Մենք մեր թերթերով ու բեմերէն, խոսքապատշաճներով պէտք է քաջալերենք ներդադրը, տալու համար այն ապաւորութիւնը, թէ ամէնէն առաջ վազողը մենք պիտի ըլլանք: Այսպէս շարժելով, կը գրգռենք մեր հակառակորդները՝ հարկեալ սիրութեան խայծը ցցելով իրենց դէմ. սովորութիւն դարձած է, թէ ուր որ մեր ջիւղն ու ծառը խոթենք, հոն կը նետուին մեղմէ առաջ. — Սերբէ թորայեան հոս քմծիծաղային խնդուք ճշ գրաւ չըթնկուին: — Ի՛հ, հազար բարի. թող իրենք վազ տան դէպի ներդադր. մենք ալ կը նստինք ծանր-ծանր եւ իրենց տկարացած շարքերուն մէջ հովիւի զեր կը ստանձնենք: Այսպէսով, սատարած կ'ըլլանք մեր սիրելի Զանձն իմ Փոռուաւորային. շարքերը կը խոսացնենք:

Նախազանգական ամբողին հանդիսա շունչոց Խորէն Բարձրիկեան կրկին ուսքի նետուեցաւ եւ դուչեց.

— Կեցցէ՛ մեր սիրելի, Փառաւորեայի հիմնադիր Սերբէ թորայեանը. ծափահարենք ու ժգին ի պատիւ իրեն: Ոսկի միտքեր են...

Ոսկի միտքերը ունեցուցին Սերբէ թորայեանի թոքերը. փքուեցաւ հեղկահաւի պէտ: Տիկին Սաթեմիկ զոհունակութեամբ ուսքի ելաւ ու գնաց զէպի խոհանոց՝ հիւրասիրութեան իր պարտքը կատարելու: Ներկաներուն առջեւէն իր անցքը եղաւ տպաւորիչ. նեղ պարեզօտին մէջ սեղմուած ժարժիւնին այն ժառը, որ հրացում կը պատճառէ այր ժարդոց, քաշեց տարաւ ներկաներուն ուշն ու միտքը: Օրիորդ Մեխակեան փոփոսաց վաղարչ Արշակունիի ականջին.

— Կը նախանձիմ էրիկ ժարդոց եւ կ'անխձեմ բախտ: Տիկին թորայեան շնորհք ունի, — եւ առնելութեամբ նայեցաւ Խորէն Բարձրիկեանին:

Վաղարչ Արշակունի կրկինց փոփոսացով.

— Ենթոհներ շատ ունի տիկին Սաթեմիկ. ո՞ր շնորհքին մասին է խօսքը...

— Կոնքախաղին, որով գերած է այր ժարդերդ. այդ Բարձրիկեանին բերնին ջուրերը կը վազէին:

— Ես չնշմարեցի:

— Դուն ի՞նչ կը նշմարես արդէն. մայրդ զգացո՞ւմ թողած է մէջդ. դուն մինչեւ իսկ զիս չես նշմարեր:

Եւ օրիորդ Մեխակեան խածաւ չըթնուքը, ինքն իր գուարթախոհութեան համար քահ-քահով շփոթորկելու սրաւը:

Մինչ այդ, Սերբէ Եփեմեան կը շարունակէր զարգացնել իր միտքերը.

— Հայրենիքի իշխանաւորներու աչքին մենք վատահիշ տարր ճշ չենք. հոն, անոնք մեզ կ'ընդունին իբրեւ անհանդուրժ կողմ, սպառժուա եւ յետա-

գիմական դասակարգ: Որպէսզի շահինք իրենց վստահութիւնը եւ մեր խօսքը լսելի դառնայ Հետապային Հայաստանի մէջ, պէտք է որ մենք այժմէն դաշնակցինք երէկի մեր արձամարանքին եւթակայ Երրորդ եւ Զորրորդ դասակարգերուն հետ, մանաւանդ Զորրորդին հետ պէտք է գառնանք, առերես՝ բարեկամ ու գաղափարակից, գիտակցելով հանդերձ գաղափարակից ըլլալու տխուր եւ վտանգաւոր հետեւանքներուն: Անգամ մը, որ յաջողցուցեր ենք զանգուածային ներդաշնակ հակառակորդի շարքերուն մէջ, մեր ունեցած այժմուսի միջոցը կը բազմապատկուին: Չանձն իմ Փառաւորեալը կը գառնայ ինքնին իշխող միաւոր- կը հովանաւորենք Երրորդին շարքայինները եւ հայաճանճի կը սկսինք Զորրորդ հատուածին դէմ, այս փերջինը ըլլալով օտարածին ապրանք մեր Հաւաքականութեան աչքին...

Այդ պահուն սրահին մէջ յատկացած ժխորային փոփոխքը Սերորէ Քորայեան ընդունեց իրբեւ հետեւութիւն իր ճառին վերջին մասին: Ժողովարարին մէջ գտնուողները ունէին, սակայն, այլ մտահոգութիւն մը: Տիկին Սաթևիկի Քորայեան մուտք կը գործէր բոլորովին այլափոխուած. կը կրէր կապտազոյն սաթենէ վառ պարեզօս մը, կապոյտ յակինթէ օղեր եւ վիզին կախ էր ինկած մինչեւ կործքերուն խորհրդաւոր փոսիկը ճառագայթող մանուկ մը: Ան իր ետեւէն կը քաշէր-կը բերէր օչարակի բաժակներով ծանրաբեռնուած մատուցամաններ կրող սիրունիկ երկու աղջիկներ: Քաղաքին մէջ ծանօթ լուսայափոխ Հրանտ Կորիզեան, ժպտելով, սուր քիթը ցցած՝ ելաւ ոտքի: Կր թուէր, թէ խոնարհութիւն ընկու ձեւ մըն էր քովէն անցնող տանտիրուհիին: Բայց քանի որ բարբառի սկսաւ, բոլոր աչքերը գարձան իր կողմը:

— Ես սկզբունքի մարդ եմ, — մտիկ տուաւ, թէ ժխորէն լուսած էին իր բառերը ու թերահաւատ՝ կրկնեց, — ես սկզբունքի մարդ եմ, ուրեմն՝ պարագայապաշտ մէկը շեմ կրնար ըլլալ: Եղբայր Սերորէ, մեր առաջարկները սկզբունքիս զէմ գտնելով, համաձայն շեմ մեր կանոնադրութեան մէկ տարի փոփոխութեան իսկ. բայց քանի որ կ'ընէք, թէ կենսական հարց է փոփոխութիւն մտցնելը եւ ատկեալ առերես բան մը պիտի ընդունինք, որոշ ժամանակի մը համար, այդ պարագային՝ ես կրնամ համաձայն գտնուիլ ձեզի հետ...: Միայն շիրջի պարզորոշ հասկնալ, թէ էրբ կան Երրորդ եւ Զորրորդ կարգեր, անպայման գոյութիւն կ'ունենան Առաջին եւ Երկրորդ կողմեր...: Հիմա, ինքզինքիս կը թոյլատրեմ հարց տալ, թէ մեր Չանձն իմ Փառաւորեալին տեղը ո՞ր է այս ամէնուն մէջ: Եղբայրներ, կը գտնուինք շատ կարեւոր հարցի մը առջև, անոր լուսարանութիւնը կենսական է. կը հանի՞ր լուսարանել, յարգելի էրքայր Սերորէ. գիտէք, թէ ես մթութիւններէն շեմ ախորժիք: Ես վերջացուցի ըսելիքս. շնորհակալութիւն ունկնդրուելուս համար:

Կորիզեան նստեցաւ եւ սկսաւ սրբել վիզին եւ ճակտին բուսած քրտինքը: Նախազահական աթոռին կից՝ քարտուղար Արշակ Մեղայեան զէպի իրեն ծռել տուաւ Խորէն Բարձրիկեանի գլուխը:

— Արեւիկին սիրոյն է, որ մենք պիտի հանդուրժենք կրկանը դուրս տուած յիմարութիւնները:

Բարձրիկեան շարժեց գլուխը, սակայն նայուածքով կը հետեւէր տիկին Սաթևիկի ձկնածու մարմնի շարժումներուն: Ան վստահ էր, որ բլիթով օշարակին բաշխումը պիտի սկսէր իրմէ եւ անհամբեր էր ողջունելու տիկինին բարեմասնութիւնները:

Սերորէ Քորայեան անճրկած՝ կը մնար լուռ եւ իր հարցական նայուածքը կը պտտէր ներկաներուն գէմքերուն շուրջ, որոնելով այն մէկը, որ կրնար պատասխանել Հրանտ Կորիզեանի սկզբունքային հարցումին: Արշակ Մեղայեանն իսկ զէմքը հակած էր վար. իսկ Բարձրիկեան կը խժտէր ահա հրամցուած կարկանդակը իր մսակերի խոշոր ակուններուն տակ եւ կը թուէր

անտարբեր ու դուժգոյացած: Անյարմար ժամանակին տրուեցաւ հարցը, արդ-
եօք: Ինչո՞ւ ոչ ոք չէր հետաքրքրուեր Հրանտ կոչուած խենթին գլորած քարով:
Սերորէ Թորայեան բարկացած կը թուէր կնոջ վրայ, անժամանակ հերասի-
րութեան համար, սակայն ստիպուած էր պատասխանել Կորիզեանին, որ եր-
կու սուբ աչքերը յատած էր իր վրայ:

— Եղբայր Կորիզեանին հարցումը տեղին կը նկատեմ եւ պէտք է ուղ-
ղըած ըլլայ բոլորիս: Եթէ բոլորս՝ նկատի ունիմ կարկանդակով եւ օշարակով
զբաղողներս,— ժպտեցաւ ինք իրեն համար,— ուստի, պիտի խնդրէի Կորիզեա-
նէն, որ ներողամիտ գտնուի, եթէ յոռութեամբ անցնինք հարցին վրայէն այս
անգամ: Նման խնդիրներ ժամանակի փրօպիլէմներ չեն, ամէն անձ կրնայ
ինքզինքին տալ այդ հարցը եւ, թիչ մը խորհելով՝ գտնել պատասխանը...

Մտտ բարձրացնելով՝ Հրանտ Կորիզեան վեր ելաւ տեղէն:

— Ես կ'ուզէի, եղբայր Սերորէ, որ գոնէ դուք մեզ ամբաստնէիք մեր
համոզումներուն մէջ. սկզբունքը այդպէս կը պահանջէր...

— Պահանջ գազտնիքը մեր մէջ: Այս օրերուն ինչո՞ւ խնդիր յարուցա-
նենք Առաջինի եւ Երկրորդի հասկացողութիւններու միջեւ: Ըստ արդէն՝ ձեռ-
նոց նետելու չենք մեր հակառակորդներուն. համբերող ըլլանք...

Բարձրիկեան հասաւ օգնութեան:

— Այո, համբերող գտնուինք եւ պահանջ գազտնիքը մեր մէջ, ժողովին
մէջ առնուած որոշումները, թուրքերանութեան հետեւանքով, կրնան յառաջ
բերել մամուլի սուբ պայքար. կիրքերը շարժուենք. հասկնալի՞ է: Ներդաշխին
եսք ընկեր Կորիզեան կրնայ կրկին մեզի ուղղել իր միտքը զբաղեցնող հար-
ցումը եւ ես սիրով պիտի տամ պատասխանը: Այժմ, հարկ է, որ ձեւակերպէ
ժողովին միտք բանին մեր շատ յարգելի Արշակ Մեղայեանը:

— Զեւակերպենք,— Արշակ Մեղայեան ցուցադրարար շարժեց «Փար-
քըր» սուղոց գրէշը, զոր իրեն նուէր տուած էր Անդինէ Մեղայեան:

Վաղարշ Արշակունի ոտքի ելաւ:

— Ես կ'առաջարկեմ ոչ մէկ արձանագրութիւն անցընել թուղթին:
Առերես գործուելիք արարքները կրնան իսկական արաս բերել, երբ չենք
կրնար նոյնիսկ որոշապէս ճշդել Զանձն իմ Փառաւորեալին տեղը գազութիս
իրականութեան մէջ...

Արշակ Մեղայեանի ձեռքին մէջ «Փարքըր» գրէշը թուղթին վեր ելաւ:
Նախագահ Բարձրիկեան եւս վեր բարձրացաւ իր աթոռէն:

— Ո՞վ համաձայն է պարոն Վաղարշի առաջարկին, թող մատը բարձ-
րացնէ:

— Իրաւ առաջարկին ո՞վ ինչ կ'ըսէ,— տեղէն առանց շարժելու՝ ձայնեց
Բարսեղ Տակառագործեան, աչքախաղով մը գսպել ջանալով օրիորդ Մեխակ-
եանին ծափահարելու ետանդը: Մինչ վեր ելլող ձեռքեր արդէն ցոյց կու տային
Արշակունիին առաջարկին իրաւութիւնը:

Սերորէ Թորայեան երբ իր օշարակի բաժինը կ'ընդունէր, տիկին Սաթե-
նիկ յուշեց:

— Սերորէ, մոռցա՞ր կարեւորը. որոշում պիտի շտրուէ՞ր անդամարշախի
եւ հանգանակութեան յանձնախումբերու կազմուելիք ծրագրին:

Սերորէ անմիջապէս ոտքի կանգնեցաւ. օրահը կ'ազմկէր:

— Լուութիւն. ինչպէս կ'ըսեն մեծ էջը ախտը շմոռնանք: Յարգելի գե-
ղեցիկ սեռի ներկայացուցիչը՝ մեր Սաթեանիկը, ինձի յիշեցնել կու տայ ահա
կարեւոր երկու հարց, մէկը՝ անդամարշախի կը վերաբերի, միւրը՝ հանգանա-
կութեան յանձնախումբի կազմութիւնն է: Յարգելի նախագահը թող բարի
ըլլայ առաջարկները արձանագրութեան յանձնել. ես ըսելիքս ըսի:

Նախագահը՝ Պորէն Բարձրիկեան հարցը դրաւ այսպէս:

— Երկու յանձնախումբերու միեւնոյն ասան գործելը նպաստաւոր է տուեալ ժամանակին, թէ ոչ: Երկրորդ՝ ո՞րն է առաջնահերթ համարուածը: Ես պէտք է աւելցնեմ իմ կողմէս, որ անդամարշաւի հարցը անյետաձգելի խնդիր մը չէ. իսկ հանգանակութիւնը կենսական կարեւորութիւն ունի մեզի համար: Ո՞վ համաձայն չէ ինձի՝ թող ձեռք բարձրացնէ:

Ձեռքեր չբարձրացան: Լեւիի ըլլալու շափ բարձրացաւ օրիորդ Լուսին Մեխակեանի ձայնը, որ կ'ըսէր.

— Ձմերուկը զարձեալ մեր գլխուն պիտի կոտրի, սիրելի Վաղարշ. կը տեսնես:

— Հող մի ընէր, Լուսին: զատկական օրերուն՝ տուներ այցելելը ուրախ աւիթ մըն է աղջիկուտի, կամ՝ շատ-շատ շաբաբ եւ զբաժ գրգռանկու, ինչպէս կ'ընեն մեր ծխական հայրերը,— հեղեղ Վաղարշ:

Նախագահական սեղանին շուրջ հաւաքուեցան շորսերը, որոնք կը ներկայացնէին թթիւմորը Ձանձն իմ Փառաւորեալին: Խորհրդակցելու համար, Խորէն Բարձրիկեան ստիպուած էր խոնարհել իրանը, որ ցցուն կը զարձնէր իր անզոյ սապառը: Մեղայեան եւ Սերոբէ Թորայեան իրենց ուսերուն ունէին տիկին Մաթենիկի թելերը: Սրահը անհամբեր էր գիտնալու, թէ քոտազագաթ լեռը ի՞նչ էր ծնելու: Եւ արդէն ձեւական էր այդ խորհրդակցութիւնը: Տարիներ թ' վեր հանգանակիչ մարմին կոչուածը տեսակ մը պիտակ էր, զոր կը կրէին միեւնոյն անձերը: Արշակ Մեղայեան կը սիրէր պաշտօնական սեթիւեթանքը, ինչպէս վրան կրած զգեստը, որ միշտ նոր կը թուէր մարզոց ուղին: Փողկապը շտկելով՝ ան ոտքի էլաւ. թուղթի կարո մը ձեռքին: Եւ իր ոտքի կանգնելով՝ երկոտասան տարիներու վերջուշը արթնցաւ Արշակունիի եւ Մեխակեանի միտքին մէջ: Վաղարշ ծռեցաւ դէպի Մեխակեանը.

— Լուսին, ահա ք. որբանոցին հերոսը... կը յիշե՞ս:

— Ինչպէ՞ս թէ. ես այլ հոն էի...

— Ներկայ չէիր:

— Բայց տեղեկացայ նոյն օրը: Ինք կծիկը գրած էր. պարոն Գարրիլը զստած էր Սիրուն Վեղայեանը ծառերուն ետին...

Վաղարշ Արշակունի հեղեղ.

— Պզտիկ օրիորդ մըն էիր որբանոցին մէջ. ի՞նչ կը հասկնայիր:

— Հիմակուան խելքովս կը դասեմ անոնց գործած արարքը... Եւ չեմ զղջար այդ հոտած Բարձրիկեանին հետ հաշիւս փակելով ժամանակին...

Վաղարշ — Լուսին վերյուշը, որ կ'ուզէր դեզերիլ դեռ ք. որբանոցին շուրջ ու քրքրել հետքերը Արշակ-Սիրուն սիրային արամին՝ յետս կոչեց Մեղայեան, երբ սկսաւ կարգալ անունները հանգանակիչ յանձնախումբին.

— Կորիզեան Հրանտ, Մեղայեան Անդիէ, Մեխակեան Լուսին, Գիրկեան Սուրէն եւ Արշակունի Վաղարշ: Ահա մեր բոլորիս ծանօթ եւ սիրելի անուններ. իրենց միտեղ երեսնայն իսկ պիտի բանայ զբաժապանակները մեր ժողովուրդին: Անշուշտ, ամէն մէկը ունի իրեն յատուկ առաքելութիւն մը: Եանձնախումբին կը նախադասէ Անդիէ Մեղայեանը. օրիորդ Լուսին Մեխակեան, տեղւոյն վրայ գրանցող, որպէսզի հետագային կարելի ըլլայ թերթին առ անուանացանկը նուիրատուներուն: Պարոն Արշակունիին ընելիքը բոլորիս յայտնի է, գիտէք արդէն: Կը դանձէ ու կը գրգռանէ. պայմանաւ, որ գրպանը շատ խորունկ ըլլայ,— սրահը խնդաց երկիմաստ ըստած խօսքին վրայ. ժպտեցաւ նոյնպէս Մեղայեան, որ աւելցուց,— իսկ մեր յարգելի պարոն Հրանտ Կորիզեանը զեկազարն է յանձնախումբիս: Կը խորհիմ, թէ բոլորս այլ համաձայն ենք սոյն կազմին:

— Պարոն Գիրկեանը,— ձայնեց մէկը սրահին խորէն: Մեղայեան ըստ լրջութեամբ.

—Պարոն Գիրկեան պիտի այցելէ իր դպրոցին աշակերտներուն տունե-
րը, Զատիկուան տօնին առիթով...

Հրանտ Կորիզեան, որ սկզբունքի մարդ էր, անգամ մը եւս ոտքի ելաւ՝
մատը ցցած դէպի Մեղայեանը.

—Ես իբրեւ ղեկավար յանձնախումբիս, սկզբունքի ղէմ կը գտնեմ պա-
րոն Գիրկեանի ղեկավարութիւնը կազմէն ներս: Ան պիտի ըսէ՝ երթանք ձախ,
մերը պիտի ըլլայ դէպի աջ. իր ճամբան եթէ վեր է, մերինը, որ ըլլայ վար, ի՞նչ
կը ստացուի, դուք ըսէք, եղբայրներ...

—Սայլին, որուն շնուած կ'ըլլան խեցդեպիները, մուկն ու կարասը,—
պատասխանեց Բարսեղ Տակաւազործեան:

Տոքթ. Գրաւորեան, որ ժամանակին աննպաստ տեղեկագիր տուած էր
Արշակ Մեղայեանին գէմ, եղաւ Համաձայն դեղազործ Տակաւազործեանին,
որուն Համար Հետազային պիտի ամբաստանուէր կողմնակալութեան յան-
ցանքով: Իսկ նախագահ Պորէն Բարձրիկեան կատակը խառնեց լուրջին, երբ
ըսաւ.

—Եղբայր, թող քիչ մըն ալ դէպի աջ ու ձախ, վեր ու վար ըլլայ եղածը.
Ի՞նչ կը կորսնցնենք...

—Դուն՝ ոչինչ, բայց մեր Հրանտը կը կորսնցնէ Անգիլնէ Խանը: Տի-
կինը կոթնէյիք սիւնի պէտք կ'ունենայ եւ Կորիզեանը այդ պաշտօնին Համար
ծնած է:

Կիսաձայն նկատուած սրամտութիւնը քիչերուն ակունջին Հասաւ եւ Հա-
սած տեղը բարձրացուց տրամադրութիւնները: Սրահը ծիծաղէ ու խնդուքէ
բռնուեցաւ: Կորիզեանին առարկութիւնը իրաւացի նկատեցին. Գիրկեան
դուրս նկատեցաւ յանձնախումբէն: Մեղայեան թէեւ պայմանաւորուած էր
կնոջ հետ Կորկոտեան վարժարանի տնօրէն Գիրկեանի Հարցին շուրջ— տն էթէ
ըլլայ յանձնախումբին մէջ, ես ալ չեմ ուզեր,— ըսած էր աիկին Անգիլնէն, սա-
կայն ստիպուեցաւ պիջիլի եւ անտրամադիր՝ բռաւ.

—Արդարացի են մեր յարգելի ժողովականներէն ոմանք: Պարոն Գիր-
կեանի Հետ ընկերովի կ'ընենք այդ բարոյական, ազգային պարտականութիւ-
նը...

Սերորէ Թորայեան դոփեց այն ասեւն Մեղայեանի ուսը, սրտացաւ մէ-
կու մը պէս.

—Հոգ չէ, Արշա'կ, եղածը մանրուք է եւ նման առարկութիւն մը ըմ-
բոստութիւն չի նշանակեր բնաւ մեզի ղէմ. ցկեանս՝ մենք պիտի առաջնորդ-
դենք այս Հօտը:

Եւ, իբրեւ գազտնի գործ, աւելցուց.
—Ես կը Համոզեմ Անգիլնէն, որ յօժարի ընկերանայ խումբին. Գիրկե-
անը ամէն օր մեզի Հետ է արդէն:

Գիրկեանին Հարցով ալ վերջ կը տրուէր ժողովին:
Հիւրասիրութեան իր պարտականութիւնը լրիւ կատարող, շոյուած այր
մարդոց բաշխած քաղցր բառերէն, աիկին Թորայեան սկսաւ Հոյի նման դասու-
նալ սրահին մէջ, բաշխելով իր ժպիտները եւ զգայի դարձնելով ցաւը՝ շուտ
վերջացող Հաւաքոյթին պատճառով:

—Դեռ կանուխ է. ինչո՞ւ կը մեկնիք. նստելիք, կը խօսէինք մենք մեզի...

Եւ մարդիկ կը սեղմէին ձեռքը, կը դրուատէին կարկանդակն ու օչա-
բակը. կ'ըսէին, թէ կապոյտ սաթէն պարեգօտը կը վայլէր իրեն. ճաշակի տէր
աիկին մը էր ինք... ու կը ժպտէին անոր աչքերուն մէջ, ուր կար վիշտ՝ շուտով
բաժնուելուն:

—Նորէն կը հրամենք, աիկին Սաթնիկ, կ'առնենք մեր աիկիները եւ
կու գանք.— կ'ըսէին:

—Հարկա՛ւ որ պիտի դաք, չգալ շքնէք, կը նեղուի՛մ...: Պարոն Վաղարշ, դու ք ալ մի քաշուի՛ք, եկէ՛ք. ժամանակին շուտ-շուտ կ'անցնէիք մեզի...:

Վաղարշ Արշակունի կը ժպտէր ինքն իր մէջ եւ միայն գլխով ու միտքէն ըստ այն, զոր չէր ուզէր բարձրաձայն արտայայտել: Ինք, օրիորդ Մեխակեան եւ Բարսեղ Տակառագործեանը ելան դուրս:

—Այսպէս են, կը սիրեն ինքզինքնին կրկնել, ու ուսցիկ բաներէ կ'սխորժին: Մեղայեան կարգաց ձեր անունները ու կրկնեց շրջուած անձանօթ մը պիտի կարծէր, թէ Մեխակեան Լուսինը եւ Լուսին Մեխակեանը միեւնոյն անձը չէ՛. այնպէս եւ քու, Վաղարշ, եւ միւսներուն անունները: Յանձնախու մըդ քանի՞ անգամէ կը բաղկանայ շո՞րս, հի՞նգ, թէ ու թ կամ իննը, — Բարսեղն անցած էր Վաղարշին թեւը, մինչ Լուսինէն կը քալէր իր քովէն:

—Եթէ ճիշդը կ'ուզէ՞ք՝ մենք պիտի ըլլանք շորսուկէս հոգի: Գիրկեանը կէս գոյութիւն մըն է. Կորիզեան պատին տուաւ զայն: Մեղայեանին գէժքը հազար իժ կ'արտայայտէր. զարմանալի է, թէ ինչո՞ւ ան իր կիներ կը հրէ գէպի այդ Գիրկեանը...:

—Շատ ինչուներու գումարը բամբասանքն է, Լուսինեակ Զանա: Քաշենք, երթանք տեղ մը ժամանակ անցընենք. ի՞նչ բսխք, երթա՞նք:

—Երթանք, Արշակունի, երթանք, քանի որ օրիորդ Լուսինը շեղ ժառանգու հորը ինկած կը թուի:

—Ե՛ս, ոչ, պարոն Բարսեղ, ընդհակառակն, երկինքները կը սաւառնիմ, քանի որ զիս կը հրաւիրէք «Քա՛՛՛՛՛՛ Ծանթան»։ Հա, հա՛, հա՛, հա՛...:

Եւ օրիորդ Մեխակեանի գուարթ ծիծաղին հետ քայլ նետեցին երէքը: Երբ հասան մեծ պողոտային անկիւնը, բաժնուեցան: Լուսինէն եւ Վաղարշ կ'աճապարէին: Իրենց մայրերը, պառաւած երկու հայ կիներ, աքսորի եւ այրիութեան յաւիտենական սեւը պահած իրենց վրայ ու ներսը, տունը կը սպասուին, որ լաւ մը փեռեկտեն գիրենք՝ ու շ մնալուն եւ լաւ արամադրութեան համար:

—Աստուած հետերնիդ, ես այդպիսի պատուհատ գերծ եմ, սիրելիներս, շուտ հասէք, որ մեզ այրեն դժոխքի լաւայով ձեր պառաւները...:

—Տարտը քեզի, երբ շորքոտանի դառնաս, — նետեց կատակով Լուսինէն եւ Վաղարշին թեւէն քաշելով՝ քալեց, — ու շ մնացինք:

Ու չէին մնացած, բայց աճապարանք դրին իրենց սիրտերուն վրայ:

ՄԵՐ ԴԵՒԸ ԿԸ ՔՆԱՆԱՑ ՆԵՐՍԸ...

Ձանձն իմ Փառաւորեայի անունով հանգանակութեան ելած շորները ոտքով քալած պէտք է ըլլային երկա՛ր—երկա՛ր ճամբայ: Կէսօրուան մօտ էր: Յողներ էին: Ծամբան երկրայափական ուղիղ գիծ չէր ունեցած. զիկզակուող, անկիւնադարձ, ելլող—փչնող աստիճաններ, բակ, բացատ, տարազնուած, երեսի վրայ ձգուած տուներու արանքը մտած ծառուղի եւ արահետ — ահայն ճամբաները, զորս ոտքի տակ առած էին շորները, հանգանակութիւնը արգիւնաւորելու համար:

Հրանտ Կորիզեան նիւար, ցից հասակով էր, ոտքերը լայն—լայն նետող. երեսին վրայ միս չկար. մաշկով ծածկուած ոսկոր կը թուէր: Տիկին Անգինէն հասակով կրնար մրցիլ Կորիզեանին հետ. արածայր, բարձր կրուակով կօշիկները պատճառ եղած էին անդարձանելի յոգնութեան եւ ոտացաւի: Ան ստիպուած էր կռթնել յենակի մը եւ Հրանտ, ամուսնացած մարդու հանգամանքով՝

կը նկատուէր յարժարագոյնը, թեւը տալով տիկինին: Եւ տիկին Մեղայեան կարճիկ ճիւղեր արձակելով, վայելչօրէն նազանի՝ սիրով կը փարէր ժարդ—յե—նակին: Թուխերը կրակոտ կ'ըլլան, Կորիզեան՝ կը նետէր Արշակունին կատակով: Կորիզեան կը զգար բոցը թիւին տակ: Անճարակ՝ կը դիմազարձէր Անգի—նէն, Հրանտին փոխարէն. «Ձմտնա՞ն թեւը աղկան, որ կը բռնկի ինձի պէս...»: Այսպէս՝ անոնք խնդալով, անուշ խայթոցով, մէկզմէկու տէր կանգ—նելով՝ քայլած էին ճամբան, մտած տունները, կլած թաղերէն:

Անգինէ—Հրանտ զոյգը կը քայլէր առջեւէն: Լուսինէն եւ Վաղարշը կը հետեւէին անոնց: Փողոցի մը մէջ Վաղարշ բարձրացաւ մայթը եւ հոնկէ նա—յեցաւ դիմացի չէնքին երկրորդ յարկի բաց պատուհանին: Աննիկը հոն էր. նախազգացուցով այնտեղ էր դուշտ: Ժպտեցան իրարու: Լուսինէն առաջ ան—ցած էր. ետեւ նայեցաւ.

— Քալէ՛, Վաղարշ. երազներուդ գիցուհին, աւա՛ղ, բանտուած է գղեակին մէջ, օտար բռնաախրովը կողմէ. ի գու՛ր արեւահար կ'ըլլաս մայթին կառչած: Անապարէ՛, հասնինք մեր Տոն Ժուլանին, որ գրկած կը տանի թուխ իշխանուհին...

— Լուսինէ՛, զրանցէ տարը թուղթ Աննիկ Թովմասեանին անունին:

— Ի՞նչ թելադրեց:

— Ո՛չ, բայց դուն զրանցէ, հաշիւը եւ կը փակեմ:

— Կը զրանցեմ, եղբայրս, կը զրանցեմ. միայն չեմ ըմբռներ, թէ ի՞նչ է շահդ անշահ զոհողութենէդ...

Կրկին միացած՝ կը քայլէին, եւ օրինորդ Մեխակեան բռնուեցաւ իր գուռաթախտուածութեան մոլուցքէն, երբ նշմարեց Հրանտին գինով քայլուածքը: Անգինէն յանձնած էր իր ծանրութիւնը անոր եւ փոքրիկ հեւքերը ցոյց կու տային սոսայգու սրտիթիւնը

— Օհօ՛, շքսէ՛ք, թէ քալալիւի պէս պտոյտի ելած զոյգ էք. կը նախան—ձիւմ տիկին Անգիւնին: Հա, հա՛, հա՛...: Բայց, ես ձեր բուրդը քամուն պիտի տամ. մեր Արշակունին վազցնել կու տամ Արեւիկին եւ պարոն Մեղայեանին լուրը եւ կը տանիմ. այսպէսով, գտած կ'ըլլանք մեր բախտը. հա, հա՛, հա՛...: Վաղարշ, սիրելիս, Կորիզեանի պէ՞ս այլ չկա. թեւդ տուր ինձի. Հրանտը կին ունի, բայց դուն երբեւիցէ կ'ընկի տէր գառնա՞ն պիտի. հա, հա՛...:

— Ազը՛, բերանդ բռնէ, թէ չէ եւ գիտեմ, թէ ի՞նչ տեսակ օճառ կը քսեմ այդ լայն երեսիդ: Քա՛, աճցիր, ի՞նչ կը ծղծղաս փողոց ելած հաւի պէս:

— Ի՞նչ անհոգ մնացիր, տիկին Անգինէ՛, Կորիզեան միաքին մէջ ու—նէր՝ Անգինէն, սակայն, տառափոխեց միտքինը: Ապա, դառնալով օրինորդ Մեխակեանին, կատակեց, — Լուսինէ՛ չելլեմ իմանամ, որ մեր Արեւիկին ական—ջը հասցուցեր եւ իմ եւ Անգինէն հովուերգութիւնը, որ հովուերգութիւն չէ, այլ՝ տաժանակիր զբաստութիւն...

Չորսը մէկ խնդացին. փողոցին մէջ պատահական անցորդներ զարմա—ցան, թէ ինչո՞ւ մեր զոյգերը խենթի հոհոցով կը լեցնէին նեղ անցքը, որուն վրայ խեղճ ու կրակ տուններ միայն կ'անգնած էին...

Հանգանակիչ շորք այժմ հասած էր անկիւնագարձ ճամբայ մը. հոս, օրինորդ Մեխակեան յիշեց Թորայեան Պայծառը, նախկին աշակերտուհին, որ այժմ կը կրէր Ռամիկեան անունը: Տիկին Անգինէ կարդա՞ց բնկերուհին միաքը.

— Քիչ հեռուն, հոն, այդ գղեականման երկյարկանի չէնքը կը տեսնէ՞ք, մայրիկի ծառի կան շուրջը. հոն են Ռամիկեանները:

Օրինորդ Մեխակեան պէտք չունէր տեղական ծանօթութեան: Անգամ մը անցած էր Պայծառ տեսնելու եւ, իր շար բախտէն՝ հանդիպած էր ասոր—

քաւոր մարդու մը՝ Թիւտր Թամիկեանին: «Դու՞ք էք Պայծառին ամուսին-
ներ», - հարցուցած էր հիւսիսափուտ: Հարցումին շեշտէն առնուեր էր Թամիկե-
ան. «Ե՛նչ կ'ուզէք, որ ըլլայի՝ կաթնակե՞ր մը. հեռացէք, Թորայեանի աղջիկը
հիւր շ'ընդունիր եւ արդէն տունը չէ՞», - վռնտեր էր զինք: Հիմա, Մեխակեան
կը խորհէր տանիլ ընկերները հոն, ու փորձել ձայնը անոր մէջ, մարդը ճանչնալէ
ետք:

— Քալեցէջ հանդիպինք. քաղաքիս ամենահարուստ հայերէն է պարոն
Թիւտր Թամիկեանը: Կորսուած անուն է. Եղեռնի կնիքը վրան՝ կորսուած
հայութիւն. սակայն, հայ անմեղ աղանի մը աւած է ճանկերուն մէջ: Տեսնե-
լու երթանք խեղճ աղանիս...

Տիկին Անգինէ ճիշտ արձակեց եւ, հանելով կօշիկը՝ կատչեցաւ Կորիզեա-
նին.

— Հոգիս բերանս եկաւ. զիս այդ շուքին մէջ թողէք եւ երեքդ գացէք
դժոխք: Կտոր մը շուք՝ այս այրող արեւին տակ, եւ քոր մը՝ նստելու համար,
կ'արժեն ամբողջ դրախտ մը:

Պատրուա՞ն էր առարկութիւնը, թէ յոգնածութիւնը եւ ոսպաչաւ տի-
կին Մեղայեանին թելադրեցին մերժել Թամիկեաններուն հանդիպիլ. յայտնի
չէր: Օրիորդ Մեխակեան զգուեց.

— Անկարելի է, որ քեզ հոս ձգենք. քեզ գրկած կը տանին Հրահոն ու
Վաղարշը, կը բարձրացնեն քառասուն աստիճաններ եւ դուն զբեզ կը գտնես
դրախտին դրան առջեւ. բախտ է, եթէ զեւր չեյլէ դիմացդ: Կը խորհիմ. թէ մեր
երկու քովակէնները սիրով կը կրեն քեզի պէս թանկագին բեռ մը: Ես կը
հակեմ, որպէսզի անպատշաճութիւններ չպատահին. մարդ են, վերջապէս, մե-
լերին սաստանայ նստած կ'ըլլայ, - եւ օրիորդ Մեխակեան փոնց իր վարակիչ
քահ-քահը ամայի կտոր մը հողի վրայ, զոր իր զուարթախոհութեան կայուածը
նկատեց:

— Ո՛չ, ո՛չ. դայթակցութիւն չեմ ուզեր. թոյլ—բերան աղջիկ ես...: Վա-
ղը, քաղաքին մէջ կ'իմանան առեւանգուիլս երկու անձանքներու կողմէ.
դէ՛, եկո՛ւր եւ գտիր ԻՅՍՐԵՒ եւ ՅԻՅՍՐԸՐՈՒ—ըսաւ ներուն: Ես մնացի. դուք ազատ
էք:

Այս ըսելով, մէկ ոտքի վրայ ցատկոտելով, տիկին Անգինէն հասաւ
աղիւսաքարի մը, շուքին տակ պատին եւ նստեցաւ մնաց:

— Օ՛ի, շուքն առի. հոգիս կլաւ, քա՛...

Կորիզեան եւ Արշակունի անճրկեցան. կնամեծարութիւնը եւ հողը այս
անգամ չազդեցին Անգինէի ջիղերուն: Ան կը թուէր անդրդուելի: Ի վերջոյ,
երեքը թողուցին զինք քարին վրայ եւ ղեղեւոտն քայլեցին:

Թամիկեաններուն դուռը զարկաւ օրիորդ Մեխակեան: Երեքը մէկ
ցցուած էին դրան առջեւ: Եղաւ երկար սպասում. իր բախտը պիտի փորձէր
Կորիզեան, երբ իր ցցուն ականջին հասաւ տիկին Անգինէին անիծող ձայնը՝
աստիճանները շինողին նետուած.

— Քա՛, առանձին մնայն այ քաշուելիք բան չէ. վախցա՛յ. տեսար սրի-
կային մէկը յարձակեցաւ վրադ... ամայի ծակ ու ծուկ շատ կան, վախցայ...

Վախցային դիմաց, կարծէք, բացուեցաւ Թամիկեաններուն ծանր դուռ-
ուր, որ ներս առնէր վախցողը: Բայց, դրան մէջ կանգնեցաւ Պայծառ Թամիկե-
անը, դրախտի մէկ հրեշտակին պէս սպիտակ շորով, մաայլաղէմ, ըմբոստ:
Դէ՛մը կը տեսնէր չորս ծանօթ դէ՛մքեր, հօրենական տունէն ճանչցուած՝ բարե-
կամներ: Զիրենք չէր տեսած հօրը տունը ձգելէն ասդին: Ինչո՞ւ էին եկած
այժմ իրեն: Կանգնած էր աժդոյն, քնատի երեւոյթով, թարթիչներուն կախ-
ւած գնդուող արցունքի շողեր: Պայծառ պոստեց յունքերը.

— Ի՞նչ կ'ուզէք, երբ պէտք էր գայի՞ք՝ չեկաք: Հիմա ինչո՞ւ եկած էք մի՞շտ Ժանրացնելու...: Գացէ՛ք, Հեռացէ՛ք:

Աւշեցան չորսը անակնկալ ընդունելու թեան այդ մեկն: Թորայեանի աղջկան նայուածքը օտար եւ անորոշ խաղ կ'ընէր գիմոցի դեմքերուն շուրջ: Կորիզեան ունեցաւ սկզբունքային իր խոհերը: Տիկին Անգինէ խոցուած կը դատէր ինքնասիրութիւնը, սակայն ունէր զարմանքէն գեղեցկացած ժպիտ մը այտին: Օրիորդ Մեխակեան, միմակը՝ կ'աւազէր ուսուցչական ասպարէզին մէջ շահուած Պայծառին ասկերախտութիւնը: Մինչ Վաղարշ Արշակունի իրապէս կը ցաւակցէր Պայծառի վիշտ — դառնութեան: Գանձի՞ տարի էր թաած անոր մանկութեան վրայէն: Վաղարշ երիտասարդ էր, երբ կ'առնէր փոքրիկ Պայծառը իր Ժուկին վրայ: Կը լեցնէր զբազանիկները ծամոն, նուշ, պղնձպղնձ, շաքար, աղնձուաց կուտ...: Ե՛րբ էր մեծցած Պայծառ, այնքան մեծցած, որ ծնողքը դինք տուին Թամիկեանի պէս մարդու մը, երբ ան կէս ամուսնական կեանք մը կ'անցընէր իր աղակնով Հեռ...: Վաղարշին այչէրը կը թափօնէին տեսնելով իր փայփայած աղջնակը, կնոջ մը վիճակով, կանգնած զբան մէջը: Խօսք—Փայլէն առաջ, Պայծառ փնտռած էր զինք, միակ փրկարար յոյս տեսնելով անոր մէջ: Ինք Հեռու էր քաղաքէն: Սիրուն Ջանջանեան յուսարեկած էր աղջիկը: Պայծառ յանձնուած էր իրեն պարտադրուած ճակատագրին եւ կը տառապէր ահա...

— Ըսակէ կ'անցնէինք, տիկին Պայծառ: յիշեցինք թե՞՞ 'հինին մէջ եղածիդ պէս, ու եկած ենք տեսութեան: Մի՞թէ յանցանք է 'հինը վերջիչելը...— Վաղարշ ըսաւ այս խօսքերը յուզումով եւ ակամայ ձեռքը տարաւ Ժանջանի եւ ամչցաւ ինքնիրմէ, Պայծառ փոքրիկ աղջիկ մը չէր այլեւս՝ խորհելով:

— Մէկը չեմ ուզեր, որ կարօտնայ ինձի: կ'ասե՛մ թողորդ: գացէ՛ք, — ու՛զեց ես տայ զուռը չորսին երեսին, սակայն, օրիորդ Մեխակեանին ոտքը դրուած էր սեմին, արզիլից փակոցը դրան:

— Գա՛, Պայծառ: ա՛յս է իմ տուած դատարարական Հետեանքը: Դուն ինչպէ՛ս կ'ընես զուռը երեսիս տալ: ո՛ւր են մնացիք սիրտ Հասցնումնեքս, գուրդու բանքներս, զորս կը թափէի վրադ...: Անցիք մէկ կողմ, Հոգիներս բերաններս եկաւ, թէ ինչ է՝ Հօրդ պատիւը բարձր պահենք, Ժառայելով իր Հիմնադրած Ջանձն իմ Փառաւորնային:

Պայծառին մէջ կուտակուած դառնութիւնը կը թուէր աւելի զօրաւոր, քան զգուիչ մեղադրանքները Հուսինին: Իր նայուածքը կրկին ինկաւ Վաղարշին վրայ: Արշակունիին այչէրը յուզուած էին: Զոջա՞ց, որ կը վերաւորէր սիրած մարդուն արժանապատուութիւնը: Երբ պոսակուեցաւ, Վաղարշ ներկայ չեղաւ պատկին: Ամիսներ յետոյ, երեկոյթի մը մէջ, մայրը՝ տիկին Սաթենիկ, բռնեց օձիքէն: Ե՛րնչ կարծեցիք, պարօն Արշակունի, թէ ձեր բացակայութեամբ կը խափանուէ՞ր Պայծառիս պատկը: Վաղարշ պատասխանած էր քեմծծաղով: Ե՛րնչպէ՛ս մայր մը կ'ընայ թեթեւալիկ խօսքեր ընել, տիկին Թորայեան, մեղքեցէ՛ք ձեր աղջկան, զոր նետեր էք գայլին բերանը: Թաղւորը անպատի մէջ ընկերս եղած է: քայց, ուրախ եմ, որ զադրած եմ զինք մարդ ընդունելէ...»:

«— Ետեանքն է, որ այդպէս կ'արտայայտուիք: Ինքը վերերն է, զուք մնացեր էք վարերը, Հի, Հի, Հի...»

«— Ըհոուն տեսնուած ամպերուն վրայ յոյսը դնողը, տիկին Թորայեան, երաշտ հողին կու տայ, կը ջարդէ վիզը...: Ափսո՛ս եղաւ Պայծառին»:

Օրիորդ Մեխակեան սպասնայ՝ կատակելով:

— Եթէ մերժես մեզ ներս ընդունել, չեմ անիծեր: անէ՛քս չի բռներ, քանի որ մաքուր սիրտ ունիմ: քայց կը ստիպեմ ընկերներուս, իրենց անկողինները փոխադրել Հոս, դրանդ առջեւ:

— Զայա՛, Հայա՛, կը փոխադրուիք Հո՛ս, կորսնցնելիք բան մը չենք

ուսնենար. երկու կին եւ երկու այր մարդ՝ ետա կ'երթացուի: Միակ անպատեհ-
հուծիւնը հոն է, որ մեր Արեւիկն ալ կ'առնէ իր անկողինը կու գայ. տեսնելու
է, թէ ի՞նչ մազ փետտակ կ'ըլլայ իր եւ աիկին Անգինէին միջեւ. անշուշտ մեր
օրիորդին բուրդը զգզգելէ ետք:

Օրիորդ Մեխակեանի ծիծաղը վարակիչ էր. Կորիզեան կը խօսէր պաղ—
պաղ, անժպիտ եւ ատիկա ազգեց աիկին Պայծառին ջիղերուն վրայ. մինչեւ
իսկ անձրևի տակ մնացած ծաղիկի փալփիւան ժպիտը անցաւ գէժքէն: Քաշեց
ան Լուսինէի թեւէն.

— Դու ն մինակ ներս եկուր, ըսելիք ունիմ.— լորձունքի տեղ արցունք
կլլեց Պայծառ.— զեւր քնացած է. կասկածոտ մարդուն ջուրը ծանր չ'ըլլար,
զիտես: Ձեզ ներս առնել չեմ կրնար. կ'եյլէ, կը վոնտէ բուրդը: Դրամի համար
եկած էք, գիտեմ. Ջատիկ է. ինձի ո՛չ Ջատիկ կայ, ո՛չ Կիրակի...: Պատուիրած
է էք ընկ ազգին ճանճերը, իր խօսքերն են: Անպատե՛հ էր չըրի եւ ես գիտեմ
քաշածներս, սիրելի Լուսին. ինչո՞ւ մարդս այսքան ստորնացած է սուկին առ-
ջեւ. ըտ՛, Լուսինէ, ինչո՞ւ...:

Օրիորդ մեխակեանի հարուստ կուրծքը ելեւէջեց, յուզուեցաւ: Մոռցաւ
պահ մը զուարթամտութիւնը, սրբեց արցնքամուխ աչքերը եւ փարեցաւ Պայ-
ծառին: Իրեն թուեցաւ, թէ կը լսէր փոքր քոյրը անպատուած ըլլալու դառն
խոստովանութիւնը:

— Աստուած օգնէ քեզի, սիրելի Պայծառ. պատճառ եղողները ծնողքդ
են: Ժամանակին Վաղարշ ըսած է մօրդ...:

— Գիտեմ, ըսին ինձի. ի սէր իրեն, սպասէ. ես նայիմ ներսը, թէ ի՞նչ
կրնամ ընել:

Կորիզեան սուր ջիթ ունէր, երեսը պնդեց.

— Բաւ չ'է փսփոսալը, մեռանք ոտքի վրայ մնալով: Տիկին Պայծառ, ար-
դեօք կարելի չէ՞ քիչիկ մը բերան քաղցրացնել Ջանձն իմիս: Ես լուծայափոխ
եմ եւ յատուկ սէր կը տածեմ տիար Ռոմիկեանի ղեղին ոսկիներուն հանդէպ:
Սա ալ ըսեմ, թէ ես դանձապահ չեմ. հոտր ես պիտի առնեմ, փայլը կ'երթայ կը
կորսուի մեր Արշակունիին խոր զրպանին մէջ...:

— Ձրսե՛ս մէկ անգամէն, թէ ազգին համար զրաստութիւն է ըրածը.—
Կորիզեանին խօսքը չըջափոխելով՝ կատակի զարկաւ Վաղարշ...:

— Վայրկեան մը,— ըսաւ Պայծառ եւ, խուսափելու պէս՝ ներս գնաց:

Դուռը բուրբոսին չփակեց. յոյսի երկ մը թողելով ետին՝ գնաց:

Միջանցքին մէջ քայլը արագ, սրահին մէջ՝ Պայծառ մէկէն կանգ առաւ,
անձրեկեցաւ: Ինչպէ՞ս ընէր, որ ամօթով չ'մնար: Անձնական խնայողութիւն չ'էր
ըրած. տունին պէտքերը կը հողար մարդը, որ սանթրիմով կը ծախսէր: Հօրե-
նական ժառանգութիւնը անգոյ յոյսի պէս էր: Եւ մարդիկ դուրսը կը սպա-
սէին՝ իր ձեռքին նայելու համար միայն: Եւստուած իմ, ո՞ր մէկ մեղքիս հա-
մար յանձնեցիր զիս հրէշին, որ ծարաւ ձգեց մէջս բոլոր իղձերս. ինչպէ՞ս քըշ
ըսեմ այն մարդուն, երազներուս իշխանին, երբ ետքէն ամօթէս պիտի ճաթիմ
ու ողջ—ողջ թաղուիմ գետնին տակը...: Դեւը կը մրափէր ներսը. իր խըռկոց-
Փըշոցները կը հասնէին իրեն, կը բզկտէին իր միտքերը: Պայծառ բռնեցեց
ձեռքերը, ապա քակեց զանոնք ու խրեց մատները ծամերուն մէջ: Հիմա կր յի-
չէր ամուսինին տուած խոշտանգումները, կը պատկերացնէր անոր յիշոցները,
եօթը պորտին հասցուցած վիրաւորանքը...: Ձիտղղե՛մ գինք. քնացած է, բար-
ձը ջիթ — բերանին, իչնամ վրան՝ խեղդեմ, ազատեմ իմ ցաւերէս: Ես յանկարծ
Պայծառին խոհերը զարձան վտանգաւոր, նետուեցաւ դէպի ոճիր: Ամուսինին
անկողինին մօտ մարմինը թուլկամացաւ. դուրսը սպասողներ կային, ակամայ
վկաներ պիտի դառնային. յանցանքի վրայ կը բռնուէր...: Մէկէն հանդար-
տեցնող ջերմութեամբ ողողուեցաւ, կեռէն կախուած մարդուն վերարկուն
յոյսի ներշնչում տուաւ իրեն: Յարձակեցաւ անոր վրայ, աղիքաթափ ըրաւ բո-

լոր գրպանները: ժուրայկանի ջուրջի նմանեցաւ այդպէս իրեն: Անյուշու-
թի՛ւն...: Այնուհետեւ Պայծառ եղաւ վազու ըզուք: գարակներ, գգրոց, կապոց,
ճամբորդական պայուսակ, ծրար տակն ու վրայ դարձան: Ի զո՛ւր ոչինչ կար:
Բարկութենէն պիտի լար, երբ յիմարանար պիտի, յիշեց մեծ Հայելիին ետեւ
պահած կծիկը: Տիկին Ազմարիին նուէրը կար մուցուած հոն:

Քիչ նաք, երբ կ'ներթար զէպի դուրսի դուռը, Պայծառ կը զգար մեծ
աղէտէ փրկուած մարդու անբաւ կրանութիւնը: Շտկրտեց խառնակ մազերը,
աչքերուն խոնարւը սրբեց, յետոյ՝ երես ցու շորսին, որ անհամբեր իրեն կը սպա-
սէր:

—Առէ՛ք, իմ առաջին եւ վերջին լուծան է,— եւ Պայծառ երկարեց յի-
սուանոց թղթազրամը՝ Վաղարշին, որ հին ժամանակներու պէս ժպտեցաւ
իրեն...

Օրինորդ Մեխակեան զրկեց զբան մէջ նկարի պէս կանգնած Պայծառը,
պագաւ թուշը:

—Ես իմ ենթադրութիւններուս մէջ չէի սխալած, սիրելիս, շնորհակա-
լու թիւնք ուրիշիս կողմէ...

Բացաւ գիրկը եւ տիկին Անգինէն եղաւ առաջինը Պայծառին ձեռքը
թաթոզներէն: Ուղեբէն կը տառապէր: մանրիկ նկիւր արժանկեղով, իջաւ առա-
ջին աստիճանը: Կորիզեան տուաւ Արեւիկէն բարեւը եւ անմիջապէս հետեւե-
ցաւ անոր: Լուսինէն թողուց, որ Վաղարշին ձեռքը յամենար Պայծառին սփին
վրայ:

—Ինծի համար, զուս կը մնաս, Պայծառ, հինին պէս, երբ...

—Հիւրը մեռաւ— զնայ. նորին տուէք այն որ կ'ուզէք տալ,— եւ Պայծա-
ռին աչքերը խաղ եկան Արշակունիին դէմքին վրայ...

Վաղարշ չկրցաւ ըսել մնաք բարով կամ ցտեսութիւն տիկին Ռամիկեան-
նին: Աստիճաններուն վրայ ան ապրեցաւ այն տարիները, երբ Պայծառ հազու
ու թ տարեկան կար: Ինք այն ժամանակ իր քսանմէկին մէջն էր: Ի՛նչ շուտ մեծ-
ցած էր Պայծառ, որ ինք չէր նշմարած զայն:

Օրինորդ Մեխակեան աւաղելով թողուց Պայծառը զբան մէջ:

—Այո, քոյրս, աշխարհիս վրայ երկու տեսակ դժբախտ կիներ կան: մէկը
ան է, որ զէջ տեղ կ'իյնայ եւ քիչ — քիչ կը սպասի: Եւ միւսը տն, որ տեղ ժը
իյնայու բնաւ յոյս չունի: Դուս եւ ես այդ տեսակ կիներու կարգին կը դաս-
տիմք:

Տիկին Ռամիկեան բրաւ յանկարծ անզաղտնապահ հարցում մը:

—Կ'ապրի՞ գեա տիկին Արշակունիս, մայրը...

Լուսինէն կատակի տուաւ, իր տարերքին մէջ մտնելով:

—Նա, քոյրս, կ'ապրի գեա, մեռնելիք չունի, կը տեսնէ, որ կամաց-կամաց
տղուս մէջ մեռցնէ գերազոյն երազը... շորքուտանի դատնայու մարդկային
բնական իղձը: Յատուութիւն, սիրելիս,— եւ մէկէն իննդաց: Իր քահ-քահ
բարեց աստիճանները, որուն ներքեւէն կը լսուէր տիկին Մեղայեանին
անուշ-խալթ կանչը:

—Հերիք կուկուս, իջիր շուտ, մեռայ ոտքիս ցաւէն...

Հակառակ աստիճանները ողողող ծիծաղին, յայտնի էր, թէ ինչու զբան
մէջ յամենող կնոջ եւ վար իջնող աղջկան մէջ կը բարձրանար մէկէն ամպտած
եղանակի մուսյլ թախիծը...

Չորսը նորէն կը քայլէին փողոցն ի վեր: Կը քայլէին մէկ շարքի վրայ: Ար-
շակունիս ունէր Անգինէն եւ Լուսինէն իր քովերէն, Կորիզեանը յենած էր Ան-
գինէնին, լսելու համար անապատային պատմութիւնը, որուն հերոսներէն մէկը
Ռամիկեան թագուորն էր:

—Միտսին էինք Չամգամէն փրկուած պատանիներս,— կը պատմէր
Վաղարշ:
ՍՄՄԱՍ ՓԱՆՈՍԵԱՆ
(Շար. 1)

ՀԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԱՐԱՀԵՏՈՎ

Դուն՝
մտքիս խճողուած սենեակէն
զիս դուրս կանչող զեփիւռն ես:

Տերեւները՝ երաժշտական
յօրինումներդ կը սփռեն
եւ ես կը հետեւիմ քեզի,
կը խառնուիմ տերեւներու շարժումին
(թերեւս գտնելու
անգործութեան զազտնի նամբան):

Բայց երբ երկինքը կը նկատէ զիս,
երաժշտութեան ռիթմը կը փոխէ
ու ազմկող տերեւները, թռչոթերը գունատ,
նամբաներու փռչիւն հետ
հսկայ զօրքով կը յարձակին իմ վրաս:

Կը վերադառնամ
խճողուած սենեակը մտքի
(բայց այս մէկը պարտութիւն չէ),
անկողինին վրայ կը նստիմ
երազներով կիսկատար
եւ կը սպասեմ հրաշքին,
որ արշալոյսին կը պատահի յաճախ—

Ջեփիւռին մէջ լողացող
մանիշակագոյն—կանաչ շշուկներ կ'երգեն՝
նախկին բանաստեղծներուն,
անցեալի աշուղներուն
եւ երբեմնի սիրահարներուն
երգերը հիմ, մռցուած...

Կմկմալով նախ՝ ես ալ, կը սկսիմ
հին երգ մը երգել,
նոր երգ մը երգել,
որ հետզհետէ կը յստականայ...

ԱՐԱՄ ՃԻՒՂԵԱՆ

Պ. ՄՆԱՊԵԱՆ

ՄԻՋՆԱՐԱՐ – 5

...Երբ մեր աչքերը կրկին հանդիպեցան իրարու,
Միջայլիի համար կարծես Ատոմը աւելի շահեկան դարձաւ:
Մանրամասնութիւններ ուզեց անոր մասին: Տուի: Թուեց
իր տպաւորութիւնները յետոյ եւ հարցումներ ուղղեց.

— Երկա՞ր ատեն է, որ բարեկամ էք իրարու:

— Նոր ճանչցայ զինք:

— Ի՞նչ դարձով կը գրադի:

— Հիմա ոչ մէկ:

— Առա՞ջ:

— Ուսուցիչ էր: Տեսակետներու տարբերութեան մը
պատճառով տարեվերջին արձակեր եւ պաշտօնէն:

— Հասկնալի է,— բաւ Միջայլի քմծիծաղ մը դէմ-
քին եւ մտքին մէջ բան մը փնտռողի երեւոյթով սեւեռեց
աչքերը հեռուն:

Ձայնասփիւռը դասական եղանակի մը մեղմահունչ
քաղցրութեամբ ողողած էր միջոցը ու ճաշարանին յաճա-
խորդները նոյն կշռոյթով կը խօսէին իրարու հետ:

Տարբեր խմիչքի մը առաջարկը ըրի:

Ուզեց իմանայ տրամադրութիւնս:

Համաձայնեցանք շարունակել ուխտին:

— Պարոն Ատոմը,— սկսաւ Միջայլի,— լաւ հետեւած
է Հայրենի իրադարձութիւններուն, բայց մտքով միայն:
Եթէ մորթը եւս մասնակցած ըլլար ծանօթութիւններու
կուտակման, հաւանաբար աւելի հասկացողութիւն ցու-
ցարերէք իմ վերջերուս նկատմամբ:

— Կը ցաւիմ,— ըսի,— շատ կը ցաւիմ, որ խօսակցու-
թիւնը վէճի բնոյթ ստացաւ:

— Ոչինչ,— յարեց,— ոչինչ, մեզ դատապարտողները
շատ են հիմա, դասեր տուողներն ալ շատ են, վերք մը ա-
ւելի՛ վերք մը պակաս, նոյնն է, ոչինչ: Յաւալին այն է
միայն, որ ուրիշներու պէս ինք եւս չուզեց լրիւ ըմբռնել
իմ եւ բիւր բիւրաւորներու պատմութիւնը:

— Դե՞ռ ինչ պիտի ըմբռնէր,— ըսի վրդոված:

— Նկատեցիք հարկաւ, որ զիս հանդարտօրէն ունկնդրելէ աւելի՜ Ատոմ տրամադրուած էր իր տեսակէսն երբ պարզել: Իսկ ես գիտեմ, որ նման հոգեվիճակներ մատնող անձերը ի միջի այլոց միայն կարեւորութիւն կ'ընծայեն ուրիշներու տպաւորութիւններուն կամ մտածումներուն: Այդ պատճառով խուսափեցայ պարզել իմ ապրած ողբերգութեան ծալքերը, որոնց պատմութիւնը քանի մը ժամէն սպառող պատմութիւններէն տարբեր է եւ շատ տարբեր:

Հասաւ ու նկարագրեց երկրորդ շրջանը:

Ձերբակալուած էր 49ին, Ուրբաթ գիշեր մը ու նետուած քառասուն հոգի հաշուող բանտային ներքնայարկ մը, ուր մնացած էր երեք ամիս, որուն վախճանին՝ միայն քառորդ ժամ տեւած դատավարութեամբ՝ գատապարտուած էր տաժանակիր աշխատանքի՝ տասը տարուան ժամկէտով: Օր մը ետք, դարձեալ ուշ գիշերին, ուրիշ բախտակիցներու հետ՝ նեաած էին զինք ապրանքատար շոգեկառքի մը մէջ, ուր օրեր եւ օրեր շարչարուելէ ետք, վար առնուած էին ձիւնապատ անտառի մը մօտ: Հող հազիւ շունչ առած՝ տարտղնած էին բոլորը: Քանի մը քայլ անդին խառնած էին զինք խուճր մը գունաթափ ու յոգնասպառ մարդոց, բոլորն այ անձանօթ, որոնց հետ, այս անգամ զինեալ պահակներու եւ պահակ շուներու ուղեկցութեամբ՝ կտրած էր տասը ժամուան ճամբայ ու թխմուած փշաթելերով շրջանակուած ջամբարի մը մէջ, ուր եւ սկսած էր վեց ժամ հետիտն երթելու ելով եւ ինը ժամ տաժանակիր աշխատանքով յաղեցած ջամբարային իր առօրեան, միշտ պահակներու եւ պահակ շուներու ուղեկցութեամբ, հացի տեղ ցեխանման սեւ խմոր մը ծամելով, թէյի տեղ խաշած ջուր կուլ տալով եւ կուլ տալով անվերջանայի ու թունաւոր նախատիքներ, անլուր յիշոցներ՝ պետերէն, հակիչներէն, քննիչներէն, հաշուողներէն, ճաշ բաժնողներէն, հիւանդապահներէն, ամէնքէն: Այսպէս ապրած էր ան, տաժանակրութեան բուն պատճառը անծանօթ, տաժանավայրը անծանօթ, վրան իշխողը անծանօթ, յաջորդ օրուան գործին տեսակը անծանօթ, ամէնքը եւ ամէն ինչ անծանօթ, տարիներ ամբողջ:

— Պարոն Ատոմը,— ըսաւ Միքայէլ քիչ մը աւելի բարձրաձայն,— հրամանով երբեւիցէ քնացած է արդեօք, հրամանով արթնցած է, հրամանով սեւ հաց ծամած է բնաւ, հաշուուած է օրը երեք անգամ, հարցաքննութեան սպառնալիքին տակ գտնուած է ամէն վայրկեան, ճապուկ մտրակներու տակ հալումաչ եղած է երբեք, որ իրաւունք

կու տայ ինքն իրեն խէթ աչքով նայիլ մեզի:

— Ես այդ տպաւորութիւնը չառի, — ըսի մեղմ:

— Այ, յստակ էր իր վերաբերումը, եւ դեռ ինք առաջինը չէր, վերջինն էր: Իրմէ առաջ քանինե՛ր նոյն եղանակով վարուեցան հետս: Եւ ի՞նչ դիւրութեամբ: Թուազըրւած չեն ու կը խօսին, հաշուրւած չեն ու կը բարբառին, կտոր մը հացի համար ժամերով սառած գետնին վրայ շարքի կեցած չեն ու կը փիլիսոփային:

Կարճ շունչ մը առաւ եւ շարունակեց սիպերիական իր կենսագրութիւնը, բայց այս անգամ աւելի ցաւազին շեշտերով, մա՛նաւանդ՝ երբ անդրադարձաւ իրեն եւ իրեն բախտակից կալանաւորներուն շնորհուած նամակագրական թոյլատուութեան:

Ամիսներ ետք կը հասնին սմանց պատասխանները, սմանց ծանրոցներ ալ կը հասնին, իրեն եւ քանի մը ուրիշ դժբախտներու թուղթերուն՝ ոչ մէկ արձագանգ: Նոյն հարցով օր մը կը համարձակի ներկայանալ պետին, որ «Երեւի, — կ'ըսէ, — քու ծնողներդ հրաժարած են քեզմէ: Դե՛հ, ի հարկէ հրաժարած պէտք է ըլլան: Ո՞վ կ'ուզէ ամե՛րիկեան լրտեսին հայր ու մայր ըլլալ»:

— Ցուրտ այդ բեւեռին մէջ կարծես տաք ջուր մը թափեցաւ զլիսուս, — շարունակեց Միքայէլ, — քանի մը տարուան փորձառութիւնը արդէն բաւ եղած էր հաստատելու համար, որ այխարհի այդ մասին մէջ ամէն ինչ հնարաւոր է: Քիչ առաջ դուք լսեցիք հօրմէն հրաժարած ու մայրը ուրացած Անահիտին կակծալի պատմութիւնը: Կարգը ինձի հասնելէ առաջ, նման բաներ լսած էի, տեսած նոյնիսկ իրենց որդիներէն հրաժարած հայրեր ու մայրեր, ամուսինէն հրաժարած մարդիկ, սիրածէն, ուրիշ սիրելիներէ: Պատանիի մը համար կ'ըսէին, որ պահանջած է հայրենիքը անգլօ-ամերիկեան դորձակալութիւններուն վաճառած հօրը գնդակահարութիւնը, ուրիշ մը անձամբ ստուգած էր եղբօրը դաւաճանութիւնը եւ անձամբ յանձնած էր զայն սպահովութեան օրգաններուն, անձա՛մբ, ու երեւակայութեան մէջ շտեղաւորուող նման բազմաթիւ ու բազմազան դէպքերը: Հայրենիքը օտարներուն վաճառած եւ ժողովուրդներու բարեկամութեան դաւաճանած այդ մարդուն ու երիտասարդին պէս քանինե՛ր տեսայ Երեւանի բանտային նկուղներուն ու Սիպերիոյ ջամբարներուն մէջ: Մեր վերջին տաժանավայրին մէջ կային մարդեր, որոնք իրենց բովանդակ կեանքը հայրենիքին նուիրարեւելիէ ետք՝ իրրեւ հայրենազաւ դատապարտուած էին, ժողովուրդին համար հազար անգամ կրակի մէջ նետուածնե՛-

ըը՝ իբրև ժողովուրդի թշնամի, միայն մտաւորական աշխատանքներով զբաղած մարդիկ՝ իբրև ահաբեկիչ:

— Անկարելի է, — ըսի՝ գրեթէ պոռպոզով:

— Ինչպէ՛ս թէ անկարելի է: Կարելի է, ամէ՛ն բան կարելի է, զիս իբրև ամերիկեան լրտես աստանակրութեան դատապարտել ետք, այլեւս անկարելի ի՛նչ կը մնայ այդ աշխարհին մէջ:

— Առա՛նց ամբաստանութիւնը հաստատելու:

— Ո՛վ ըսաւ սակայն, որ չհաստատեցին ամբաստանութիւնը, — յարեց Միքայէլ աչքերը լայն բանալով, — Հաստատեցի՛ն, ինչպէ՛ս չէ, կրած շարչարանքներուս վերջին արարին խոստովանեցայ ի վերջոյ, որ ես, այնուամենայնիւ, ամերիկեան լրտես եմ եւ, կեղծ փետուրներով զարգարուած՝ մուտք գործած եմ Միութենէն ներս, որպէսզի ստացած առատ վարձատրութիւններուս փոխարէն կարենամ անարգել առաջ տանիլ մութ գործերս: Ինչպէ՛ս: Ես ճանչցուած լրտես էի այլեւս եւ հաւանական էր, որ ծնողներս հրաժարած էին իրենց լրտես զաւակէն... Մա՛յր:

Չկրցայ յուզուիս զսպել: Ելայ ոտքի եւ ուղղուեցայ դէպի պիւֆէ: Հետաքրքրուեցայ այս անգամ քոնեակներով: Սպասեակներուն պետը տուաւ Փրանսականին, պուլկարականին եւ կիպրականին անունները: Պատուիրեցի վերջինը: Տեղս վերադառնալու վայրկեանին զգացի, որ լայն շունչի մը պէտք ունիմ: Քայլերս ուղղեցի դէպի դուրս: Ծովային թեթեւ զեփուրով մը լեցուցի թոքերս եւ իրարանցում մը ձեւացնելով գրաւեցի աթոռս:

— Ինձի համար, — սկսայ նոյն իրարանցումով, — ամէնէն անբժրոնելի արդարացման պահուն ձեր մատնած կեցուածքը եղաւ:

— Անբժրոնելիներէն մէկը, — ճշգեց խիստ, — թերեւս չհաւատաք ինձի, երբ ըսեմ, որ գիշեր-ցերեկ եւ տարիներ ամբողջ այդ ցուրտ դժոխքէն ազատուելու ծարաւով տանջուելէ ետք, ես չհաւատացի արդարացուածներու ցանկին մէջ կարգացուած անունս յսոզ ականջիս: Նոր դաւ մըն էր կարծեցի: Նոր շփոթ մը կ'ուզեն ստեղծել, մտածեցի, նոր կարծիք մը կ'ուզեն յերիւրել իմ մասիս, կամ նոր գործ մը պիտի յանձնեն, աւելի ծանր, աւելի մեծ պատիժ մը, կամ պիտի դրկեն ուրիշ ջամբար մը, կամ պիտի զնդակահարեն քիչ անդին: Կասկածամտութեան այս տատասկները թող զարմանք չպատճառեն ձեզի: Վատառողջ այդ հոգերանութիւնը աւելի իրական էր մեր առօրեային մէջ, աւելի հաւանական, քան մարդկային վերաբերումներու հաւատք ընծայելու անարատ մազկայնութիւնը: Չեմ գիտեր: Իմ

արդարացման յայտարարութիւնը եւ դիմաւորեցի այնպէս՝ ինչպէս կը դիմաւորէի ցեխանման հացը, խաշած ջուրը, մեզ հաշուելու համար անժամանակ հնչող զանգակը կամ տեղէ տեղ փոխադրուելու նախապատրաստութեամբ մեր լսողութիւնը խլացնող սուլիչներուն ձայնը:

— Հասկնալի է այդ փորձառութիւնը, բայց այդ պայմաններուն մէջ ձեռք ձգուածը որեւէ բան չէ, պատուութիւն է ի վերջոյ, երազուած բան մը, որուն հանդէպ չեմ գիտեր...

— Մարդ ի՞նչ պիտի ընէ սակայն այն ազատութիւնը, որ յանկարծօրէն, բոլորովին չսպասուած պահու մը կը շնորհուի իրեն այնպէս՝ ինչպէս խլուած էր անիկա իրմէ, իրրեւ ի միջի այլոց տեղի ունեցած բան մը, սառնասրտութեամբ, թեթեւօրէն: Եւ յետոյ...

— Ինչո՞ւ չէք շարունակեր:

— Եւ յետոյ՝ կը վախնայի հօրս ու մօրս հանդիպելէ, ինձմէ հրաժարած հօրս ու մօրս:

— Ինչպէ՞ս տեղի ունեցաւ ձեր հանդիպումը:

— Տեղի չունեցաւ:

— Ինչո՞ւ:

— Ուրիշ գծրախտութեամբ մը: Անգամ մը ըսի կարծեմ: Իմ ետեւէս եւ իմ պատճառովս աքտորած էին նաեւ գիրենք, ու ա՛յլ չէին վերադարձած, ի՞մ պատճառովս, ինձի պէս գաւկի մը ծնունդ տուած ըլլալու մեղքով:

Հազ մը ընդհատեց խօսքը: Ու մայ մը քոնեակ առաւ: Նորէն հազաց: Այս անգամ ջուրով թրջեց բերանը: Կարմիրը քիչ մը քաշուեցաւ գէմքէն: Սրբեց աչքերը: Ծարունակեց աւելի դառնագին շեշտով:

— Ես չեմ գիտեր տակաւին, թէ ցրտաշունչ հեռուներուն անյայտ եւ անդամբան կորսուած մարդե՞րը աւելի գծրախտ եղան, թէ մենք, ուշացած արդարութեան մը շնորհով վերադարձած կիսաւեր մարդերս: Ինձմէ առաջ եւ ինձմէ աւելի շատ տուժած գծրախտներէն մէկը իր ինքնակենսագրութեան մէջ կ'ըսէր, թէ վերադարձին գտած է, որ մայրը մեռած է, կիներ ամուսնացած ուրիշի մը հետ, իսկ զաւակը իրրեւ հայր չի ճանչնար գինք: Մարդիկ գիւրին կը կարդան այս բաները, հենց այնպէս՝ ինչպէս պիտի ըսէր այս անգամ մեծատաղանդ գծրախտ մը, բայց նաեւ գիւրին կը գրուի՞ն արգեօք, գիւրին կ'ապրուի՞ն մանաւանդ: Պատճառածը հեքիաթ չէ, դառն իրականութիւն է, դժոխքը անհամար մարդոց, որոնցմէ մէկը եւ եղայ, կրկնակի գծրախտ մը, որ սառոյցներու աշխարհէն վերադարձին եւս չկրցաւ դարձանել վէրքերը, իր կորսուած

ծնողներուն ու ընդմիջտ կորսուած խաղաղութեան պատ-
ճառով, եւ մնաց անձնատուր՝ ինքզինք մինակ զգացող
մարդու մը լափիլզող մորմոքներուն:

— Ուրիշ հարազատներ չունէի՞ք:

— Ոչ:

— Ոչ ալ սիրած:

— Բարեբախտաբար:

— Ինչո՞ւ բարեբախտաբար:

— Որովհետեւ ան ալ զժրախտաբար պիտի ըլլար
ճիշդ ծնողներուս պէս:

Միքայէլի եւ իմ կեանքս նոյն ճամբաներէն չէք ըն-
թացած, բայց մինակութեան ապրումին մէջ ինքզինքս
կրնայի քիչ մը եղբայր համարել իրեն, մէկ տարբերու-
թեամբ, որ իմ վերքերուս մեծ մասը առած-տարած էր
ամենաբուժ ժամանակը, մինչ ինք կը շարունակէր ապրիլ
անսփոփ հոգիի մը տուայտանքը: Անշուշտ կ'ըմբռնէի իր
վիշտերէն ոմանք, բայց միտքս յամառօրէն կը մերժէր ար-
դարացման լուրը զիմաւորելու իր եղանակը: Վերաբժար-
ծեցի պարագան:

— Յանցագործներու պարագային՝ այո՛, — ըսաւ, —
ապացուցած յանցանքը քաւած մարդուն համար սրտի թե-
թելու թիւնը բնական վիճակ պիտի ըլլար, մինչդեռ սուտ
ամբաստանութեամբ տուժածներու պարագան նոյնը
չէ: Յանցապարտը գիտէ, որ պատիժ մը կայ, բայց ես ո՞ր
յանցանքիս համար պատժուեցայ, որ արդարացման օրը,
վաղորդայնին, յաջորդող շաբաթներուն կամ տարիներուն
խաղաղութեամբ նայէի ծագող արեւին: Կրկնութեան վա-
խը տեղաւորուած էր հոգիիս ու անոր ուղազակներուն
տակ մութ կը թուէր ինծի ամէն մարդ ու ամէն ինչ:

— Այդքան երկա՞ր տեսց հին վերքերուն ազդե-
ցութիւնը:

— Երանի՛ թէ հին վերքերով վերջանար ամէն բան:
Ես նոր վերքեր ալ կրեցի: Ուրուագրեմ մէկը: Երկրորդ ան-
գամ Հայաստան ոտք դնելէս քիչ ժամանակ անց, Միու-
թեան տնտեսական զարգացման մասին գեկուցում մը լսե-
լու համար լուր տուած էին նաեւ ինծի: Ուրեմն, մտածեցի,
սկսած են մարդ հաշուել գիս: Գացի: Ձեկուցման աւար-
տին՝ սկսաւ հարցումներու բաժինը: Հարցում մըն ալ ես
ըրի. « Ելեկտրականութիւնը ի՞նչ տոկոսով կը մասնակցի
մեր տնտեսութեան ներկայ թափին»: Հարցումին պա-
տասխանելէ առաջ, « Ընկերք, — ըսաւ դասախօսը, — յայտ-
նուպէս կեանքից ետ է մնացել»: Ես այլևս չկրցայ մտիկ
ընել պատասխանը, սիպերիական ցուրտը նորէն անցաւ

մարմինն էս: «Կեանքից ե՛տ է մնացել»: Ոտքս սառույցի մէջ մխրճուած զգացի նորէն: Ճնցուեցաւ ողջ էութիւնս: Նա- յեցայ շուրջս: Ներկաներուն մէջ բաւական թիւով ծանօթ- ներ կային, բայց ոեւէ մէկը ոտքի չելաւ ու չբսաւ, թէ... եւայլն: Անգամ մը մեռելներուն ցանկը անցած մարդու մը վերայստնութիւնը, ինչպէս կ'ըսէի քիչ առաջ, անակնկալ ուրախութիւններ պատճառէ թերեւս բնականոն պայման- ներուն մէջ, բայց մեր պարագային նոյնը չեղաւ, ճիշդ Հա- կառակը եղաւ, կեանքէն ետ մնացած մարդու հոգեվիճակ, ես պիտի ըսէի կեանքէն դուրս մնացած հոգեվիճակ, որ են- թակայ եղաւ, ենթակայ մնաց բոլոր Հարուածներուն, ծա- նօթներու թէ անծանօթներու կողմէ, գիտակցաբար, ան- գիտակցաբար: Զամբարներուն մէջ ուծացած էի Հայրենի- քէն, մեր երկինքին տակ՝ ժամանակէն: Հոն չկրցայ վար- ժուիլ, հոս գժուար եղաւ վերսկսիլ, ինչպէ՞ս պիտի վերըս- կըսէի կեանքը այս բզկտուած հոգիով, ուր Հազար Հստա- չանք կար, բեկումներ, մեռելներ կային, անսահման սուգ: Հեռուներէն վերադարձիս տարօրինակ տեղ մը ինկած կարծեցի ինքզինքս, կեանքին ու մահուան միջեւ տեղ մը, ուր ո՛չ կրնայի ապրիլ եւ ոչ ալ կրնայի մեռնիլ: Ուրիշները՝ չեմ գիտեր, բայց ես այդպէս տեսայ իրականութիւնը, քիչ խօսելու եւ շատ լռելու ստիպողական վիճակ մը, ուր շա- րունակ ուրուականներ երեւցան ինձի, սառցապատ ճամ- բայ, ձիւնամբրիկ, փշաթել, խարազան, կացին, սողոց, խո- զեր, սագեր, հրացան, լուներ՝...

— Բնա՞ւ չբարեփոխուեցաւ այդ հոգեվիճակը:

— Բնա՛ւ: Հայրենի հողին վրայ ես չկրցայ գիմանալ մա՛նուանդ տանջալի Հարցականներուն — այդ խօսքով ի՞նչ ըսել կ'ուզէր արդեօք, ինչո՞ւ այդպէս նայեցաւ, ինչո՞ւ արագ մեկնեցաւ, ինչո՞ւ չյարգեց վերադարձի խոստումը: Դարձած-եղած էի ներքին մաքրութիւնը կորսնցուցած այն տիպարը, որ Հարկադրուած էր խորամանկութեամբ քաշքշել կիսակործան իր գոյութիւնը, առանց հոգիի, առանց արարչական հրճուանքի:

— Կը ցաւիմ, — ըսի քիչ մը չոր ձայնով, — որ մարդուն գերազոյն ուժերէն մէկը բարեբար դեր չէ ունեցած ձեր կեանքին վրայ:

— Ո՞ր ուժը:

— Վարժութեան:

— Պարոն Ատոմին մոռնալու փիլիսոփայութեան մէկ տարրեր երեսն է վարժութիւնը եւ անիկա երբեմն փրկարար ուժ է, բայց վարժութեան բուժիչ բալասանէն աւելի, ինչպէս ըսի արդէն, իմ արիւնիս մէջ կը գործէր

կասկածին որդը, որ երբեք չձգեց ինձի խաղաղութեամբ շնչել: Արդարեւ, ինչպէ՞ս կարելի է ապրիլ տեղ մը, ուր երկուութիւնը զարկած է էութիւնդ եւ չես գիտեր, չես կրնար գիտնալ, թէ մարդերը ե՞րբ մարդ են եւ ե՞րբ՝ պատուէր կատարող մեքենայի մը կցորդը, ե՞րբ իրաւ են, ե՞րբ սուտ, ե՞րբ զիմակաւոր եւ ե՞րբ անզիմակ: Պիտի ընդունինք, պարտաւոր ենք ընդունիլ, որ դժուար է տանիլ կեանքը, երբ ստիպուած ես շարունակ կասկածիլ, վարձկան կարծել գուցէ ազնիւ մարդ մը, գործակալ՝ ուրիշ մը, երբորդ մը՝ մատերիայ կազմող եւ միւսները նման դերերով կրնակալիս քեզի հետեւող պաշտօնեաներ՝ լրտեսներ, մատնիչներ, քննիչներ...

— Ներգաղթելէ առաջ բնա՞ւ դադափար չունէիք այդ բարքերուն մասին:

— Ոչ, չունէի: Ընդհանուր խանդավառութեան շրջան էր այդ օրերուն, մասնաւորաբար իմ միջավայրիս մէջ վերապահութեան ոչ մէկ կէտ կար, մարդիկ չէին կրնար մտածել որեւէ բացասական երեւոյթի մասին, իսկ հակառակորդ ճակատէն եկող ամէն խօսք խճբճանք կը համարուէր: Ես այդ անկիւնէն կը դիտէի դաշնակցական թերթերուն մէջ երեւցող լուրերն ու յուշագրութիւնները, ինչպէս նաեւ որեւէ արատի դէմ ուղղուած յօդուածներն ու խմբագրականները: Ատոնք, առանց բացառութեան, չարախօսութիւն կը թուէին ինձի, ինչպէս հիմա իմ ըսածներս կը թուին շատերուն, թուեցան պարոն Ատոմին, գուցէ կը թուին ձեզի: Հայաստանի շողողո՞ւն իրականութեան մէջ ո՞վ կրնար պատկերացնել, որ յերիւրածոյ փաստերու հիմամբ մարդիկ ոչնչացուցած են ուրիշ մարդեր եւ կրնան նոյնը ընել որեւէ օր, որեւէ ժամու, ինչպէս պատահեցաւ անձամբ ինձի: Հիմա կը տեսնեմ, որ մեր պարզամտութիւնը կը կրկնուի շատերուն մտքին: Հոս ապրողները, ներգաղթի նախօրեակին մեր մտանած դիւրահաճութեան պէս, շատ կը վստահին գրքային, թերթային, այլո՞մային կամ գրօսաչրջիկային թոռցիկ վկայութիւններու, շա՛տ: Պատմութիւնը բաց գիրք էր մեզի համար ու անոր յաջորդ էջերը լեցնելու սահմանուած իրականութիւնը մե՛նք ապրեցանք, մինչդեռ հոս տուն-տեղ եղած մարդիկ մեզի հետ կը խօսին այնպէս՝ որ կարծես լուսնէն եկած ըլլայինք: Միայն մեզ կը պախարակեն, յանցաւոր կը նկատեն միայն մեզ, որ օրհնութիւն չենք համարած հետապնդումները, հարցաքննութիւնները, բանտը, աքսորը, աքսորին մէջ արիւնամած մեր մարմիններուն շառաշած մտրակները: Դեռ քանի մը օր առաջ, չէմ գիտեր քանիերորդ անգամ

Հայաստան հրաւերով այցելած պարոն մը, որ այսպէս կոչուած մտաւորականի պատմուճա՛ն մըն ալ ունի ուսերուն, անդուսպ ողեշնութեամբ մը կը խօսէր մեր շինարարներուն մասին, ծաղկեալ հայրենիքին եւ ծաղկեցնող տարբեր ջոկատներուն մասին եւ զիս կը մեղադրէր դասալքութեամբ: Կը խօսէր հայրենի ժողովուրդին կացութիւնը ինձմէ աւելի լաւ ճանչցողի մը սանձարձակ յաւակնութեամբ: Թուած անուններէն ու արտասանած բառերէն պարզ կ'երեւէր, որ դարձեալ տարած-բերած էին զինք նախօրօք ճշդուած վայրեր, պտոյտներու, կերուխումներու, անշուշտ ի վարձատրութիւն երէկուան ոմսաննաներուն եւ ի հաշիւ վաղուան խնկարկումներուն: Տառապանքը անցեալին կը պատկանէ՝ կ'ըսէր հիւրընկալուած պարոնը, հիմա Ստալին չկայ ու Բերիա չկայ, մոռցուած բարբեր են առաջուան հետապնդումներն ու հաւատարմութիւնները, բարեփոխուած է նաեւ կեանքի մակարդակը, ամէն ինչ կայ, ամէն ինչ ունի ժողովուրդը, ամէ՛ն ինչ: Զիս ամէնէն աւելի խոցողը մակերեսային այս դատողութիւնն է, այս կամակոր ճորտութիւնը: Երէկ վարձատրուած եւ այսօր վարձատրութիւններու սեւեռարիք սպասող այս պարոնին եւ իր նմաններուն...

— Կը յուսամ,— ընդմիջեցի իր խօսքը,— Ատոմը ատոնց շարքին չէք դասեր:

— Այս պահուս ես Ատոմին մասին չեմ խօսիր, կը խօսիմ հասարակաց կեցուածքի մը մասին եւ նկատի ունիմ անոր մէկ կողմը գտնուող հաշուախնդիր տարրերը: Ատոնք երբեք չմտածեցին, երբեք չեն ուզեր մտածել, որ բաներ կան, որոնք անցեալ չունին, չեն կրնար ունենալ անցեալ, երբ անգամ մը մտած են մէկու մը ուղեղին մէջ, արեան քլիջներուն, քիզերուն մէջ, ինչպէս հաւատքի խախտումը, վախը, յաճախանքը, ի՛նչ զիանամ, ինչպէս շարագուշակ մտասեւեռումը: Այս մասին ոչ ոք կը մտածէ ու մտածելու ունակութեան տպաւորութիւն ձգած մարզերը կը կարծեն, որ քանի մը չէ՛նքի, պոզոտայի, հրապարակի տեսքը եւ իրենց ազա՛հ աչքերուն առջեւ փռուած հիւրային սեղանին դոյնզգոյն ու բուրումնաւէտ բարիքները բաւ են երջանիկ ապրելու համար, վստահութեամբ նայնլու համար վաղուան, աւելի հեռուներուն: Ենչող բունակային ահաբեկիչ շուքէն ու տնտեսական չքաւորութենէն դուրս տառապանքի ուրիշ որեւէ պատճառ չկայ կարծէք, իրենց համար տառապանքի միւս տեսակները վերացական հասկացողութիւններ ըլլային կարծէք, անբովանդակ բառեր: Ես, անշուշտ, որեւէ մեղադրանք չունիմ զանգուածներուն հաս-

ցէին, կ'ընդունիմ պարզ մարդոց զեղումները: Հեռունեքէն կամ կարճատեւ այցելութիւններէն ի հարկէ հնարաւոր չէ ճանչնալ զյիսագիր ճառագանքը եւ անոր անտեսանելի ու ահարկու միաւորները, որոնցմէ մէկը, ինչպէս ըսի քիչ առաջ, մեզ կրժող կազմածը եղաւ, միւսը՝ հաւատաքննութիւնը, ոստիկանատունէ ոստիկանատուն քաջջուելու յաճախողէպ նուաստութիւնները եղան տակաւին, հրապարակային ատեաններու մէջ նախապատրաստուած նախատինքը կրելու ստիպումը, ու լրումը այդ ամէնուն՝ սիւլերիական հարստահարումը:

Խածաւ շրթունքը: Կնճիւնները աւելի սեղմուեցան իրարու:

Աչքերուն նայելով օրօրեցի գլուխս:

— Ինձի եղած մեղադրանքներուն համար, — վերբուկըսաւ անմիջապէս, — ես այնքան չեմ ցաւեր հիմա, որքան կը ցաւիմ մեր սահմուկեցուցիչ փորձառութիւններուն հանդէպ մտածող տարրին ցուցարեւած այս անհոգի վերաբերումներուն համար: Ես սարսափով հաստատեցի տակաւին, որ անոնք հեշտութեամբ կը մոռնան պաշտօնական ոճիւնները եւ նոյն զիւրութեամբ ոճիւր կը համարեն ինձի պէս սոսկական անհատներուն առած մէկ քայլը: Ես տառապած մարդ եմ, այրած, մոխիրի վերածուած եւ գիտեմ, որ նոյն պատճառին պիտի վերադրուին բոլոր տպաւորութիւններս, մտածումներս, եղբակացութիւններս, եւ ճիշդիս պիտի համարուին զառնացած մարդու տրտունջը: Ես գիտեմ, որ շատ բաներ պիտի վերադրուին ինձի, խօսածներէս տարբեր, մտքէս չանցած բաներ, վերադրողներուն մտքէն անցածները միայն: Շատեր շատ բան ըսին արդէն, տառապանքի անընդունակ մարդ ըսին, ուրացող, դասալիք, դաւաճան:

Լուեց: Յնցուեցաւ իսկոյն: Հարցուց.

— Երբեմն գիտէ՞ք ինչ կը պատահի ինձի:

— Հետաքրքրական է, — ըսի՝ աչքերս լայն բանալով:

— Որպէսզի խօսակիցներս հեռացնեմ իրենց թիւրիմացութիւններէն, երբեմն ինչքա այ կը փորձեմ հեռանալ ինձմէ, զիջումներ կը կատարեմ, զեղչեր կ'ընեմ, կէսի կը վերածեմ տառապանքներս, հոգեկան տառապանքներս, Ֆիզիքական տառապանքներս, կը փորձեմ ընդունիլ երկու կէսերէն նուազ բան մը, քառորդի իջեցնել կրկնակ վերքերու քանակը, տեսակը, բայց մի՞թէ այդքանը չի բաւեր՝ պզտորելու համար որեւէ ապրումի ակունք եւ խորտակելու մարդու մը ներքին կառօյցը, հաւասարակշռութիւնը: Աէրս կասկածելի յայտարարեցին, հաւատքս՝ խարդախ-

ւած, նուիրուսս՝ խորամանկութիւն: Ամէն անգամ դիմացս գտայ զիս ինձմէ պարպող նոյն մեքենայութեան գործակալներէն մէկը կամ միւսը, կասկածողներ, խարդախողներ, խեղաթիւրողներ, ամէն ինչ շրջուած ձեւով ընկալող մարդիկ, ամէն ինչ գլխիվայր դարձնող դժնետեսիլ, անկարեկիր, ուրիշներուն շարչարանքներով հեշտացող աղաւաղուած տիպարներ, որոնք ամէն կայծ մարեցին սրտիս: Ուրիշներ ինչպէ՞ս պիտի հասկնան այս բոլորը, ուրիշներ ինչպէ՞ս պիտի կրնան բմբոնել իրենց սիրածը չկարենալ սիրելու տառապանքով խոցուած գժբախաները, որոնցմէ մէկը ես եղայ, եմ:

«Ուրիշներ՛ր», ըսի իւրովի, երբ կանգ առաւ: Ուրիշները: Ուրիշներէն մէկն ալ հաւանարար ես էի, որ անճրկած-մնացած էի դիմացը, զուր փնտտելով հաւանութեան կամ հակաճառութեան տուեալներ ուղեղիս մէջ:

— Ի գէպ, — ըսաւ Միքայել անապարանքի մասնըւած մէկու մը իրարանցումով, — դուք մասածա՞ծ էք բնաւ, թէ քանի տեսակ ցաւ կայ աշխարհի մէջ:

- Ինչ դիտնամ, շատ, — ըսի անտարբեր:
- Գլխաւորնե՞րը:

Մտքիս մէջ արագօրէն կրկնուեցաւ իմ յանկերզս — մայրս ճանչցած չրլլալուս ցաւը, հօրս վաղահաս մահուան առթած ցաւը, անոք երիտասարդի ցաւս, անսէր մնացած մարդու ցաւը՝ Զելա՞ն...

- Գլխաւորնե՞րը, — կրկնեց:
- Ինչ չկրցայ ճշդել:
- Ըստ իս, հաւաքական կեանքին մէջ գլխաւոր երկու ցաւ կայ միայն, մահացու ցաւը եւ կենսատու ցաւը:
- Ինչպէ՞ս թէ մահացու, ինչպէ՞ս թէ կենսատու, ցաւը ցաւ է, — ըսի ջիջ մը վիրաւոր ձայնով:
- Ո՛չ, տարբերութիւններ կան եւ մեծ են տարբերութիւնները, — ընդգծեց ինք, — փրկչական գրօջակներուն երբեւ մեր ապրած ցաւերը, օրինակ, մահացու ցաւեր էին:
- Իսկ կենսատուն, — հարցուցի այս անգամ ժպտուն:
- Թշնամիին պատճառած ցաւը, միլիոններ հնձած թուրք ուրականին բացած վէրքը օրինակ, որ առնուազն վրէժխնդրութեան մը որակը կը շաղախէ յետնորդներուն արեան մէջ, իսկ մի՞ւսը...
- Այդ միւսին օրով էր սակայն, որ հրաշքներ գործուեցան, ինչպէս կ'ըսէր Ատոմ եւ կ'ըսեն ուրիշներ:

— Նման հրաչքներով խանդավառ մարդերը քիչ մը չեն յիշեցներ սակայն առածին աղքատները:

— Ո՞ր առածին:

— Այն առածին, ուր կ'ըսուի, թէ Աստուած ուրախացնելու համար աղքատը, նախ կորսնցնել կու տայ անոր աւանակը եւ ապա գտնել կու տայ աւանակը:

Հակազդելու տրամադրութիւնը արթուն էր մէջս, բայց բառ գտնելու փոխարէն պաղ քրտինք մը զգացի գէժօքիս:

— Այո՛, — երկարեց ձայնը Միքայէլ, — մեր պարագան եւս նոյնն է, աղքատի ուրախութիւն: Ամբողջ յիսուն տարի ուրանալէ ետք Սարգարապատի հրաչքը՝ յուշարձանախուժը կանգնեցին Սարգարապատի փառքին, նոյնը պատահեցաւ Եղեռնի զոհերուն առիթով, նոյնը՝ եկեղեցիներուն, նոյնը՝ հայոց լեզուին, մատենաներուն, երգերուն, եւ դեռ Սեւանի՛ն՝ նոյնը, սրածուած մեծագործներուն, հոգիի մարդոց, ճախրանքի ունակ ընտիրներուն: Հրաչքներու ու բարեջրմունքներու մասին բարբառող մարդերը գիտե՛ն արդեօք, թէ այդ հարստութիւններուն պարզ յիշատակութեան համար քանինե՛ր անհետ կորսուեցան, կամ ինչ պատահեցաւ Բաֆֆի կարդացած ըլլալու ամբաստանութեան տակ առնուած կամ «Մայր Արաքսի ափերով քայլամուտը» ման եկող տանջահար մարդոց, կամ ցաւառիթ պահու մը «Ձախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան» երգած վշտահարներուն: Նորակառոյց քաղաք, լուսահեղեղ պողոտայ, ծաղկածիծաղ հրապարակ, բազմբանդ ցայտաղբիւր, կենսապարզ եւ ջրանցք, Մատենադարան, թանգարան, աստղադիտարան, պերճաշուք հիւրանոցներ, փարթամ օփերա, թատերասրահ, գործարանային եռուղեւ, տպաքանակ, տօնահանդէս: Շատ աղէկ այդ ամէնը: Հնարաւոր է աւելին ունենալ, անպայման կ'ունենանք աւելին, աւելի ընդարձակ քաղաք, աւելի պերճ օդակայան, մարդուան: Բայց եւ պիտի նախընտրէի, որ աստոնցմէ մէկուն կամ միւսին տեղ արդարութեան արարք մը աւելի գործուած ըլլար մեր հայրենիքի մէջ, խղճմտանքի ձայն մը աւելի բարձրացած ըլլար, վեհանձնութեան պատմութեամբ մը ողողուած էջ մը աւելի ունենայինք եւ շունենայինք զրպարտութեան անհեթեթ փաստեր, մատնըշութեան օրինակներ, ոճիրներու պատմութիւն: Շէնքը, արձանը եւ միւսները կրնայինք այսօր եւս խոյացնել երկինքն ի վեր, լերան մը կողը կրնայինք պատուել վաղը, պողոտայ մը երկարել աւելի ուշ, քաղաքակրթական առումով միշտ կրնայինք գերազանցել մենք մեզ, ունենալ ամէն ինչ

ու ամէն ինչին աւելի լաւը, ամուրը, գեղեցիկը, նուրբը, խօսունը, բայց ո՞վ կրնայ հաւաստել, որ նոյնը կրնայ կրկնուիլ նաեւ մարդկային առումով, կրնանք, օրինակ, որեւէ ատեն ծնունդ տայ Չարենցի մը, որ չենք գիտեր ուր ոչնչացուեցաւ, կամ Բակունցի մը, որ չնդակահարուեցաւ անյայտ անկիւն մը, կամ անոնց բախակից միւսներուն, որոնք գերեզման անգամ չունեցան հայրենի հողին մէջ: Ինչո՞ւ պիտի անտեսեմ երեւոյթին այս կողմը եւ ըստ պատուէրի չենքեր պիտի դիտեմ միայն, պողոտայ կամ ջրանցք: Հիմա կը զօղանջեն իջմիածնայ զանգակները, բայց ուխտաւորներէն մէկը կը յիշէ՞ արդեօք նոյն սրբաժայրին յափշտակուած կալուածներուն ողբերգութիւնը:

- Ո՞ր ողբերգութիւնը, — հարցուցի զարմացած:
- Ամէնէն առաջ իրենց նոր անունին:
- Անունի՞ն:
- Այո, անունին, Անաստուած:
- Ի՞նչ, — բացազանչեցի:
- Այդպէս կնքեցին պետականացուած այգեստաններուն տեղանունը:
- Այդքա՞ն:
- Ոչ այդքան, աւելի՛ն: Մարդիկ համարձակեցան նոյն անունով նոյնիսկ թերթեր հրատարակել:
- Անաստուած՞:
- Այո, եւ ամբողջ երկու տարի:
- Դեռ կը յիշուի՞ն այդ զէպքերը:
- Փաստօրէն յիշողներ կան: Ի վերջոյ էս չհնարեցի այդ բաները:

Սեղանին վրայ խոնարհեցի գլուխս ու սկսայ տարբեր նիւթ մը փնտռել ուղեղիս մէջ: Կը գժուարանայի լսածիս հաւատալ, բայց նչուած իրողութիւնները հերքելու տուեալներ կը պակսէին ինծի: Միջայել ամբողջ պատմութիւն մը ունէր իր ետին, էս՝ սովորական առօրեայ մը միայն:

- Կը սպասէի, — ըսաւ, — որ հետաքրքրուէիք, թէ ինչո՞ւ երկար կեանք չունեցան այդ Անաստուածները:
- Ինչո՞ւ:
- Հարցումը ես գրի:
- Չեմ գիտեր:
- Ենթադրաբար՞:
- Հուռ նայեցայ աչքերուն:
- Ըստ իս, — մրմնջեց գլուխը օրորելով, — նարեկեան փոթորիկներուն տեղ չէր բացուեր հողիներուն մէջ, եթէ

մարքսեան սնունդով կարենային յազեցնել ներքին պապակները: Ա՛հ ք խորհիր:

— Կրնայ ըլլալ:

— Արգիլելու եւ արտօնելու, զրոհելու եւ նահանջելու, պատուաստելու եւ ջնջելու այդ փորձերը որքա՞ն սուղ արժեցին սակայն մեզի: Եղաւ այնպէս, որ արիւնաքամ ըրին մարդկային ու պատմական վիթխարի ու բազմաթիւ արժէքներ եւ ուրիշ օր մը ահագին ճիգ վատնեցին անոնց վերարժեւորման համար:

— Ուրախալի անդրադարձ, — ըսի թիչ մը բարեփոխւած տրամադրութեամբ:

— Ձգալ պէտք է սակայն տառապանքը այդ վերաբերումներուն միջեւ բռնօրէն տատանող մարդուն, որ բռնութեան տակ ծափողջուներ անբնական եւ ամբողջական վստահութեամբ մը չի կրնար դիմաւորել թողատրուած բնականը: Ու տակաւին ցաւը այն է, որ հոս չի վերջանար երկուութեան լուծը:

— Դե՞ս ինչ մնաց անդին:

— Յետնորդներուն տառապանքը:

— Այսի՞նքն:

— Ի՞նչ առաջ պարզուեցաւ մէկը, Անահիտի պարագան: Ըսի կարծեմ անգամ մը, բայց կրկնեմ նորէն, որ Սարգսարապատի մէջ մարտնչած մարդուն զաւակը կամ թոռը, Եղեոնին զոհ գացած մարդուն զաւակը կամ թոռը, ոչնչացուած Փետայիի մը զաւակը կամ թոռը, եկեղեցւոյ խորանին բռնօրէն կանգնեցուած ու բարձրացած սուրին տակ «Աստուած չկա՛յ» պոռացած ալեզարդ քահանային զաւակը կամ թոռը, եւ ուրիշ զաւակներ, եւ ուրիշ թոռներ պարծանքով, երախտագիտութեամբ, բերկրանքով կամ անարատ սիրով չեն կրնար նայիլ յուշարձանախումբին, Միծեռնակաբերդին, չեն կրնար հոգի ողողող հպարտութեամբ Փետայական երգ մը երգել կամ համբուրել վերապրած սրբատաշ քար մը: Ըսէք ինձի, խնդրեմ, որ բոլորովին չինձու պատճառով մաքրագործուած զբազէտի մը արձանը կամ անոր փառքին նուիրուած տօնահանդէսները ի՛նչ կշիռ կրնան ունենալ յետնորդներուն սրտին: Այսօր նշանաւոր գիտնական Բակունցի Սեւադան կրնա՞յ օր մը ներքին ցնծութեամբ դիտել արդեօք ուշացած արդարութեամբ հօրը շուայլուած մեծարանքները, եւ կը կարծէ՞ք, որ այնքան դիւրին է ջնջել տառապանքի ժառանգութիւնը:

— Ոչ, ես այդպէս չեմ կարծեր, — ըսի կոպտացած, —

բայց դուք կը խորհի՞ք, որ ազատ աշխարհ կոչուածին մէջ նման բաներու պիտի չհանգիպիք:

— Սո չեմ գիտեր, թէ ինչ վերապահուած է ինծի նոր միջավայրերուն մէջ, բայց քաջ գիտեմ, որ ետին ձգած աշխարհս բնա՛ւ չեղաւ այն՝ որուն մասին մտածած էի — ապահով տեղ մը, արդար տեղ մը, թուիչներու մղող տեղ մը: Ձեզաւ, ոչ: Թող չըսուի, որ ձրի ուսումը տեղ ունէր մտքիս մէջ եւ ձրի ուսում չստացած ըլլալու գառնութիւններ դուրս կու տամ: Թող չըսուի, որ բարձր պաշտօններ կ'ակնկալէի ու զլացուած բարձր պաշտօններուն հետեւանքով աղօտեցան աչքերս: Երբորդ անգամ՝ թող չըսուի, որ հանգստաւէտ պայմաններու երազով էլած էի ճամբայ ու չգտած հանգիստիս բերումով վրէժինդրութիւն ժը մոյզնեցաւ սրտիս: Հաւատան ինծի կամ ոչ՝ իմ հշմարտութիւնը կը մնայ նոյնը, որ ես ամբողջ սրտով կ'ուզէի, հոգեւի՛ն կը բաղձայի հայրենիքին մէջ շարունակել կեանքը եւ միայն մաքրամաքուր այդ պապակով ճամբայ ելայ՝ ամէն ինչի պատրաստ:

— Նոյնիսկ չարչարանքներո՞ւ, — հարցուցի այս անգամ ժպտալէն:

— Նոյնի՛սկ չարչարանքներու, — շեշտեց գլուխը առաջ տանելով, — ես միշտ մտածած եմ այդ մասին, եւ խոր դառնութեամբ, Սիպերիոյ մէջ ամէն վայրկեան, Հայաստանի մէջ ամէն ժամ, տաղելով ուղեղս նոյն հարցականներով, որ եթէ յանցանք մը գործած էի եւ անոր քաւութեան համար անհրաժեշտ էր տաժանակրութիւնը՝ ինչո՞ւ մինչեւ հեռաւոր Սիպերիաները արտրեցին զիս: Հայաստանի մէջ տաժանավա՞յր կը պակսէր, թիապարտներուն վիճակուած գո՞րծ չկար: Ձեի՞ կրնար անարեւ հեռուները վատնած աւիւնս յատկացնել մեր երկրին մէկ մասին, ծայրագաւաւրի մը, յետընկեալ մեր անտառներուն, հանքերուն, կամ ազարակներուն, որեւէ ձեռնարկի մը անման, թափին, բարեզարդման: Տաժանակրութեան տո՛ւմային պայմաններուն մէջ թերեւս մէկը բարեւ մը կու տար ինծի ու կը զգայի, որ դեռ մարդ եմ, տարեց թիապարտի մը սահմանաւած գործին մէկ մասը ինքս կ'ընէի եւ ծառայութեան այս ոճին մէջ թերեւս մոռնայի ճակատագրիս սեւ գիծերէն մէկը, կրնայի գաւաթ մը ջուր տալ հիւանդի մը եւ ջերմանալ անոր երախտապարտ աչքերուն բոցէն, թերեւս երգի մը սփռփանք հասնէր ինծի, ժպիտի մը արժանի համարուէի, ինչ գիտնամ, ես ի՞նչ գործ ունէի հիւսիսային ցրտասարտու թեւեռներուն մէջ, ուրիշներու թաթին տակ:

Կանգ առած պահուն նորէն նզովեցի երկու իրակա-

նութիւններու միջեւ տարութերող իմ էութիւնս: Մէկ կողմը կար ձուլման վտանգէն առաջացող Ատոմի այրող մտա-տանջութիւնը, իսկ միւս կողմը՝ տառապանքի գօտիներէն դուրս գալու ստիպումով արձակուած Միքայէլի ցաւազին ճիշդ: Հազիւ մէկուն հետ հաշտուած՝ կ'իյնայի միւսին ցանցին մէջ:

Յանկարծ միտքս ինկաւ Ատոմի միւս առարկու-թիւնը, յաւելեալ զոհոյութեան տեսութիւնը, մանուկնե-րուն համար, հայրենիքի անհրաժեշտութիւնը, որուն մա-սին կատարած յիշեցումս այս անգամ թունդ հանեց Մի-քայէլի սիրտը:

— Ի՞նչ մեծ յայտնութիւն,— գոչեց՝ յօնքերը վեր առնելով:

— Ճիշդ չէ՞:

— Այդ հայրենիքի համար մինչեւ Սիպերիտները գացած մարդ եմ ես եւ ճիշդ նոյն պատճառով արժանա-պատուութիւնս կը վիրաւորուի, երբ նման բաներ լսեմ: Ես լուռ մտիկ ըրի Ատոմին յայտնած մտածումները, որով-հետեւ շուզեցի իմ վէրքերովս վիրաւորել զինք:

— Բայց ճիշդ չէ՞ր ըսածը,— կրկնեցի:

— Ճի՛շդ էր, ի հարկէ՛, ինչո՞ւ ճիշդ պիտի շրջան այդքան հոլովուած բաները, որոնք շես գիտեր ինչու հիմա աւելի շատ կը հոլովուին: Հիմա ամէն ոք իմաստուն գար-ձած է, ամէն ոք մտահոգ՝ զաւակներուս ապագային նկատմամբ, ամէն ոք հոգածու՝ ինծի հանդէպ, գորովալիբ, խանդակաթ: Երբ հարցաքննութեան կանչեցին զիս՝ ոչ ոք հետաքրքրուեցաւ ինձմով. երբ դատի քաշեցին՝ ոչ ոք փոր-ձեց արդար ըլլալ. երբ աքտորեցին՝ ոչ ոք կարեկցեցաւ: Երկրորդ անգամ Հայաստանի հողին սոք գրած օրէս աս-դին միայն մարդիկ սկսան գուրգուրալ վրաս, ցաւակցիլ, զթալ՝ արտօնեալ գութով մը, որ աւելի կշիռ չունեցաւ ին-ծի համար, քան արգիլուած գութը: Աւելի կշիռ չունի ինծի համար նոյնպէս իմաստութիւնը այն մարդոց, որոնք վաղը կրնան նոյն եռանդով բոլորովին ուրիշ բան ըսել: Երբ տեղ մը մտածումներու տարբերութիւն չկայ եւ մարդոց վերա-բերումները կախում ունին վարչական որոշումներէ, ամէն ինչ հնարաւոր է հոն: Նոյն պատճառով էր, որ գէպի Սի-պերիա ջրուած ատենս, չգտնուեցաւ մէկը, որ ըսէր, թէ հայրենիքը պէտք է քեզի, կամ ուրիշ մը ըսէր, որ դուն պէտք ես հայրենիքին: Հիմա մեծ-մեծ կը խօսին, կը թուեն սա-ժմանէն դուրս ցցուող տեսակ-տեսակ ու շարան-շարան փորձանքները ու հարկադրարար կը գովերգեն սահմանէն ներս արձանագրուած իրազործումները, ծաղկումը, կա-

ոուցումը, գիւտերը, թոխչքները: Եւ կը խօսին այնպէս, որ կը կարծես հերքող կայ այդ բոլորը: Մինչեւ անգամ առանց այդ նուաճումներուն հայրենիքը հայրենիք է ունէ մէկուն համար, ու օտարութիւնը՝ օտարութիւն, անձան առհասարակ մէկը, ճակատագրական հիւծում՝ միւսը: Բայց...

— Բայց ի՞նչ, — հարցուցի լարուած հետաքրքրութեամբ:

— Դժուար է, բայց ըսեմ, հարցումով — եթէ Սիւպերիոյ մէջ փչէի շունչս, նոյնքան պիտի տագնապէի՞ն արդեօք կէսս յօշոտած դահիճները մոռնալով ամէն գնով զիս մեղադրող նախանձախնդիրները, Ատոմը եւ ուրիշներ, կամ երբեւիցէ այնքան տագնապա՞ծ են ցուրտ քաւարաններուն մէջ հաշուէյարդարի ենթարկուած հազարներուն ու բիւրերուն առիթով, որքան ցոյց կու տան ինծի պէս կիսակործան հոգիներուն առիթով: Այս հակասութեան ետին կարելի՞ է միթէ հաշիւներէ զատ ուրիշ բան տեսնել:

Ես չէի կարծեր եւ չէի կրնար ընդունիլ, որ Ատոմ երբեւիցէ կրնայ հաշուախնդիրներուն դասուն պատկանիլ: Հաշիւներու հետ ի՞նչ աղերս կրնայ ունենայ մէկը, որուն առած բոլոր քայլերը ի վնաս իրեն եղած էին: Հաղորդեցի տպաւորութիւս:

— Ընդհանուր առմամբ՝ թերեւս, — ըսաւ Միքայէլ, — բայց քիչ առաջուան մեր խօսակցութիւնը դժուար թէ կարենայ իր հաշուոյն անհաշուենկատ հետեւողութիւններու առաջնորդել զիս: Մնաց որ, եթէ իրեն պէս եւ իր պատկերացուցած զիրութեամբ կարենամ մոռնալ անգամ ջամբարային մեր կեանքը, չեմ կրնար նկատի շտանել սակայն իր միակողմանիութիւնը:

— Ատոմի՞:

— Չանդրադարձա՞ր միթէ:

— Ո՛չ:

— Ատոմ կը խօսէր ազատ աշխարհի այլասերիչ պայմաններուն մասին եւ յամառօրէն կը լռէր նոյնանման միւս միջավայրերուն զիմաց, անշուշտ, ապաւինած իմ ներողամիտ լռութեանս:

— Օրինա՞կ:

— Տամ: Եթէ Ամերիկայի փոխարէն՝ Խորհրդային Միութեան ծիրէն ներս գտնուող երկիր մը ընտրած ըլլայի, ըսենք՝ Ափխազստան, Ղազախստան, Թիւրքմենիստան, կամ Խուսաստանի մեծ քաղաքներէն մէկը կամ միւսը՝ Մոսկուան, Լենինկրատը, Ցարիցինը, ուրիշ մը, նորէն այսպէս խէթ աչքով պիտի նայէ՞ր ինծի Ատոմ, կամ լուր պիտի ունենա՞ր արդեօք իմ թանկագին՞ն գոյութենէս: Չեմ կար-

ծեր: Ու կը խորհիք քի՞չ է թիւը անոնց, որոնք գունդ առ գունդ կը շարունակեն բռնել նոյն ճամբաները ամէն տարի, տարին տասը, քսան հազարներով: Մի՞թէ կեդրոնական Ասիոյ կամ Հիւսիսի ոստաններուն մէջ հաստատուածները նուազ արիւնաքամ կ'ըլլան, քան Ամերիկայի ամենակուլ երախը ինկած զժբախտները: Հարցին այս Լրեսին ժասին համարեա՛ թէ խօսք չկայ, կը սպասուէր, սակայն, որ ըլլար աննուազն արտասահմանի մէջ, եւ ըլլար ուժգնօրէն, գոնէ՛ այնքան, որքան կ'ըլլայ մեզի պէսներուն առիթով: Այո, ամէնօրեայ է անծայրածիր այդ աշխարհին մէջ մեզ ճարակող լուռ սպանդը, որովհետեւ տարտղնումը ամէնօրեայ է:

— Ըստ ձեզի, ո՞րն է ատոր բուն պատճառը: Տնտեսական տագնա՞ւը արդեօք:

— Ոչ անպայման:

— Մովետական հայրենասիրութի՞ւնը:

— Ձե՛մ կարծե՛ր:

— Հայրենասիրութեան պակաս՞ը ուրե՛մն:

— Ո՛չ, — աղաղակեց Միքայէլ, — հազա՛ր անգամ ոչ:

— Ի՞նչ պատճառ կը մնայ ուրե՛մն այս կամաւոր տարագրութեան:

— Ի՛մ պատճառս, — շեշտեց ուժղնութեամբ, — ի՛մ: Այդ տարագիրներուն գոնէ մէկ մասը, առաջին շուրջները ունին իմ պատճառս, իրենց սեփական անցեալէն խոյս տալու պատճառը, ուրիշ ի՛նչ...

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

(Շար. 2)

ԱՆԱԻԱՐՏ ՄԻ ԵՐԳ՝

ՆԻԻ ԵՈՐՔԻ ԳԵՏՆՈՒՂՈՒՄ

Այդ օրը ոչինչ էլ չէր պատահի, եթէ գնացները չուսուցանեցին շարժուելին: Բայց գնացներն էլ, երեւի, միօրինակութիւնից զգուել գիտեն եւ հենց այդպէս, ուղտի պէս, կանգնում ու չեն շարժուում, ձեւացնելով, որ ստեղծուած իրարանցումը չեն էլ նկատում, այլ պարզապէս կանգնել են, ուրիշ ոչինչ: Ուրեմն՝ եթէ չուսուցանեցին շարժուելին, օրը կը լինէր միանգամայն անմեղ, այսինքն՝ անգոյն ու սովորական, տաղտկալի, չի՛րջուող, իր նմաններին ձուլուող: Աշնան անձրեւի պէս կը հասէր-կ'անհետանար, գարնան ինքնանպատակ ու խնձր, լաց ու ծիծաղ, մութ ու ծիծառն իրար խառնած տեղատարափների պէս չէր յիշուի: Այգ օրն, առում եմ, կը դառնար մասնիկը այն թելի, որից տարին կծիկ է դառնում, կծիկը՝ տարի: Բայց այդպէս չպատահեց, որովհետեւ տեղից չշարժուող ըմբոստացած գնացքի թուր ուղեւորները տեղ ունէին գնալու եւ խցկուեցին իմ գնացքը, որն արդէն նպատակալացների իր պատկառելի թիւը, չէ, գանգուածն ունէր:

Հիմա արդէն գնացքս այնքան լիքն էր, որ ուղեւորները նայնիսկ հրմշտելու հնարաւորութիւն չունէին: Կանգնել էին միակուսուր գանգուածի պէս՝ մակերեսների ուռուցիկ ու գոգաւոր մասերն իրար յարմարեցրած: Իսկ եւ իսկ մօրս դեզօի անուշի պէս, որի ամանը շրջելիս բռնորկէս դեզօի իրար ազուցուած էին դուրս գալիս ու հս առում էի: «Դուրս չլսփայում պէս մենակ կը շփոթուեն», իսկ մամառ ոչ մի անգամ չմռռացաւ «չիմարս» ասել:

Գնացքն այնքան էր լցուել, որ եթէ մէկը փոշտար, իսկապէս շփոթութեան ալիք կը ստեղծուէր: Որինակ, երբ ես գրպանիցս թաշկինակ հանեցի, եօթը հօգի գայրացած հայեացքներով դէմքս նաճկոտեցին: Զէ՛ք հաւատում, տեսէ՛ք: Ետեւիկն ետ ընկաւ (թաշկինակը հանելը հարբուխ կարող է նշանակել, ինքը ինչո՞ւ վարակուի), այ կողմինս փոքր ներս քաշեց, որ արմուկիցս խոյս տայ, ետեւիկն թեւը վեր հանեց, արը եւ ստիպեց իր կողմինս գլուխը ընդոստ թեքել: Քանի որ թեքուողը երկարամագ կնոջ գլուխ էր, նրա կողմինը շատ դժգոհ փնչաց, կնոջ մագերն իր զէմֆից ետ փնչելով, իսկ դա արդէն չափազանց էր, որովհետեւ նա էլ իր կողմիններին հաւասարակշռութիւնից հանեց: Եւ այդպէս շարունակուեց, բայց արդէն իմ սահմանափակ տեսողաշտից դուրս...

Այդ բոլորից մի էիչ ամաչեցի եւ ահազին նեղացայ քրիցս, որն առանց այն էլ հպարտի մէկն էր: Ինչ էլ տե՛ղ է ընտրել — մարդու դէմքի հենց կենտրոնում, եւ գարմանալի էլ չէ, որ իրարանցում է ստեղծում կարգին մարդկանց մէջ:

Միջադեպից յետոյ սկսել էի կաղկանձելու աստիճան ձանձրանալ, երբ աչքս ընկաւ լուսամուտին (գետնուղում ի՛նչ լոյս, աւելի ճիշդ կը լինէր ասել «մութամուտներ»): Դրսի խաւարը այդ լուսա-մութամուտներին դարձրել էր հայելի, որոնց մէջ երեւաց, որ չորս կողմից միաձայն

զանգուածը իրականում գատ-գատ մարդիկ են, զէմֆեր ունեն՝ տարբեր արտայայտութիւններով, բայց բոլորն էլ մի ընդհանուր գզուած գայրոյթի կնիքով: Այն փորը մերս քաշուցն, օրինակ, ներկած մագեր ունէր, ուր բեմն՝ տարիքն իր համար մղձաւանջ է, բայց արդեօք կ'ուզենա՞ր երիտասարդ մեռնել: Իսկ գլուխը քեֆով կիցը շատ վնասական բերան ունէր, շրթուցման քիճն ասում էր. «Այսպէ՛ս է եւ վե՛րջ»: Առջեւ ինն կիսածպիտ կկոցում էր աչկերը: Երանի իրեն, իրականութիւնից դուրս է, իր լուսն վերայ չի հետ, մէջ: Մա էլ ես եմ՝ ցանկացածիցս շատ աւելի (ահա եւ «աւելի»-ն «պակաս» է նշանակում) անհրապոյր, աչկերիս տակ սուտերներ, որոնք արեւի տակ տեսն կապտաւուն երանգ կ'ունենան: Թուզներէս մինչեւ վերին շրթուցմա գծեր են իջնում, որոնք սպառնում են ակօսների վերածուել, ինչպէս մի լուսն քանոստեղծի «Տխրութիւնս կամաց-կամաց փոխում է լացի»:

Այս ինչպէ՛ս է պատահում, որ մի գնացք վտարում է ուղիւ որեւորին, եւ իրարանցման ու շփոթի օրինակափութամբ հեռուներից անթաղ կոտորուները վերադառնում են, վերադառնում ու մերժում են ուրուական կոչուել, որովհետեւ կ'ան. ահա աւելի կիրք, յուզմունք, լարում են կենտրոնացնում, քան այս շոշափելիները, ինձ կպած, ինձ օտար այս շնչաւորները...

Այն ուրիշ լուսամուտներից իրօ՛ք լոյս էր ծորում: Օրը աշխարհի ստեղծումից ի վեր ամենախիտն էր, ի յարգանս իր ողբերգականութեան՝ ամենագեղեցիկն էր, այդ օրը՝ մեղեքիկ, այդ օրը՝ շափիւզայ, այդ օրը՝ կլավիկորդի խուլ հնչիւն, օգնում կախումս երաժշտական մի անաւարտ ելուէջ, մի աստուծոյ հասն: Հոգիւն տուող ամենայն պէս կիրակցորեայ արդուզարգով ծառեր՝ ճմբուտայ մահն ընդունելու խաղաղօրէն պատրաստ: Աշխարհի գոյութեան ընթացում ամենասիրուն, ամենաողբերգական օրը Աստուծոյ կամփի անիմանալիութեան գլուխ-գործոցն էր, իսկ ես՝ յիմա՛քս, ամաչում էի լաց լինելուց:

Մենք գնում էինք քաղելու «մենք» ասելու իրաւունքը: Այդ շֆեղ յուզարկաւորութեանը բարդիներ կային, սրբատաշ քարեր, վրաներս հաւնում էր մի երկիմք, որի գոյնը կապոյտին իր անունն է տուել: Միւտունւած, օծուած, շֆե՛ղ յուզարկաւորութիւն, որի սաղմոսացը մի չծնուած մանուկ էր, ու գերեզմանափորը՝ դու, իսկ ես, յիմա՛քս՝ ողբասացը, հեթանոս կոծկանը: Երբ ամէն մի նառագայթ ու ամէն մի երկէզ տերեւ գիտէին խորհուրդն ու գրկախառն իրար ասում էին գաղտնիքը, ես միայն ուզում էի, որ օրուայ հետ ես էլ մարիմ, տերեւներից հետ քամին ինձ էջի-տամի, միայն թէ «մենք»-ի փոխարէն ինձ երբեք-երբեք չստիպեն շնչաւոր ասել:

Ինչ իմանայի, որ դա էր սիրելու խորհուրդը, էութիւնը, գինը, եւ որ Աստուած, որին դաժան, որին կո՛յր ու անարդար անուանեցի, հենց դրա համար էլ արարել էր մի կատարեալ օր՝ ներդաշնակ, մաքուր ու ողբերգական, որովհետեւ նա խլում էր ու նուիրում, հենց խլում է, որ նուիրի... նուիրի...

Նուիրի այն, ինչ ինձ համոզել էի, որ չկայ, ինձ հաւատացրել էի, որ չի էլ եղել եւ նոյնիսկ սկսել հաւատայ, որ չկայ, չի՛ք, որովհետեւ, ահա, գնացքի մարդիկ տեսնում են ինձ եւ ուրիշ ոչինչ, մեծակ ինձ: Մեծակ՛կ...

Ու ինձ հետ՝ ահագին սէր, քո՛ շփոթած սէրը, պահուած ու անտես, ինչպէս աչկերի մէջ չգիտեմ ինչպէ՛ս արցունքներ են պահուած, եւ ինչպէս մտնում երգուող մի երգ:

18 Հոկտեմբեր 1986 ԱՐԵՒԻԿ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ



ՊՁՏԻԿ ԱՍՏՂԱԾԱՂԻԿ

Խեղդուած գարեբրատար մը սեղանին վրայ հրեցին:
 Մարդուն մէկը մանիշակագոյն աստղածաղիկ մը
 ակուններուն միջեւ խոթած էր:
 Ծրբ ես կուրծքէն սկսեալ,
 մորթիմ տակէն,
 երկար դանակով մը
 լեզուն եւ քիմքը կտրեցի ու հանեցի,
 անոր դպչած պիտի ըլլամ, որովհետեւ ան
 սահեցաւ դէպի մերձակայ ուղեղը:
 Զայն դրի իր կրծքովանդակը՝
 տաշեղիմ մէջ —
 կարելու ատեն:
 կուշտ ու կուռ խմէ՛ ծաղկամանիդ մէջ,

digitised by A.R.A.R.@

հանգչէ՛ խազազ՝
պգտիկ աստղածաղիկ:

ԳԵՂԵՑԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻԻՆ

Աղջկան մը բերանը, որ երկար մնացած էր եղեգնի մէջ,
այդքան կրծուած կ'երեւէր:
Երբ կուրծքը բացին, որկորը այնքան ծակծկած էր:
Վերջապէս տնակի մը մէջ՝ ստոծանիին տակ
գտան բոյն մը երիտասարդ առնետներու:
Պգտիկ քայրիկ մը կար հոն մեռած:
Միւսները կը սնանէին յեարդէն եւ երիկամէն,
կը խմէին պօզ արիւնը եւ հոս
գեղեցիկ երիտասարդութիւն մը անցուցած էին:
Եւ գեղեցիկ եւ արագ եղաւ նաեւ իրենց մահը.
Բոլորը ջուրը նետեցին:
Ա՛խ, այդ պգտիկ դուռները արքա՛ն նշացին:

ՇՐՋԱՊՏՈՅՏ

Միայնակ սեղանատամը պոռնիկի մը,
որ անյայտ մեռած էր,
ունէր ռսկիւն ատամնալիցք:
Միւսները կարծես ժամադրուած՝ գազտուկ
ելած էին դուրս:
Այդ մէկը դիակին պահակը քաշեց-հանեց,
ծախեց գայն ու գնաց պարելու:
Որովհետեւ, ըսաւ ան,
միայն հողը պիտի դառնայ հող:

ԽԱՓՇԻԿԻ ՀԱՐՄՆՑՈՒ

Յետոյ կը հանգչէր մութ արիւնէ բարձի մը վրայ
խարտեաշ ծածրակը սպիտակ կնոջ մը:
Արեւը կը մոլեգնէր իր մագերում մէջ
եւ կը լիզէր իր լուսաւոր գիստերն ի վեր
եւ ծունկի կու գար անիլի թխագոյն կուրծքերում շուրջ,
դեռ չայլանդակուած ախտէ եւ ծնելէ:
Խափշիկ մը քովը՝ սմբակի գոփիւնէ
աչքերը եւ նակատը փշրուած: Ան կը մխրձէր

իր ազտոտ ճախ ռտֆին երկու մատները
 անոր պզտիկ, սպիտակ ականջներէն ներս:
 Բայց ան երկնցած կը քնամար հարսնցուի մման.
 Եզրին իր երջանկութեան՝ անդրանիկ սիրոյ
 եւ ինչպէս մեկնելէ առաջ բազմաթիւ Համբարձումներ
 երիտասարդ տա՛ արեան:
 Մինչեւ որ
 դանակը սպիտակ կոկորդը սուգուեցաւ
 եւ մեռած արիւնէ ծիրանագոյն գոգնոց մը
 տարածեց իր ազդրերուն շուրջ:

ՆԱԶԵՑԵԼՈՅ

Իւրաքանչիւր սեղանի վրայ երկու հատ. էրիկմարդիկ եւ կիններ
 խայածեւ: Մօտ, մերկ եւ այսուեանդերձ տանջանքէ գերծ:
 Գանկը բաց: Կուրծքը նեղֆուածք: Մարմիններ
 կը ծնանին հիմա վերջին անգամ մահամերձ:

Իւրաքանչիւրէն երեք յեցուն թաս. ուղեղէն մինչեւ ամբո՛րծի:
 Եւ Աստուծոյ տանարը եւ արտոր սատանային
 հիմա դոյնին յատակը՝ կուրծք՝ կուրծքի՝
 կը քնծածազին Գոզգոթան եւ անկումն Ազամին:

Մնացեալը դագաղներու մէջ: Բուրբն ալ նորածին.
 մարդու սրունքներ, մանկակուրծք եւ մագեր կնիկի:
 Տեսայ մասեր երկու քէ՛ պտուկած — ատենին
 անոնք կը պտուկանային — կարծես ըլլային մէկ մօրմէ:

ԾՆՆԴԱԲԵՐՈՂ ԿԻՆԵՐՈՒ ՍՐԱՀԸ

Պերլինի ամենաաղֆատ կիները
 — մէկուկէս սենեակի մէջ տասներեք նորածին,
 պտուկներ, բանտարկեալներ. վտարուածներ —
 կը տֆան հոս եւ կը գայարուին:
 Ոչ մէկ տեղ այդքան կը ճշան:
 Ոչ մէկ տեղ կ'անտեսուին այսքան
 ցաւերը եւ վիշտերը՝ ինչպէս հոս,
 քանի որ հոս միշտ ճշացողներ կան:

«Սեղմէ՛, տիկին, դեռ չե՞ս հասկցած,
 քէ դուն խրախմանքի շեւ եկած:
 Մի երկարեր խնդիրը, խնդրեմ,
 կեզտ ալ կու՛ գայ խոնու՛մէն երբեմն:

Դուսն հոս չեկար հանգչելու:
 Ինճնիքներ չի գար ան առանց բան մը բնելու:
 Վերջապէս կու գայ. կապտաւուն եւ պզտիկ:
 Մէզը եւ կղկղանքը կը խնդրեն վրան իբրեւ օծանելիք:

Տասնմէկ անկողինէ՛ լեցուն արցունքով եւ արիւնով
 կը բարեւեն գինքը տալով:
 Միայն երկու աչքերէ կը բխի
 ցնծութեան երգ մը. որ երկինքն ի վեր կը վերանայ:

Այս պզտիկ միտի կտորէն միշտ
 պիտի անցնի ամէն ինչ. երջանկութիւն եւ վիշտ:
 Եւ եթէ մեռնի ան խորհրդով եւ տանջուելով,
 այս սրահը դեռ լեցուն է տասներկու հատով:

ԿՈՒՐԱՂԻՔ

Ամէն ինչ ցերմակ եւ պատրաստ կտրելու:
 Նշտրակները շոգի կ'արձակեն: Փորը վրձնուած է:
 Ճերմակ յաթերուն տակ բան մը, որ կը կազկանձէ:

«Պարտն գաղտնի խորհրդակամ. սկսիմք աշխատելու»:

Առաջին կտրուածքը: Կարծես հաց կը կտրեն:
 «Սեղմակները՝ շո՛ւտ»: Կարմիր բաներ կը ժայթքեն:
 Աւելի խոր: Մկանները. շոգշոգուն. բարձ. խոնաւ:
 Վարդի փունջը այս սեղանին վրայ ո՞վ դրաւ:

Թարա՞խն է որ կը ժայթքի:
 Քերուածք մըն է ազիւն:
 «Տո՛թար, եթէ կենա՛ք առջեւը լոյսին,
 ոչ ոք կը տեսնէ թաղանթը որովայնին:
 Թմբեցում, ասանկ չե՛մ կրնար գործողութիւն ընել,
 մարդը կ'ուզէ փորովը պտոյտի ելլել»:

Անդորրութիւն, խեղդուկ խոնաւ: Պարապութեան մէջէն
 գետինն նետուած մկրատ մը կը շաչէ:
 Եւ հիւանդապահուի մը հրեշտակացած
 կ'երկարէ վիրակապ մը ամլացուաց:

«Այս կեզտին մէջ բա՛ն մը չե՛մ կրնար գտնել»:
 «Արիւնը կը սեւնայ. Դիմակը պէտք է հանել»:
 «Բայց - Տէ՛ր Աստուած - սիրելիս,
 կրունկներէն աւելի ամուր պէտք է հազուի՛ս»:

Ամէն ինչ միակցուած: Վերջապէս. գտա՛յ:
 «Շրկաւերկաթը. Օրին՝րդ»: Կը Փշշայ:

Տղաս, բախտ ունիս եղեր:
Բանդ էիչ մնաց պիտի ծակէր:
«Կը տեսնէ՞՞ք այս կանաչ բիծը պզտիկ,
երեք ժամ եւս եւ լեցուն էր ազտով փոք եւ ազի՛ք»:

Փորը գոց է, մորթը գոց է: «Շո՞ւտ, կպչոզ սպեղանի:
Յտեսութիւն, պարտնայք»:
Սրահը կը պարպուի
Ջայրացած կը շռուաչէ եւ կը ճռնչէ մահը
իր ծնօտներով, եւ կը սողայ դէպի խլիրդի սրահը:

ՄԱՐԴԸ ԵՒ ԿԻՆԸ ԽԼԻՐԴԻ ԽՂԻԿԸ Կ'ԱՅՅԵԼԵՆ

Մարդը
Հոս այս կարգը քայքայուած հեշտոցներն են
եւ այս կարգը քայքայուած կուրծքերը:
Անկողինն առ անկողին գարշահոտ: Հիւանդապահուիիները
կը փոխեն ժամ առ ժամ:

Եկուր, վերցուր սա ծածկոցը:
Տես, այս կոյտը իւրի եւ նեխած եիւրի,
ստենին ան սեւէ մարդ մըն էր մեծ,
որ կը կռուէր Արեւելքիս եւ Հայրենիքի:

Եկուր նայէ կուրծքի վրայի այս սպիիկն:
կը զգաս վարդարանը կակուզ հանգոյցներու:
Դպչէ անվարան: Միսը կակուզ է եւ չի ցաւիր:

Ասոր արիւնը կը հոսի՝ կարծես ունենար ան երեսուն մարմին:
Ոչ ոք այդչափ արիւն ունի :
այս մէկէն նախ
մանուկ մը խլիքիս խլիրդոտ հեշտոցէն :

Կը ձգեն որ քնանան : Օր ու գիշեր : Խորեկներուն
կ'ըսեն- հոս քնանալով կ'ազնկնաս: Միայն կիրակիները՝
այցելուններուն համար՝ էիչ մը արթուն կը ձգեն:

Քիչ կ'ուտեն այլևս: Կռնակները
վերքուտ են: Ճանները կը տեսնես: Երբեմն
կը լուայ գանձո՞ք հիւանդապահուիին: Նստարան լուայու պէս:

Հոս կ'ուտի արդէն արտը իւրաքանչիւր անկողինի շուրջ:
Միսը կը կը հարթուի դաշտի: Տօքը կը սպառի:
Հիւթը կը պատրաստուի հոսիլ: Հոզը կը կանչէ:

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՐՃԱՐԱՆ

824. Կիներուն սէրը եւ կեանքը:
Թաւրուքակը արագ մը կը խմէ: Սրինգը
կը զգայրէ երեք շափ շարունակ. գեղեցիկ ընթրիքը:
Թմբուկը ոստիկանական վեպը կը վերցնէ:

Կանաչ ակունքեր, փշտիկ մը երեսի
ճշան կ'ընէ կոպի բոբբոֆուսի մը:

Ճարպը մագի
կը խօսի բաց բերանին շնագեղձով
հաւատք, սէր, յոյս՝ վզին շուրջ:

Երիտասարդ գլուխ՝ ազնիւ է թամբածու քինն:
Անոր երեք զարեյուրը կը վնարէ:

Մօրուքի սրբին կը զնէ մեխակներ,
երկծնօտ համոզելու:

Պէմօլ միմէօր. թիւ 35 սոնատ:
Երկու աչքեր կը մոնչեմ.
Շօփէնին արիւնը մի թափէք սրահը,
սրիկաները չկոխկոտեն վրան:
Քաւե'ց: Հէ՛՛, կիկի':


Դուռը հոսեցաւ - գնաց. կնիկ մը:
Անապատ շարքած: Քանանեան շագանակազոյն:
Անարատ: Երկիր քարայրաց: Բուրմունք մը կու գայ:
Հագիւ թէ բուրմունք:

Ան լոկ օդին քաղցր մէկ ճնշումն
է ուզեցիս վրայ:

Սոնֆուքիւն մը կը մանրափայլ ետեւէն:

ԿՈԹԹՅՈՒՆՑ ՊԵՆՆ

Գերմաներէնէ թարգմանեց՝
ՐԱՅՅԻ ՔԷՊԱՊՅԵԱՆ



Բ. ԲԷՊԱՊՅԱՆ

ԿՈԹԹՅՐԻՏ ՊԵՆՆԻ

ՄՕՏԵՑՄԱՆ ՓՈՐՉ ՄԸ

20րդ դարու գերման բանաստեղծութեան մեծագոյն ներկայացուցիչը՝ Կոթթյարիտ Պեննի (1886-1956), գրականութենէ ներս մուտք գործեց Առաջին Աշխարհամարտի նախօրեակին: Ինը բերթըւածներէ բազկացած իր անդրանիկ շարքը՝ «Ինչպե՞ս կան Հարիւն»-ը, յոյս տեսաւ 1912ին, իբրև 21րդ թուովի «Ալֆրէտ Բիխարտ Մայեր» հրատարակչութեան: Հակառակ իր փոքր, չբախու համար աննշան ծաւալին, շարքը ունեցաւ մեծ արձագանգ՝ գրական եւ բացասական աուսմով: Մայեր կը գրէ, որ «մամուլը երբեք այդքան բուռն կերպով չէ արտայայտուած բանաստեղծութեան մասին»: Ոմանց համար Պեննի սատանայական սնոյ մըն էր, ի՛նչ եւ իսկ արճարանային գրագէտ մը: Մանաւանդ՝ որ այս վերջին որակու մը յաճախ կը գոր-

ծածուէր երբորդ կամ չորբորդ կարգի գրողներուն համար: Ուրիշ բերթողներ, ինչպէս՝ Էրնսթ Շեմադլեր եւ Էլսէ Լասթեր-Շիւլցեր, անխառն չհասցումով մտածեցան երկին: Մանաւանդ արտայայտապաշտ գրականութեան ծաղկաբաղը յոյս տեսնելէ ետք, որուն մէջ տեղ գտած էին Պեննի ութ բերթուածները, երիտասարդ բերթողին համբաւը, առնուազն մասաւորականներու շրջանակին մէջ, աւելի ամբապնդուեցաւ:

Այդ ցնցումը, որ շարքին հրատարակութիւնը առաջ բերաւ, առաջին չերթին, անտարակոյս, ընտրուած նիւթին հետ կապ ունէր: Բայց ոչ միայն անոր հետ: Քանի որ Բիլթէն ալ «Ինչպե՞ս կան Հարիւն» վերնագիրը կրող բերթուած մը ունէր, ինչպէս նաեւ արտայայտապաշտ գրականութեան մեծերէն մէկը՝ Գեօրկ Հայմ,

1911ին շօշուփած էր նոյն նիւթը՝ «Յաւերժակամ օրը» կտորին մէջ: Նոյնիսկ Պատէր «Դիակը» քերթուածին մէջ ճշակած էր այդ աշխարհը: Ոչ, ցնցումը, որ թերեւս կայ մինչեւ այսօր, Պեննի ծննդեան 100ամեակին, միայն նիւթին հետ կապ չունի, որովհետեւ էական կը համարուի նաեւ անոր մշակման եղանակը:

Ահաւասիկ «Պզտիկ աստղածաղիկը» անմեղ վերնագիր մը, որուն մէջ կարծես բնութեան զոժքը պիտի հիւսուի: Փոխարէնը՝ երեւան կու գայ բժշկի աշփերով դիտուած դիագնոստիկան մը, զուտօք, զուրկ՝ որեւէ զգայութենէ: Եւ յանկարծ, վերջին այդ տողերը՝ բացագանչական նշաններով զգացումներ կը յայտնաբերեն: Ընթերցողը կը սպասէ, որ քարեջրատարին հասցէին ուղղուին այս բարեմաղթիւնները («եմէ... եանգչէ... խաղաղ»): մինչ անոնք կ'երթան աստղածաղիկին: Գարեջրատարին մարմինը կը վերածուի ծաղկամանի մը եւ խաղաղութեան մաղթանք կ'ըլլայ միայն ծաղիկին: Եթէ նիւթը ինքնին անտուր է շատերուն համար, անոր վրայ կ'աւելնայ լեզուի մակարդակի լուսաստուած փոփոխութիւնը՝ ծայրայեղ առարկայականէն զէպի զգացականը, յետոյ այդ երկու մակարդակներուն փոխադարձ վիճակումը, որ կ'ազատագէ իմաստը: Հատորին մէջ կայ ուրիշ անմեղ վերնագիր մը՝ «Ենդեցնլոց», ուր, փոխանակ աւանդաբար սպասուածին՝ դիագնոստիկան մը կը ներկայացուի: Միայն «Աստուծոյ տաճարը» եւ «Աստանային ախոռը» կը մասնանշեն բան մը, որ թերեւս գոյութիւն ունի նաեւ մարդու մը մարմինին մէջ, բացի անկէ, որ արդէն լեցուցած է երեք թաս... եւ շերտանիկ երիտասարդութիւնը ... տունտներու երիտասարդութիւնն է: «Եսափշիկի հարսնացուն» կտորին մէջ սիրոյ պատմութիւնը կը սկսի դիագնոստիկան սեղանին վրայ, ըսնի որ հոն է, որ սիրահարները առաջին անգամ կը հանդիպին իրարու: Համբարձումը, որ կայ հոն, կապ չունի մեր գիտցած Համբարձման հետ: Նաեւ «Գիշերուան սրճարանը» անկընկալուածէն տարբեր բան մը կը ներկայացնէ: Մարդիկ չկան հոն, փոխարէնը՝ կան

իրեր, — թաղութակը, թմրուկը, մարմնի մասերը՝ կանաչ սկտաներ, փշտիկ մը, երկու աչքեր:

Վերնագիրի եւ բովանդակութեան միջեւ վերը մատնանշուած հակասութիւնները աւելի եւս կը սաստկանան, եւ անհամատեղելի կառոյցներով, որոնք կը խախտեն սովորականը, ստեղծելով անհեթեթը. «Ճարպը մագի կը խօսի բաց բերանին շնագնդով», «...Մուք արիւնէն բարձի մը վրայ», «Միայնակ սեղանատամը պոռնիկի մը... միւսները՝ կարծես ժամագրուած ըլլային», «Եւ Աստուծոյ տաճարը եւ աստանային ախոռը հիմա դոյլին յատակը կուրծք կուրծքի», «...Միբանագոյն գոզնոց մը մնաւ արիւնէ», «...Վարդարանը կալուղ հանգոյցներու», եւ այլն:

Շարքին կարգ մը քերթուածները, օրինակ, «Մարդը եւ կինը խլիքի խլիկը կ'այցելեն» եւ «Ծննդաբերող կինը սրտը չունի» չունին վերնագրի եւ բովանդակութեան միջեւ եղած այդ հակասութիւնը: Պեննի առարկայական ոճով կը պատմէ տեսածները հոն, ուր տիրական են մարմնի փուլումը, քայքայումը, կործանումը, տիրապետումը ազդեցին: Շարքին վերնագիրը (փոխանակ գերմաներէն Leichenhaus բառը զործածելու՝ Պեննի նախընտրած է Ֆրանսերէն Morgue բառը) մեղով մը կ'ընդգծէ այդ տարօրինակ խտնուորդը հիւանդագինի եւ գեղեցիկի (հոս հաշուի առնուած է Ֆրանսերէն բառին գեղեցիկ հնչիւնը), որ այդքան դիպուկ է Պեննի այս ստեղծագործութեան համար:

Շարքին ուրուագծած յատկութիւնները հասկնալու համար անհրաժեշտ է բնապայտներէն սկսեալ քննել գրականութեան ըմբռնման հարցը: Բնապաշտ շարժումի գլխաւոր տեսարան Արնօ Հոյցի համաձայն, զբողի լեզուին սկզբնականէսը խօսող մարդն է, եւ քերթողը կրնայ լեզու-միմիկական միջոցներով միայն վերարտադրել մարդկային վարձումը կամ կրնայ վերարտադրելու փորձ ընել: Հիմնականօրէն տարբեր է խորհրդապաշտութեան ներկայացուցիչ Մտեֆան Կլօրկէի ըմբռնումը: Հոս լեզուն ոչ թէ բնութեան, այլ մտքի մէկ երեւոյթն է.

որ կը ձգտի մարդը ազատել բնութեան իր կախուածութենէն: Ուստի՝ կէօրկէ իր քերթուածներով չ'ուզեր բնութիւնը պատկերացնել, այլ կը փորձէ բնականը վերածել արուեստականի: Այնպէս որ, քերթուածը արուեստական իւրայատուկ աշխարհ մը կը ստղծէ, որ իր ոճաւորումով կը ծառայէ լոկ գեղեցիկին:

Եթէ լեզուն շէտքեան փոխարեւարկան գերլարումը կը կոչէ Պենն, ձեւով մը մտեցած կ'ըլլայ կէօրկէի ըմբռնումին: Նոյնպէս, Հաւասարիմ մ'ապով Մալարմէի ծանօթ սկզբունքներուն, իր «Վերթողութեան հարցեր» յօդուածին մէջ կը գրէ, թէ քերթուած մը ինքնաբերաբար ի յայտ չի գար, այլ կը կառուցուի, ուստի՝ անիկա արուեստական արտադրանք մըն է, որ պէտք ունի գիտակցութեան հսկողութեան: Եւ այդ գիրքորոշումը աւելի սուբ ձեւով կ'արտայայտէ, ըսելով, թէ բովանդակութեան ընդհանար անկումին մէջ արուեստագիտականը ինքզինքը կրնայ իբրեւ մօր բովանդակութիւն մը ըմբռնել եւ այս ապրումներն մշակել մօր ոմ մը»:

Բայց այս նոր ոճը քերթողութեան ընդունումը հասկացողութիւններով կարելի չէ բացատրել: Ըստ Պեննի, այդ ոճին համար, ոնային տարբերէ աւելի՝ մասնաւոր նուաճումն է կարեւորը: Եւ ան՝ այդ նուաճումը քերթողական լեզուին՝ կը կոչէ «հիացում»:

Պեննի համար իբրեւ քերթուած ընդունելի է միայն այն ձեւը, որ բրտերով հիացում կը ստեղծէ»:

Շարունակելով՝ ան կը խօսի բացարձակ փոքրածի» մասին, որ ուղղում է ոչ ոքի, որոշ աշխարհահայեացք չի քարոզեր, յոյսեր չ'արթնցնէր, որոշ նպատակի մը չի ծառայեր, եւ իբրեւ միակ յատկանիշ ունի «հիանալիօրէն միացում բառեր»: Եւ քերթուածին իւրաքանչիւր տունը «տեսակ մը հրաշք է», որովհետեւ անիկա վերածուումն է երկուրեւ եռներս՝ Եսին եւ անոր լեզուապաշարին: Լեզուապաշարով ո՛չ միայն հասկացողութիւն կը գոյանայ աշխարհի հետ, այլեւ՝ Եսին, որով կարելի կ'ըլլայ Եսին եւ աշխարհին փոխարարութիւնները շտափել լեզուի միջոցաւ:

Պարզելու համար իր այս մտածումը, Պենն յաճախ կը դիմէ հետեւեալ պատկերին, — ինչպէս ծովուն մէջ ապրող անողնաշար էակները շօշափուկներով կը կարգաւորեն իրենց յարաբերութիւնները շրջապատին հետ, մարդիկ ալ իրենց շօշափուկներով կը շօշափեն բառերը, որով անոնք կը վերածուին շիֆրի: Պենն կը մատնանշէ, թէ բաղդատական անկախութիւնը բառերու եւ գիրերու, որոնք բնութեան ու մտքի միջեւ գտնուող շեշտը կը կազմեն», կը բացայայտէ բնութեան հետ ունեցած մարդոց միջնորդումը յարաբերութիւնները: Ան, այսինքն՝ մարդը, իբրեւ սոսկական անհասկապ չի ստեղծեր իրականութեան հետ, այլ անհամար գիրքերու ընթերցման ատեն կը թափանցէ անիկ ներս եւ կը ստեղծէ նիւթերու եւ տեսակէտներու խառնուրդ մը: Ստեֆան կէօրկէի նուիրումը դասախօսութեան մը մէջ, Պենն կ'արտայայտուի շեղուի հանդէպ գոյութիւն ունեցող մօր զգացման» մտքին եւ կը շարունակէ. «Էկզուն յանկարծ մօր բանի մը վերածումը էր... անիկա այլիւս կեանքի պատկերը չէր եւ չէր համապատասխաներ իրականութեան, չէր ծառայեր անոր, այլ անիկա եղած էր փոխարեւարկան գերլարումը էութեան, ինքնին դարձած անբազալտելի արարած մը»: Եւ այս լեզուն պիտի բնագործ իրականութիւնը», «եթէ էր-անցնէր կապակցութիւնները»: կը միտուէր իրերուն հետ ունեցած բառերուն կապը, որ ընդունում էր ցարդ: Բառը այլեւս միայն իբրեւ հաղորդակցութեան միջոց պիտի շարժածուէր: Նոր ըմբռնումով՝ նկարչութեան եւ քերթողութեան մէջեւ որոշ կապեր տեսանելի կը դառնային:

Պենն յաճախ մէջբերած է Նիցշէն եւ ատիկա, վստահաբար, պատահականութեան արդիւնք չէ եղած: Մա՛նաւանդ այն վարկածներուն պարագային, զորս կարելի է գտնել Նիցշէի «Ողբերգութեան ծնունդը» աշխատանքին մէջ, ըստ որուն՝ միայն գեղագիտական երեւոյթը կրնայ աշխարհի գոյութիւնը արդարացնել, մասնաւորաբար անո՛ր համար, որ կեանքին հիմքը կը կազմեն պատրանքը, արեւտը, խաբէութիւնը, հեռանկարայինի

և սխալի անհրաժեշտութիւնը: Որքան ատեն որ արուեստը զեղազիտական պատրանք մը կը ստեղծէ, անիկա կը ծածկէ էութեան անդու նշանները եւ հակասութիւնները: Անիկա կը ներկայացնէ դասաւորուած, բոլորակալի աշխարհ մը, որուն մէջ մարդ էակը ինքզինքն ապահով կը կարծէ, մինչև որ իրեն համար յայտնի դառնայ, թէ եղածը պարզապէս պատրանք մըն է, եւ ան ինքզինքին հարց կու տայ, թէ ի՞նչ է իրեն համար արուեստին նշանակութիւնը կեանքին մէջ եւ կ'եզրակայնէ, որ արուեստը պատրանքի եւ իրականութեան միջեւ բան մըն է: Կեանքը իրբեւ միջոց կը գործածէ արուեստը մարդը խարելու եւ անով իր սեփական նպատակները իրագործելու համար. խարելու այդ ուժը իրեն կու տայ երկկիմութիւն մը, որ դադարեցնէ իր կախարդական ըլլալու հանգամանքը, նոյն ատեն իրեն տալով նոր, աւելի մեծ եւ ժամանակակից նշանակութիւն մը:

Վերադառնալով Պեննի եւ իր շիրաւանութիւնը քննելու» եւ «կապակցութիւններ սեղմել-անցնելու» մտածումներուն, ընդգծենք, որ երիտասարդ գրողը, հասնելու համար իր այս նպատա-

կին, կը դիմէ գրողութեան, որուն զոհն է ի՞նչը՝ լեզուն, եւ լեզուի կառուցուածքը: Գրողութիւն է, եթէ լեզուի տարբեր մակարդակներ յանկարծ գործածուին միասնարար: Յատկապէս, եթէ կրօնական դարձուածքներ գործածուին արտասովոր կապերու մէջ: Օրինակ, եթէ ծանօթ պատկերներ, ինչպէս՝ «աղցկանքերան», «երբանկալութիւն անդրանիկ սիրոյ», «արբեցութիւն եւ հայրենիք», «կիներուն սէրը եւ կեանքը», «հաւատք-սէր-յոյս», եւ այլն, երբեւնի անսովոր տեղեր: Եթէ իրարու յարմարող բառեր, բառակոյտեր առանց հիմնարկութիւն յանկարծ միացուին, կազմելով լեզուական տարատեսակ կառուցներ, եթէ գեղեցիկը տղեղին Հեա, կենդանին՝ անկենդանին, ստորինը՝ վսեմին, առօրեայ լեզուն՝ գրականին կապուին, շատ անգամ նոյն ատեն, նոյն քերթուածին մէջ՝ կը պարզուի գրողիչ երեւոյթ մը: Աւելին. այս մեւով, լեզուին մէջ կ'արտացոլայ կեանքին քառու: Եւ քարացած, իրենց նշանակութիւնը կորսնցուցած լեզուական կառուցներու քանդումը, ինքնին, նոր կարելիութիւններ ցոյց կու տայ՝ թերեւս ո՛չ կեանքին, բայց վտանգարար արուեստին մէջ:

ԲԱՊԻՆԻ ՔԷՊԱՊՈՒՆԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐՈՒՄԻԱՄ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Benn, Gottfried: Gesammelte Werke in acht Bänden, Wiesbaden, 1960, 1968

Böckmann, Paul: Gottfried Benn und die Sprache des Expressionismus, in "Der deutsche Expressionismus. Formen und Gestalten", Hg. Hans Steffen, Göttingen, 1965, S. 63-87

Eykman, Christian: Die Funktion des Häßlichen in der Lyrik G. Heyms, G. Trakls und G. Benns, Bonn, 1965

Nietzsche, Friedrich: Die Geburt der Tragödie, München, 1920

Schröder, Jürgen: Gottfried Benn — Poesie und Sozialisation, Stuttgart, 1978

Յ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ՄԻԼԱՆ ՔԻՒՆՏԵՐԱ —

ՍԵՒ ՀԵԳՆԱՆՔԻ ՎԱՐՊԵՏԸ

«Ոչ ոք պիտի խնդայ» պատմուածքին մէջ կը հանդիպինք վիճակի մը, որ իր կարգ մը եզրերով նման է «Կառուակը» վէպի կացութեան: Գլխիմա՝ Համալսարանի երիտասարդ դասախօս մը, որ մը նամակ կը ստանայ պարոն Չաթուրեթցիի անուն անձէ մը, որ իրմէ կը խնդրէ գրախօսել հրատարակութեան յանձնուելիք իր մէկ ուսումնասիրութիւնը, որովհետեւ «Տեսողական արուեստներ» հանդէսը տմն Չաթուրեթցիի ըսած է, որ եթէ Գլխիմա գըրականօրէն արտայայտուի, իրենք Համաձայն կ'ըլլան ուսումնասիրութիւնը սպելու:

Ուսումնասիրութիւնը արժէք չունի, սակայն Գլխիմա չ'ուզեր մարդը վերադարձիլ եւ քաղաքավար, բան շըսող նամակ մը կը գրէ: Սակայն Չաթուրեթցիի զինք կը հետապնդէ ամէն տեղ — Համալսարանը, տունը, եւ այլն: Եւ ինչ որ իրրեւ կատակ սկսած էր, կը վերածուի մղձաւանջի: Առիթով մը, Գլխիմայի բացակայութեան, Չաթուրեթցիի իր դուռը կը զարնէ եւ ընկերուհին կը բանայ, եւ Գլխիմա կը կարծէ, թէ գտած է լուծումը... զայն բարեկամօրայր կ'այպանէ, ըսելով, որ փորձած է բարեկամուհիին ժօտենալ, այնպէս որ, այլեւս չի կրնար նման խնդրանք ներկայացնել իրեն: Չաթուրեթցիի եւ անոր կիներ կը բողոքեն բազմաթիւ տեղեր, կուսակցական թաղային յանձնախումբը հարցաքննութեան կը կանչէ Գլխիման, եւ այս վերջինին բոլոր ճիգերը՝ բացատրելու, թէ եղածը թիւրիմացութիւն կամ կատակ մըն է՝ ի զուր կ'անցնին...: Վերջաւորութեան՝ Գլխիմա կը կորսնցնէ իր ընկերուհին եւ Համալսարանի պաշտօնը...:

«Սիմփոզիում» պատմուածքին մէջ կը հանդիպինք հինգ բժիշկներու, որոնք իրենց հերթապահութեան գիշերը կը խմեն ու կը ճառեն: Գլխաւոր բժիշկը որոշ տարիքի ու իմաստութեան հասած մէկն է, որ կը յարաբերի պատասխանատու բժշկուհիներէն մէկուն հետ: Հոն կը տեսնենք բժիշկ Հաւելը, որ նշանաւոր Տոն Ժուանի Համբաւ ունի եւ մահուան պէս է, «ամէն ինչ կ'առնէ»: Իրենց հետ է բուժքոյր Ալլապեթան, որ կ'ուզէ Հաւելի ուշադրութիւնը գրաւել, սակայն շարունակ անոր մերժումին կը հանդիպի...: Եւ, վերջապէս, իրենց հետ է ինքնահաւան երիտասարդ մը, որ կը քաշքշուի գլխաւոր բժիշկին ու Հաւելի կողմէ: Գիներութեան ու «վերլուծումներ» խնթի գիշերէ մը ետք, Ալլապեթան կը դառնն կազով թունաւորուած, սակայն կը փրկեն անոր կեանքը...: Գլխաւոր բժիշկը եւ Հաւել կը շարունակեն քաշքշել երիտասարդ բժիշկը:

ըսելով, թէ Ալլպպեթա ի՛ր պատճառով անձնասպանութիւն փորձած է, եւ թէ՛ Հաւելի ուղղուած անոր բոլոր գրգռիչ հրաւերները պարզապէս իր ուշադրութիւնը գրաւելու համար եղած են: Աւելի ուշ երեւան կու գայ, որ Ալլպպեթա ո՛չ թէ անձնասպանութիւն փորձած է, այլ չքնացած՝ սուրճը դրած է կրակին վրայ եւ թմրած: սուրճին ջուրը յորդելով մարած է կրակը եւ կապի փախուստը թու-նաւորման պատճառ հանդիսացած:

Այստեղ Քիւնտերա պերճախօս ենթախորագիր մը կը գործածէ, «Աճո-րոշուժիւնը ամէն ինչիս»: Եւ, խկապէս, այս մարդոց յարաբերութիւնը կամ կայտութիւնը այն չէ, ինչ որ իրենք կը կարծեն: Իւրաքանչիւրը, կացութիւն-ներն ու կեանքը ի՛ր ձեւով կը հասկնայ ու կը բացատրէ, եւ մէկէ աւելի ճշմար-տութիւններ երեւան կ'էլլեն, իսկ վերջին հաշուով՝ մարդիկ, իրենց սերերը, նոյնիսկ անձնասպանութեան փորձերը ծիծաղելի կը դառնան: Կարծէք կրկին կեանքը սեւ կատակներ կը խաղայ մարդոց հետ:

Բժիշկի Հաւել տասը տարի ետէ՞ պատճուածքին մէջ՝ Հաւել արդէն միջին տարիքը թեւակոխած մարդ մըն է, որ ջերմուկները կ'երթայ մայրամ-փամփուշտի գարձանման համար: Հաւել, որ խելօքցած է եւ նախկին Հե-տաբբերութիւնը չի տածեր կիներու նկամամբ, իրեն հանդէպ զգացած ան-տարբերութեան պատճառաւ կը սկսի հակազդել: Մէկ օրով կը կանչէ իր կիներ, որ իրմէ երիտասարդ, գեղեցիկ ու հանրածանօթ զերասանուհի մըն է: Եւ այդ օրուան թեւ թեւի պտոյտը, այդ պզտիկ գիւղաքաղաքին մէջ, պատճառ կը հանդիսանայ, որ յառաջիկայ օրերուն՝ զինք նախապէս անտարբերօրէն զի-տած գեղեցիկուհիները տարբեր տրամադրութիւններ ցուցաբերեն իրեն հան-դէպ... Հաւել այս դաղտնիքը գիտէ արդէն, այսինքն՝ կիները աւելի արժէք կու տան ա՛յն մարդուն, որ որոշ համբաւ ունի եւ որոշ նուաճումներ կատարած է արդէն, իսկ տղեկ ընկերակից մը, այս առումով, միմիայն աղէտի կրնայ առաջնորդել:

Սակայն այս երկար պատճուածքներուն ամէնէն հետաբբերականնե-րէն մէկը, անկասկած, «Էլտուրքու եւ Աստուածն է, որ թիւրիմացու-թիւններէ ստեղծուած կացութիւններ կը պարզէ կրկին:

Էտուրքու, նուաճելու համար իր սիրած աղջիկը՝ Ալիսը, ինքզինք իրրեւ հաւատացնել քրիստոնէայ կը ներկայացնէ անոր, սակայն, օր մը, եկեղեցիէն էլած պահուն կը տեսնուի եւ հարցաքննութեան կը կանչուի իր դասուսանդած զպրոցի տնօրէնութեան ու պատասխանատուներու կողմէ, որովհետեւ, որ-քան ալ սկզբունքով կրօնքը ազատ ըլլայ համայնավար վարչակարգի տակ, նոր սերունդի դատարարակութիւնը չի կրնար յանձնուիլ քրիստոնէայի մը...: Էտ-ւրքու գիտէ, որ իր հերքումը ոչ մէկ արդիւնք կրնայ ունենայ իր պատասխա-նատուներուն դիմաց, այդ պատճառաւ ալ կ'ըսէ, որ ինք հաւատացող մը ըլ-լալով հանդերձ համայնավարութեան յաղթանակին, իր մէջէն չի կրնար վեր-ցընել Աստուծոյ երկիրը: Պատասխանատուները առիթ կու տան իրեն, իր «վերադատարարակութիւնը չի յանձնելով տնօրէնուհիին, որ տղեկ, էտուրք-աին բաւական մեծ, հաւատացեալ համայնավար մըն է: Տակաւին, այդ նոյն տնօրէնուհին անցեալին պատճառ դարձած է էտուրքուի եղբոր համայնարա-նէն արտաքսման, երբ Ստալինի մահուան օրը էտուրքուի եղբայրը ծաղրած է անոր լացը՝ ընդմիջաւ հեռացած բուսակրին համար: Պատճութիւնը ծիծաղելի բնույթ կ'առնէ, երբ երեւան կու գայ, որ այդ տղեկ տնօրէնուհին լահազըը-ղըուած է էտուրքուով, եւ ոչ՝ անոր դատարարակութեամբ...: Քիւնտերա իր սեւ Հեգնանքը կը հասցընէ դազաթնակտին՝ այս երկուքին միջեւ տեղի ունե-ցած սենեակի տեսարանի մը լինթացքին: Էտուրքուի մարմինը չի կրնար ըն-դունիլ յառաջացող միջին տարիքի մերկացած տնօրէնուհին եւ, յանկարծ, այդ անձկութեան պահուն, կը պահանջէ անկեղծ այդ ուղղափառ տնօրէնուհիէն,

ծունկի գալ եւ տէրունական աղօթքը արտասանել... Աւելի՛ն. Ալիս, որ մինչ այդ Փիղիքական յարարերութիւններ չէ ուզած ունենայ էտուրբտին հետ, լսելէ ետք, որ ան հարցաբննութեան կանչուած է եւ իր հաւատքը չէ ուրացած՝ կը յանձնուի էտուրբտին...

Հետաքրքրականը այն է, որ Ալիսը եւս կարելի չէ քրիստոնեայ նկատել իսկական իմաստով: Ալիսի հայրը կուլիակ նկատուած է եւ նկատի ունենալով, որ քրիստոնէութիւնը եւս արգիլուած է համայնավարութեան կողմէ, Ալիս յարած է քրիստոնէութեան...



Ինչպէս կը տեսնենք «կատակը» վէպէն եւ «Ծիծաղիկ» սերերն պատմուածքներէն՝ Քիւնտերայի հերոսը որով սկեպտիկութեամբ կը յատկանշուի: Լուսավիթ, էտուրբտ կամ Հաւելի նոյն տիպարին տարբեր գրեւորումներն են կարծէք (իրենց այլազանութեամբ հանգերմ), եւ նոյն ձեւի հակազդեցութեամբ կը գիմարեն կեանքի մարտահրաւերը:

Կրնայ ըլլալ, որ նոյն ընկերութեան մէջ եւ պատմական-նոստրալանական-ընկերային նոյն իրականութիւններուն դիմաց գտնուելով, այս տիպարներուն խառնուածքը տուեայ կազմաւորուել կը ստանայ, որովհետեւ, վերջին հաշուով, Ջեմանէքի ստեղծած դժոխքն է, որ Լուսավիթը կը մղէ սիրարտնական արարքի մը մէջ կեդրոնացնելու իր տարիներու ատելութիւնն ու հակառակորդին նկատմամբ պահած մաղձը: Նոյնը կը պատահի էտուրբտի հետ, որ իր կեանքի ամբողջ ընթացքին (չհաշուած տնօրէնուհիին իր աւազ եզրօրը հասցուցած վնասը) վրայ ազդող վարչակարգի ներկայացուցիչը, այսինքն՝ տնօրէնուհին, կը մատնէ այնպիսի՝ ստորնացուցիչ կացութեան մը, որ մերկ ծունկի կու գայ՝ իր չհաւատարմութեամբ Աստուծոյն աղօթելու:

Սակայն խառնուածքային յատակ գիծ մը եւս ըլլալու է, որ հաւանաբար կը բխի Քիւնտերայի անձէն, որովհետեւ բժիշկ Հաւելի նման գառն փորձառութիւններէ չէ անցած, սակայն նոյն սինիզմը կը ցուցարբէ կեանքի հանդէպ, նոյն անտարբեր կեցուածքը՝ մարդոց հետ ազատօրէն խաղալու, եւ նոյն Փիլիքիական շեշտուածութեամբ գրեւորած հետաքրքրութիւնը՝ մարդկային յարարութիւններու ընթացքին...

Նման տիպարի մը ստեղծման պատճառները բազմաթիւ կրնան ըլլալ անշուշտ, գլխաւորը, սակայն, հաւանաբար Քիւնտերայի սերունդին այն յուսախաբութիւնն է, իրենց իսկ իշխանութեան հասցուցած վարչակարգէն: Քիւնտերա եւ իր երիտասարդ հերոսները միշտ ալ կը պատմեն իրենց պաշարն ու ակնկալութիւնները համայնավար վարչակարգէն: Այս մասին, աւելի ուշ, Քիւնտերա շատ աւելի ուղղակիօրէն պիտի խօսի «Ենթուրի» ու մտազմայն գիրքը հաստորին մէջ: Եւ, շեշտուածօրէն, Քիւնտերա իր հերոսներուն ճակատագիրը կը կապէ ամբողջ սերունդի մը ճակատագրին հետ, որոնք, իրենց իսկ ստեղծած հրէշը նուաճելով՝ կը փորձեն Փրակայի Գարունը բերել եւ, աւելի ուշ, նոր ու աւելի ուժեղ յուսախաբութիւն մը կ'ապրին:

Ջարմանախօսէն՝ Քիւնտերա գիտակից է իր հերոսին կացութեան եւ այս մէկը կը զգանք իր երկրորդական հերոսներուն ընդմէջէն: Լուսավիթի ամենամտերիմ ընկերներէն մէկը, տեղ մը երկար խորհրդածութիւն մը կը կատարէ եւ հետակայ զրոյց մը կ'ունենայ իրեն հետ եւ, մտաւորապէս, հետեւեալը կ'ըսէ՝ Գալվինի օրով, Փրենկի մէջ կը մերթապայէն կատակասեր երիտասարդ մը, որ զուարճութեան համար, Սր. Գիրքին մէջ կատակախառն նկատողութիւններ արձանագրած է: Երիտասարդը անհաւատ չէ, ոչ ալ որեւէ ատելու-

թիւն ունի գաւանանքին կամ անձի մը նկատմամբ...: Սակայն կը դատապարտուի մահուան: Աշխարհը բարեփոխելու կատարութեամբ ոտքի ելած մարդիկ չեն հանդուրժեր կատակ ու զուարճութիւն իրենց գաղափարաբանութեան նկատմամբ...: Եւ Լուսովիկի հանդէպ կեցուածքն այնչէս տեղէն կը բխի: Սակայն Լուսովիկ չի կրնար ընդունիլ, որ իր սրտին մէջ այլեւս սեր չկայ, այլ միայն՝ ատելութիւն:

Այսինքն՝ քրիտոնէական աշխարհայեացքով, աշխարհ մըն է այս մէկը, ուր այլեւս ներուժի կամ փրկութեան տօնի չկայ, եւ մարդիկ կը վնասուին ու կը վնասեն շարունակ...:

Եւ քանի որ սիրային յարաբերութիւնները զուտ ֆիզիքական նկարագիր կը ստանան, եւ կը երբեմն այնտեղութեամբ կը յատկանշուին, այդ պատճառով այն զուցէ, ընտանեկան կառոյցներու շենք հանդիպիր: Աշխարհ մըն է, որ չի ստեղծեր կամ չի նորոգուիր...:

•

Քիւնտերա 1975ին կը հաստատուէր Պրանսա: Մինչ այդ սակայն, իր շնորհիւ ուրիշ տեղ է գործը, 1973ին կ'արժանանար Պրանսայի մէջ հրատարակուած լաւագոյն օտար վէպի «Մետիսի» մրցանակին: 1976ին՝ իր «Մնաք քարովի հաւաքոյթը» վէպը եւս կ'արժանանար մրցանակի՝ «Փրեմիօ Մոնտելլօ», Իտալիոյ մէջ:

1979ին ան լոյս կ'ընծայէր «Կատակը» վէպէն ետք գրած իր ամենացայտուն, գուցէ եւ իր ամենակարեւոր գործը՝ «Էնիգմա»-ի եւ մտազման գիրքը: Այս հատորը պատճառ կը հանդիսանար, որ շեֆ կառավարութիւնը Զնձէր իր քաղաքացիութիւնը:

Սակայն ի՞նչ է «Էնիգմա»-ի եւ մտազման գիրքը: Ամբողջատիրութեան դէմ բողոք մը: Վէպի մարզէն ներս փորձառական աշխատանք մը: Քիւնտերայի աշխարհայեացքին, գրական, քաղաքական կամ փիլիսոփայական գաղափարներուն բացայայտումը...: Հասանարար այս բողոքը կան իր վէպին մէջ:

Աւելին. այս մէկը գործ մըն է, որ ամբողջովին կը համապատասխանէ այս յոգուածին սկզբնաւորութեան մէջընդմեջ Քիւնտերայի վէպի սահմանումին, ուր ինքնակենսագրական պատատիկներ ու խորհրդածութիւններ կան, ժողովուրդի պատմութեան շուրջ մտածումներ ու վերլուծուածներ, ինչպէս եւ՝ ստեղծուած տիպարներ եւ... թեմաներ:

Միլան Քիւնտերայի «Էնիգմա»-ի եւ մտազման գիրքը գործ մըն է, որ հիմնուած է տարբերակներու (variation), գուցէ պէտք է ըսել՝ տարբերակներու-տարափոխութիւններու սկզբունքին վրայ: Վէպի հատուածներէն մէկուն մէջ հեղինակը կը խօսի Հօրը մասին, որ իր կեանքին վերջին շրջանին տարուած եղած է Պէթովիկի սօնատային տարբերակներու վրայ կատարուած աշխատանքով: Այս մէկը Քիւնտերայ կը նմանցնէ ճամբորդութեան մը, որ կ'ուղղուի դէպի երկրորդ անասմանութիւն, այսինքն՝ դէպի ներքին այլազանութիւններ, որոնք թաքնուած կ'ըլլան ամէն ինչի մէջ: Ըստ իրեն, Պէթովիկն իւրաքանչիւր տարբերակի հետ հետզհետէ կը հեռանայ սկզբնական թեմայէն, իսկ վերջին տարբերակը առաջինին կը նմանի այնքան՝ որքան վարդ մը պիտի նմանի պատկերին, երբ կը դիտուի խոլորացոյցի տակ: Հեղինակին մտածումը պարզ է — յօրինողը, իւրաքանչիւր տարբերակի հետ, ներքին նոր մակարդակ մը կը նուանէ, եւ այս նոր յօրինումը որքան ալ արտաքինապէս շնամանի նախ-

կինին կամ նոր գիծ մը զարգացնէ, փաստօրէն նոյն խորքէն կը բխի: Այս հիմամբ ալ ան կ'աւելցնէ:

«Այս ամբողջ գիրքը վէպ մըն է՝ տարբերակներու ձեւին տակ: Առանձին բաժիններ կը յաջորդեն իրարու, նմանելով ճամբարդութեան մը անանձին հանգրուաններուն, որոնք կ'ուղղուին զէպի թեմա մը, մտածում մը, միակ կացութիւն մը, որուն զգացողութիւնը հետզհետէ կը կորսորդի տարածութեան մէջ:

Այս մէկը վէպ մըն է Թամիմային մասին, եւ ամէն անգամ, երբ հոն Թամիմային չենք հանդիպիր, կ'ըլլայ վէպ մը Թամիմային համար: Ան զլիսաւոր անձնաւորութիւնն է եւ զլիսաւոր հանդիսականը, եւ այն միւս բոլոր պատմութիւնները կ'երևին իբրեւ տարբերակներ իր պատմութեան, եւ կը մէկտեղուին իր կեանքին մէջ, ինչպէս պիտի մէկտեղուէին հայելիի մը մէջ» (էջ 165):

Եւ այս չէի սքսորականներուն փորձառութեանց կը հանդիպինք, որոնց կեանքը առկախ տեղ մը կը շարունակուի՝ իրենց ապրած վայրերուն եւ հայրենիքի յուշերուն միջեւ, վայրկեան մը իրենց արտասահմանեան փորձառութիւններուն հետ ենք, քիչ ետք՝ Փրակայի իրենց կեանքը կը պատկերացուի, եւ երբեմն այս երկուքը նոյնքան իրական են եւ նոյնքան միատեղ, ինչ որ իրենց ճամբարտութիւնը կը պատկերացնէ: Եւ խնդուք ու յատկապէս մոռացման թեմաները շարունակ կը յայտնուին այս մարդոց անհատական ու հասարակական կեանքին մէջ:

Հետաքրքրական է այս «վէպը», որուն տարբեր հատուածներուն մէջ կը խօսուի տարբեր մարդոց մասին, զբաղանդութեան, վէպի, լեզուի, ժողովուրդի մը պատմութեան ու ապագային եւ յարակից այլ հարցերու:

«Վէպը կը բացուի «Կորսուած նամակներ» բաժինով: 1948 Փետրուարին, Փրակայի մէջ, պարոք պայտի մը պատշգամէն Գլեմենթ Կոթուալտ խօսք կ'ուղղէ ժողովուրդին. ցուրտ օր մըն է եւ Կոթուալտի գլուխը պաշտպանուած չէ: Կողքին կանգնած է Գլեմենթիսը, որ իր անձնական գլխարկը կը դնէ Կոթուալտի գլխու: Լամայնավար կուսակցութեան քարոզչական բաժանմունքը տասնեակ հազարաւոր նկարներ կը ցրուէ այս պատմական հասարակութիւն, ուր Կոթուալտ, շրջապատուած իր ընկերներով, ճառ կը խօսի: Չորս տարի ետք, Գլեմենթիս կ'ամբաստանուի դատաւանութեամբ, կը դատուի եւ կը բարձրացուի կարգան: Կուսակցութեան քարոզչական մեքենան բոլոր նկարներէն կը վերցնէ Գլեմենթիսը, սակայն իր գլխարկը, ճակատագրի դառն հեղանակով, կը մնայ Կոթուալտի գլխուն:

Միեւնոք, որ տուեալ գործին մէջ երեցող գլխաւոր տիպարներէն մէկն է, կը պատմէ այս սերունդին պատմութիւնը: Կոթուալտը ծափահարող հարիւր հազարաւորներուն մէջ կայ աշխուժ ու խելացի երիտասարդութիւն մը, որ նոր ընկերութիւն մը ստեղծելու իր խանդավառութեան մէջ առաջ կը բերէ հովուերգութեան վայր մը, որ աստիճանաբար կը վերածուի ընդարձակ բանտի մը, որովհետեւ այդ գրախտին՝ հովուերգային մէջ, կուսակցութեան մեքենան ոչ մէկ քննադատութիւն կ'ընդունի (այլապէս հովուերգային յղացքը կը խախտի), եւ նոյն այդ երիտասարդները կ'անդրադառնան, որ հրէշ մը ծնունդ տուած են:

Չ՞ոտարուան պայթար մը տեղի կ'ունենայ, որպէսզի այդ վարչակարգին ծնունդ տուած մարդիկը կարենան իրենց ճակատագրին վերատիրանալու գիրքերուն հասնիլ եւ Փրակայի Գարունը բերել...: Մնացեալը պատմութիւն է արդէն. ռուսական հրատապներու մուտքը կը քանդէ այդ երազը եւ մարդիկ կա՛մ արտասահմանի ճամբան կը բռնեն եւ կամ ալ կ'աքսորուին ներքին դատաւանները ու... բանտերը:

ձակատազրի հեղանակով մը, այն պատշաճով, ուր կոթուալտ իր ճառը խօսած է, տարիներ առաջ եղած է Ֆրանց Քաֆքայի հօր վաճառատան մուտքը, եւ հոն յաճախ կանգ առած է Քաֆքան ու գիտած Փրահան:

Ներխուժումէն ետք՝ ուսերը, 1969ին, իշխանութեան գլուխ կը բերեն Կիւսթաւ Հիւսաքը, որ Ձեխոսլովաքիոյ Նոյնախազանը կ'ըլլայ: Ըստ Քիւնտերայի՝ «Եթէ Ֆրանց Քաֆքա մարգարէն է առանց յիշողութեան աշխարհի մը, Կիւսթաւ Հիւսաք անոր ստեղծիչն է»: Ձեռք նախազան ընկերով՝ ուսերը ոչ միայն քաղաքական ընդդիմութիւնը կը փորձեն քայքայել, այլեւ կը փորձեն աւելի շօշուփելի եւ տեւական բան մը ձեռք ձգել, այսինքն՝ քննել շեխական մշակութի ու պատմութեան ասանձնայատկութիւնները: Ըստ Հեղինակին, այս իմաստով յատկանշական է այն պարագան, որ Հիւսաք համալսարաններէն եւ ուսումնասիրութեան կեդրոններէն գործէ արձակել կու տայ 145 պատմաբաններ, եւ կ'աւելցնէ, թէ գրոյցներ կան, որ արձակուած իւրաքանչիւր պատմաբանի դիմաց՝ բարձրացած է կենդանի մէկ արձանը: Ահա անոնցմէ մէկն է, որ օր մը, 1971ին, կը հանդիպի Քիւնտերայի եւ կ'ըսէ.

«Լուծարքի հեքարկելու համար ժողովուրդ մը, առաջին հերքին պէտք է չնքել անոր յիշողութիւնը: Քանզի անոր գիրքերը, մշակոյթը, պատմութիւնը: Ապա մէկը ցոր գիրքեր քող գրէ, մոր մշակոյթ մը արտադրէ, նոր պատմութիւն մը յօրինէ: Շատ չանցած ազգը պիտի մոռնայ, թէ ինչ էր եւ ինչ կար: Անոր շրջապատը գտնուող աշխարհը աւելի շուտ պիտի մոռնայ զայն»:

Ապա կ'աւելցնէ. «Արդեօք ճիշդ է, որ ժողովուրդ մը չի կրնար անցնիլ կազմակերպուած մոռացումի անապատը»:

«Ենթուէի եւ մոռացման գիրքը» վէպի թարգմանութեան առթիւ, Ֆիլիփ Բոթի շնորհուած հարցազրոյցի մը ընթացքին (1975), Քիւնտերա կ'ըսէ, թէ մարդ գիտէ, որ ինք մահկանացու է, սակայն կը կարծէ, թէ իր ազգը անմահ է: Թուական ներխուժումէն ետք, իւրաքանչիւր շեխ զէժ յանդիման կը գտնուի այն կարեկրութեան, որ իր ժողովուրդը օր մը կրնայ ընչուիլ Եւրոպայի երեսէն, ինչպէս 40 միլիոն ուզբանացիներ աստիճանաբար ընթուեցան ու կը ընթուին անցնող կէս դարուն ընթացքին...

Աւելին. Քիւնտերա կեդրոնական Եւրոպան շատ կենսական կը նկատէ եւրոպական քաղաքակրթութեան համար (այսինքն՝ Ձեխոսլովաքիան, Լեհաստանը, Հունգարիան եւ Աւստրիան), եւ նկատի ունենալով, որ կեդրոնական Եւրոպայի երեք քառորդը գրաւուած է սուսերուն կողմէ եւ կ'ենթարկուի սուսացման, վախ կը յայտնէ, որ այս պարագան կրնայ նախանշանը ըլլալ ամբողջ Եւրոպայի անկման...

Եւ Քիւնտերա երկար կանգ կ'առնէ այն երեւոյթին ցիմաց, թէ մոռացման հոլովոյթը ինչպէս կը գործէ անհատական թէ հաւաքական մակարդակներու վրայ:

Ինչպէս թարգմանուած բաժինին մէջ կը տեսնենք, Միրեք ամէն ճիշդ թափած է Ձտեան ընթելու համար իր անցեալէն եւ յիշողութենէն, իբրեւ ոչ հաճելի երբեմնի փորձառութիւն:

Ճիշդ հակառակը կը պատահի Թամիւնայի պարագային, որ ամուսինին հետ անցած է սահմանը՝ ուսական ներխուժումէն ետք: Քանի մը տարի ետք, ամուսինին առողջական վիճակը կը վատթարանայ եւ կը մեռնի: Թամիւնա կը փորձէ անձնասպան ըլլալ, սակայն չի յաջողիր, եւ ատկէ ետք ամէն ճիշդ կը թափէ ամուսինը եւ անցեալը յիշելու համար (անդրադառնալով, որ անցեալը աստիճանաբար կը գուճաթափի եւ կը կորսուի), այս պատճառով ալ բազմա-

Թիւ զոճոդութիւններ յանձն կ'առնէ, Փրակայէն բերել տայու համար իր օրագրութիւններն ու անձնական թուղթերը, սակայն չի յաջողիր, ինչ որ զինք կը մղէ յուսահատութեան...

Փամինայի մահը կը տեսնեց երազանման, չիչ մը ֆանրասքիկ զլուխի մը մէջ, որ խորհրդանշական եզր մը ունի ինքնին: Փամինա կը տարուի աստէն տասներկու տարեկան պատանիներով բնակուած կղզի մը, որուն մթնոլորտին ու բնակիչներուն տրամադրութեանց պէտք է յարմարի, այլապէս հայտնաւերջի կ'ենթարկուի այդ տղոց ու աղջիկներուն կողմէ: Հեղինակը ինք ալ ճիշդ չի՝ կրնար բացատրել այս պատկերին ճշգրիտ իմաստը, սակայն այս մասին կը խորհրդածէ վէպի՛ն իսկ մէջ:

Հօրը մահուան ատեն՝ պատկերասփիւռը ցոյց կու տայ հանդիսութիւն մը, ուր փոքրիկներ կ'երգեն եւ պատուոյ պիռների կոչում կու տան Հրեաքի, մինչ ան հաս մը խօսելով կ'ըսէ. «Փոքրիկներ, դուք էք ապագան», եւ կ'աւելցնէ. «Փոքրիկներ, երբեք ետեւ մի նայիք»: Ըստ Քրիստեանայի.

«Փոքրիկներ, դուք էք ապագան», — ըսաւ, եւ հիմա կ'անդրադառնամ, որ ըսել չէր ուզեր ա՛յն՝ ինչ առաջին հայեացքով կը թուի: Պատճառը, որ փոքրիկները ապագան են, ա՛յ թէ որովհետեւ ամենք օր մը պիտի մեծնան: Ո՛չ, պատճառը ա՛յն է, որ մտրդկուփիւթը տակաւ կ'ուզողուի անշարժ անտարբերութեամբ ու զգուշեամբ, եւ մանկութիւնը ապագայի պատկերն է: «Փոքրիկներ, երբե՛ք ետեւ մի նայիք», — զոռաց, եւ ինչ որ ըսել կ'ուզէր, թէ երբեք թայլ պիտի չտայ, որ ապագան փուլ գայ անցեալի ծանրութեան տակ: Մանուկները, վերջի վերջոյ, ոչ մէկ անցեալ ունին:

Եւ այդ մանուկները կամ մանկացուած մարդիկն են, որոնք կը խեղդեն կամ յուսահատութեան մէջ կը շեղագցնեն անոնք՝ որոնք չեն ուզեր իրենց անցեալը մոռնալ կամ անհատականութեանն ու ձգտումներին հրաժարել: Նման այլաբանական աշխարհի մը ու ջուրերու մէջ կը խեղդուի Փամինա:

«Ենթոյնքի եւ մոռացման գիրքը» Հատորին մէջ, Քրիստեանայ յաճախ կը խօսի խմբակցութեան մը զուրմ մնալու հոգեբանութեան մասին: Այս պարագային՝ խմբակցութիւնը Համայնավար կուսակցութիւնն է, որ այս օրերու ճիշդ երիտասարդութեան մարմնացումը հանդիսացած է: Եւ ո՛չ միայն այդ, այլեւ՝ անմիջական ու ընկերային շրջանակը: Եւ երբ Քրիստեանայի հերոսը կը սկսի որոշ հարցումներ տալ կուսակցութեան կամ երկրի ղեկավարման շուրջ, ինքզինք անմիջապէս շեղագցուած եւ աննախանձելի դիրքի մը մէջ կը գտնէ...

Այս կացութեան կը հանդիպենք թէ՛ «Կատակը» վէպին եւ թէ «Ենթոյնքի եւ մոռացման գիրքը» Հատորին մէջ: Եթէ «Կատակը» վէպին մէջ երիտասարդ Հերոսին մէկ անձեզ կատակը զինք աննշկ կացութեան կը մատնէ, «Ենթոյնքի...» Հերոսներէն Միրեք, որ ազատութեան մթնոլորտին մէջ, պատկերասփիւռէն՝ ընկերութեան եւ կուսակցութեան թերինքը կը քննադատէ, ուստի հրատապեցու ներքու մտմէն ետք անկարելի կացութեան մը մէջ կը գտնուի: Զինք գործէն կ'արձակեն եւ պատկերասփիւռի փայլուն թղթակիցը կը հարկադրուի աշխատիլ շինարարական խմբակի մը մէջ, այսինքն՝ կը նետուի տեղ մը, որ ոչ մէկ աղերս ունի իր մտադրական աշխատանքին հետ: Տուեալ գործին մէջ նման փորձառութիւն մը կը պատմէ Քրիստեանայ, որ ուստի ան ներքու մտմէն ետք ինք եւս կ'արձակուի գործէն եւ իշխանութիւնները ամէն ճիշդ կը թափեն, որ ոչ մէկ չբարբի, ոչ մէկ ռատիոկայանի կամ ոչ մէկ պատկերասփիւռի կայանի մէջ յայտագիր ու նենայ: Եստ երիտասարդ աղջիկ մը, որ թերթի մը մէջ կ'աշխատի, կը յաջողի կեղծանունի մը տակ իրեն սինակ մը ապահովել... աստղագուշակութեան գլուխին տակ: Եւ ինք ալ կը ծիծաղի իր

կացութեան վրայ, տեսնելով մարդ մը, որուն անունը ջնջուած է «պատմութեան, գրական տեղեկատուներէն, ճոյնիսկ հեռաձայնի տեսրակէն», յանկարծ այլ անունի մը տակ կը վերակենդանանայ՝ հարիւր հազարաւոր համայնավար երիտասարդներու աստղագուշակութեան մեծ զազտեխքները փոխանցելու համար...

Կուսակցական շրջանակներէ դուրս գրուելու իր կացութիւնը Քիւնտերս կը ներկայացնէ շուրջպարի պատկերով:

«Շուրջպարը կախարդանք է. անիկա մեզի կը խօսի մարդկային յիշողութեան հազարամեակներու ընդմէջէն»:

Շուրջպար ըսելով՝ Քիւնտերս կ'ակնարկէ շրջանակաձեւ, ամբողջ ու գոց բոլորակ մը կազմած պարին, որ ցոյցերու կամ որոշ հանդիսութիւններու ընթացքին կը կատարուի եւ աւելի թաքուն խորհրդանշան մը կը հանդիսանայ: 1948ի դարնան՝ համայնավարներու իշխանութեան տիրացման առթիւ, իր երիտասարդ ընկերներուն հետ, Քիւնտերս պարած է ծխակատարային այդ շուրջպարը, որ խորունկ միութեան մը եւ ամբողջութեան մը փորձառութիւնը կը փոխանցէ: Եւ օր մըն ալ, դուրս գրուելով համայնավար կուսակցութենէն, դուրս կը մնայ այդ շուրջպարէն: «Այն ատեն անդրադարձայ շրջանակի կախարդական յատկութիւններուն: Զգէ շարքը եւ որեւէ ատեն հոն կրնաս վերադառնալ. շարքը բաց կազմութիւն-դասաւորում մըն է: Ասկայն անգամ մը, որ շրջանակը կը գոցուի՝ վերադարձ չկայ»:

Եւ այդ անվերջանալի, ամբողջ հրապարակներ թնդացնող շուրջպարերէն երկու տարի ետք, համայնավար կուսակցութիւնը եւ համայնավար դատարանն մը ժողովուրդի թշնամի կը նկատեն գերիբապաշտ արուեստագէտ Զաւեն Գալստերան եւ կ'որոշեն կախել զայն: Անտրէ Պրոթոն՝ բաց նամակով մը կը խնդրէ բանաստեղծ Փօլ Էյլի արէն զօրավիզ կանգնել Գալստերային եւ պահանջել իրենց գերիբապաշտ ընկերով ազատ արձակումը, «Ասկայն էլիւար բազմազբազ էր՝ պարելով այն հսկայական շուրջպարին մէջ, որ շրջապատած էր Փարիզը, Մոսկուան, Վարշաիան, Փրական, Սոֆիան եւ Աթէնքը, բոլորպատուած էր աշխարհի բոլոր ընկերավարական պետութիւնները եւ բոլոր համայնավար պետութիւնները, շատ գրագած էր արտասանելով եզրայրութեան եւ ուրախութեան մասին գրուած իր բանաստեղծութիւնները: Կարդալէ ետք Պրոթոնի նամակը, էլիւար երկու քայլ կոզմնակի գնաց, մէկ քայլ առաջ, շարժեց գուլիը՝ մերժելով կոզմնակ կանգնիլ ընկերոջ մը, որ դաւանանած էր ժողովուրդին («ԱՄԻՈՆ» 19 Յունիս 1950):

Բացայայտ է այն դառնութիւնը, որ վերողբեալ մէջբերումին մէջ, Քիւնտերս կը գրանորէ տաղանդաւոր բանաստեղծին նկատմամբ, սակայն այս մէկը եւս իր սերունդին յուսախարութեան տուն տունը պատճառներէն մէկը կը հանդիսանայ:

* *

Ինչպէս իր նախորդ գործերուն մէջ, սեւ կամ դառն հեղանաքը անխնայ կերպով կը գործէ «Խեղճութիւն եւ մոռացման գիրքը» հատորին մէջ: Խորագիրը պերճախօս է ինչքին՝ վէպը խնդուքի եւ մոռացման գիրք մըն է, իսկ մոռացում մը, ինչպէս անդրադարձանք, յիշողութեան ջնջումը առաջադրող մոռացում մը ըլլալով, այս խնդուքին նկարագիրը ցոյց կու տայ: Այսինքն՝ լեզու, ազգակող, լացող ու բողբող խնդուք մը, որ կը տարածուի մէկէ աւելի մակարդակներու վրայ, երբեմն իր մանգաղին տակ առնելով նոյնիսկ գրական որոշ հոսանքներ, շարժու մներ կամ ուղղութիւններ...

Վէպը կը բացուի կոթուայտի ճառով: Կրկին պէտք չկայ պատմելու այդ պատահարը, սակայն ճակատագրի զարմանալի հեղանակով մը, իբրև զաւանակապատեմ «Գլխաբեր զլիտարկը, հակառակ այս վերջինին մաքրագործութիւն» պատմութեանն եւ պատմական լուսանկարներէն, կը մնայ կոթուայտի զլխուն...:

Փաստօրէն, նման մանրամասնութիւն թող զործ մը, իր առաջին իսկ շրջանով, յստակ ուղղութիւն կամ միտում մը ճշգրտեմ կ'ըլլայ...: Եւ մինչեւ վերջ ալ յստակօրէն չի բնորոշուիր՝ այս հեղանակը մարդոց կ'երթայ, վարչակարգի՝ մը, զաղափարախօսութեանն, պատմութեանն... Թէ՛ այս բոլորին:

Պարզ է, որ այս մէկը կանխաձրագրուած անորոշութիւն մըն է, որովհետեւ այդ հեղանակը կը զործէ նշեալ բոլոր մակարդակներուն վրայ: Այսինքն՝ «Կատարել» վէպին առանցքը կազմող հեղանակն է, ուր մարդոց կազմակերպած խաղը կամ կատակը, յաճախ բազմապատկուելով ու ծաւալելով, կը վերածուի պատմութեան կատակին, որ ենթականերու կեանքին ու ճակատագրին հետ կը խաղայ:

«Եւնդուքի...»-ն մէջ Գրիւնտերա տեղ մը կը պատմէ, թէ հայրը, իր կեանքի վերջին օրերուն ինչպէս կը սկսի բառեր մոռնալ, չկարենայ խօսիլ, համբանայ: Եւ հեղինակը, հօրը լռութիւնը կամ համբացումը կը նմանցնէ զործէ արձակուած 145 չեթ պատմադէտներուն պարտադրուած լռութեան:

«... Ազգ մը, որ կը կորսնցնէ գիտակցութիւնը իր անցեալին, հետեւողները կը կորսնցնեն իր ինքնութիւնը: Այնպէս որ, քաղաքական կացութիւնը բնորոշում լուսաւորած է պարզ, բնագանցական օրէնք մոռացումսին, գոր կը դիմագրաւենք ամէն օր, միշտ, առանց անդրադառնալու: Քաղաքականութիւնը կը դիմագործէ բնագանցութիւնը անձնական կեանքին, անձնական կեանքը՝ բնագանցութիւնը քաղաքականութեան»:

Պարզիկ փակագիր մը բանալով՝ տեղին է նշել, որ լռութեան դատապարտուելու, համբացման այսպիսի վիճակի մը կը հանդիպենք կապրիէլ Կարսիս Մարքէզի «Էլարիւր տարուան մեմուրիւն» վէպին մէջ, երբ Մաքրոնայի բնակիչները կը սկսին իրերու անունները մոռնալ, իրերուն եւ կենդանիներուն վրայ անոնց անունները գրել, աւելի ուշ՝ նոյնիսկ լեզուն մոռնալով...:

Իսկ երբեք զարմանալի չէ այս նմանութիւնը կամ զուգահեռը, որովհետեւ մինչ Գրիւնտերա իր առեւալ զործը ամբողջատիրութեան դէմ բողոք մը կը նկատէ, միւս կողմէ՝ Մարքէզի բոլոր զործերը գոյամպիական եւ Հարաւային ամերիկեան ամբողջատիրութիւններուն կամ բռնատիրութիւններուն կ'անդրադառնան: Փաստօրէն, ասոնք նոյն մետալին երկու երեսներն են եւ, հակառակ արտաքին, զաղափարախօսական տարբերութիւններուն, նոյն ճնշող, ամբողջատիրական վարչակարգերու տակ ապրող մարդոց ողբերգութիւնը կը պարզեն...: Գուցէ այս պատճառով ալ, վերջին քառօր զարու ամենաշահեկան եւ ուժական վիպական ստեղծագործութիւնները կու գան Արեւելեան Եւրոպայէն եւ Հարաւային Ամերիկայէն:

Փակելու համար այս բաժինը, կ'արժէ օրինակ մը տալ, որ կը բացայտէ իրենց իրականութիւններէն իսկ թիւած այս զուգահեռը: «Եւնդուքի...»-ն մէջ Գրիւնտերա կը պատմէ, թէ ինչպէս յանկարծ կը դադրի գոյութիւն ունենալէ. իր անունը կը ջնջուի հետամայնի տեսարակէն, գրողներու միութեան ցանկէն եւ նման օրհէ տեղէ, ուրկէ կարելի ըլլայ իր մասին ստուգում թեան ցանկէն: Իսկ «Էլարիւր տարուան մեմուրիւն» մէջ Մարքէզ կը պատմէ հրապարակային ցոյցի մը պատմութիւնը, ուր ցուցարարները փամփուշտի բռնուելով կը ջարդուին: Վերապրողներէն մէկը, յաջողող օրերուն զուր կը փնտռէ դէպքին յիշատակումը որեւէ թերթի կամ լրատուութեան մէջ: Պաշտօնապէս նման բան չէ պատահած եւ պատմութեան մէջ նման իրողարձուութիւն

չի յիշատակուիր... Ահա այսպիսի ողբերգական ճշմարտութիւններէ ծնունդ կ'առնեն այս վէպերը, յիշողութեան ու մոռացումի թեման կրկին ու կրկին արծարծելով...

Կրնայ ըլլալ, որ այս պատճառաւ իսկ, դառն Հեղեանքը կամ Ծաղրը, Քիւնտերայի գլխաւոր գէնքերէն մէկը կը մնայ, գուցէ միակ կամ ամենաազդու գէնքը:

«Եննդուքի...» մէջ, գոյատեւելու իր անձնական պայքարը պատճառ առնել, Քիւնտերա կը պատմէ համայնաժար պատասխանատուի մը պատմութիւնը, որ օգնականէ մը կը խնդրէ իր հորոսմովը եւ արագան հասկնալ նշանաւոր աստղագուշակէն (անշուշտ գաղտնի), որ ծոյնինքն Միլան Քիւնտերան է: Այդպիսի պաշտօնատարներ են, որոնք ռուսական հրատարակչութեան ներխուժումէն ետք կը փորձեն անգործ պահել Քիւնտերան... եւ այդ մարդուկը կը սկսի Հետեւիլ աստղագուշակ Քիւնտերայի ցուցմունքներուն:

«Կատակը» վէպին մէջ կը հանդիպինք հուսակցական այլ պաշտօնատարի մը, որ... եկեղեցականներու զերը ստանձնած է, այսինքն՝ որպէսզի ծնողները իրենց նորածինները կաթողիկէ եկեղեցին յատնին՝ կնքուելու համար, իրենք տիպար քաղաքացիներ կնքուու նմանօրինակ ծիսակատարութիւն մը ստեղծած են...

Սակայն Քիւնտերա իր Հեղեանքը երբեմն կը հասցնէ բիրտ չափերու, երբ ծունկի եկած համայնաժար մերկ անօրէնուհիին աղօթքին պէս գէպքեր կը պատմէ, որոնք բազմաթիւ հակասութիւններ կամ փարատուներ կը գրանւորեն...



Ինչպէս Քիւնտերա բացայայտ կը դարձնէ, «Եննդուքի...» հիմնական ատենցքը ամբողջատերական վարչակարգն է, որ մարդոց յիշողութիւնը ջնջելով, զանոնք կը դարձնէ ժողովուրդ մը՝ կազմուած մանուկներէ, որոնք, իրենց կարգին, կը խեղդ են յիշողութիւնը վերականգնելու ամէն փորձ եւ ամէն հասունութիւն...

Հաս Քիւնտերայի, այս մէկը կը փորձեն ամէն տեսակի ամբողջատերական կորզերը՝ ըլլան համայնաժարական, իսլամական կամ այլ... Եւ մարդոց ամբողջ գասակարգ մը կը ստեղծուի, որոնք ֆանաթիզմներ են կամ... սկեպտիկներ:

Դժբախտաբար, Քիւնտերայի եւ իր սերունդին այս աշխարհահայեացքը, որ գլխաւորաբար կը բխէր մօտ 20 տարի առաջու ան իրենց հաւաքական փորձառութենէն, Հետզհետէ աւելի հիմնաւորուեցաւ, եւ պարսիկներու իսլամական վերազարթօնքը, իր պատանիներու եւ չափահաս մանուկներու ամբողջ մոլեռանդութեամբ, ասոր լաւագոյն ապացոյցը կը բերէ:

Քիւնտերա կը ներկայացնէ թէ՛ այդ ուղղափառ համայնաժար մոլեռանդները եւ թէ՛ իր միւս Հերոսները, որոնք սկեպտիկութեամբ կը յատկանշուին: Անգամ մը անդրադարձանք այն երեւոյթին, որ Քիւնտերայի բոլոր գլխաւոր Հերոսները՝ Գլիմա, Հաւելլ, Լուսիկ, եւ այլն, շեշտակիօրէն նշեալ սկեպտիկութիւնը կը գրանւորեն եւ կը հակադրուին իրենց երկրի վարչակարգին, ընկերութեան եւ մտերմանց ուղղափառներուն:

Անշուշտ, որոշ յոռետեսութիւն կայ Քիւնտերայի բոլոր գործերուն մէջ եւ ինք կը գիտակցի այդ երեւոյթին: Չնիս վիպասանին Հերոսները իրենց ճակատին դժբախտութեան կնիքը ունին կամ միեւնի են — Թամիմա կը խեղդուի, Գլիմա գործէ կ'արձակուի, Միքէլ բանտարկուութեան կը դատապարտուի,

*Լուսավիճ կը գիտակցի, որ աստուծոյնը եղած է շարժառիթը իր բոլոր արարչ-
 ներուն եւ ինք, նոյնիսկ իր սիրած աղջիկը՝ Լուսի, չէ նանչցած կամ հաս-
 կըցած...։ Նոյնիսկ Քրիստոսի երկրորդական տրպարները այս տխրութեան
 կնիքը ունին։ Երկնակ, Մարտալու, որ Լուսավիճի ամենավաղեմի ընկերն է եւ
 ազգագրական նուագախումբի ղեկավարը, կը զգայ, թէ ինչպէս ժողովուրդը
 կը հեռանայ այդ երգերէն, նոյնիսկ ազան չի հետաքրքրուի անոնցմով, եւ
 Մարտալու, որ երագող մըն է, կը կորսնցնէ իր երազը եւ վէպի վերջաւորու-
 թեան, որտեղ տաղնապի հետեւանքով, կը մեռնի Լուսավիճի ձեռքերուն մէջ...
 Քրիստոս, անդրադատնալով իր պարզած աշխարհի կացութեան, Ծի-
 լիկ Բոթի կ'ըսէ։*

«Ես զգոյշ եմ լուստեսութիւն եւ յոռեսութիւն քառերուն նկատ-
 մամբ։ Վէպը ոչինչ կը հաստատէ, այլ կը փնտռէ եւ կը հարցադրէ։ Չեմ գի-
 տեր, թէ ազգս պիտի կորսուի», եւ չեմ գիտեր, թէ ստեղծած ա՞ր տիպարս
 իրաւունք ունի։ Ես պատմութիւններ կը յօրինեմ, որոնք դէմ դիմաց կու
 գան եւ այս ձեւով ես հարցումներ կը կատարեմ։ Մարգոց ապուշութիւնը
 կը բխի անկէ, որ կը կարծեն, թէ ամէն ինչի պատասխան ունին։ Մինչ վէ-
 պին իմաստութիւնը կը բխի անկէ, որ ամէն ինչի հարցում ունի։ Երբ Տոն
 Քիչոթ դուրս եկաւ դէպի աշխարհ, աշխարհը անհղձուտի վերածուցաւ
 աշխարհուն դիմաց։ այս է աւանդը եւրոպական առաջին վէպին՝ անոր յա-
 բորոյցը՝ վէպի ամբողջ պատմութեան համար։ Վիպասանը ընթերցողին կը
 սորվեցնէ աշխարհը հասկնալ իբրեւ հարցման նշան (...) Ամբողջատիրա-
 կան աշխարհը, հիմնուած ըլլայ Մարքսի, իսլամութեան թէ այլ քանի
 վրայ, պատասխաններու աշխարհ մըն է եւ ա՛յ հարցակազմներու։ Հոն՝ վէ-
 պը տեղ չունի։ Ամէն պարագայի, կը թուի, թէ այսօրուան աշխարհի մէջ,
 ամէն տեղ, մարդիկ կը նախընտրեն դատել, քան հասկնալ, պատասխանել,
 քան հարցնել։ այնպէս որ, վէպին ձայնը հագիւ կը լսուի՝ մարդկային
 վստահութիւններու ապուշ աղմուկին մէջ»։

*Այսպէս, կը միտինք փակել այս ներածականի փորձը վիպասանի մը
 մասին, որուն աշխարհին ողբերգականութիւնը, ինչպէս եւ իր ապրած ամէ-
 նօրեայ անդճանքը, թէ՛ որ մը իր հայրենիքը կրնայ ջնջուիլ երկրի երեսէն՝
 զժրատարար օտար չին մեզի։*

*Ինչպէս կը տեսնենք, Քրիստոսի մտքին խռովքը եւ իր հերոսներուն
 սկեպտիկութիւնը կը բխին իր միտքը շարժողոյ հազար անպատասխան հար-
 ցերէ։ Եւ որքան ալ Քրիստոսի վէպը նիւմորով առաջնորդուած ըլլայ, չի
 կրնար ծածկել այն գառն, լեզի աւ խորանոց հեղնաճը, որ իր հշտարութե-
 նէն կը բխի։ Տարբեր հարց, որ հեղինակը ծածկելու ոչ մէկ հիւսիս կ'ընէ։*

*Շարունակ քաղաքականացող եւ բարդացող աշխարհի մը մէջ, այս
 իրականութիւնը դրսևորելու հիգիերէն մէկն է Քրիստոսի վէպը, վիպական
 դրսևորումի, յղացքի նոր ձևեր կը փնտռէ, որ համապատասխան ըլլայ իր եւ
 իր շրջապատի իրականութեան։ Եւ ինչպէս ինք կ'ըսէ, այս մէկը վէպ մըն է, որ
 պատասխաններ չունի, ունի հարցականներ միայն։ Պէտք է աւելցնել՝ ան-
 հանգստացնող, գիտակցութեան եւ զգօնութեան առաջնորդող հարցական-
 ներ...*

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

ԳԻՇԵՐՆ ԱՆՈՒՇ Է...

Բանաստեղծական այբուբենի մէջ կան իրազրծու մանր, զլուխ-զործուցներ եւ ոչ անպայման զլուխ-զործուցներ, որոնց տրուեցաւ ապրիլ բացառիկ բախտ մը, անտարբեկի ըլլալու շաք միակտուր, սերունդի սերունդ: Ժամանակը կը փոխուի, յգացման եւ իրազրծման նոր ըմբռնումներ հանդէս կու գան, կրքերանցային նոր տարրերով կը հարստանան ճաշակները, բայց այդ բանաստեղծութիւնները, բնութեան երեւոյթներէն մէկուն կամ միւսին պէս, կը մնան նոյնը, արեւին պէս, հովուի պէս, լիթան մը կողք պատուած շուրի երակի պէս, հին՝ բայց միշտ նոր, կիզիչ, արհեստի, կարկայուն:

Օտար անդաստաններուն մէջ, մեզի ծանօթ այդ կարգի ծանօթ բանաստեղծութիւններէն մէկը էակարար Ալէն Փոյի «Ազգայն է անպայման, միւսը՝ Պառլերի ճկունութիւնը», հրատարակուած էր Երևան, շաբաթ մը Համարիկի սկիզբը, կամ Հիւզոյի «Տրամուրիւն Օլիմփիոյի»-ն, կամ Շէլլիի «Արտոյտը», եւ այլն, եւ այլն:

Մեր գրականութեան մէջ եւս սակաւ չեն նոյն բախտով այբուբեններ, միակտուր փոքրով մը ապրած ու ապրող բանաստեղծութիւնները, որոնց առաջին շարքին մէջ կը գտնուին անպայման Պաժառ-Քաթիպայի «Արախի արտասուէր», Միրանի Պէլիթայեանի «Սեպայր եւլ մե՛նջը», Պետրոս Դուրեանի «Տրամուրիւն», Միսակ-Քոյի «Ափ մը մոխիր», Վարուժանի «Սոսնջը», Իսահակեանի «Մալմախայի մը», Զարեհի «Ես իմ անուշ շայտատուին», Համա Սահեանի «Սայրեան դալար բարդին» եւ՝ դարձեալ, եւ այլն, եւ այլն:

Բացառիկ բախտով ստուած այդ շարքին մէջ բացառիկ անդ մը կը գրուէ Միսաք Մեծարեանի անուշ ու հեշտագին, ու հաշիւով ու բալասանով ստուած «Սիրերգը», որ վայելչ անվերապահ նամարու մը եղբարբախտ բանաստեղծին գործը ուսումնասիրած բոլոր մտաւորականներուն, իր ծննդեան օրէն մինչեւ այսօր:

Մեծարեանի ծննդեան 100ամեակին առիթով մենք խմբած էինք այդ գուշակն մասին մեր արձագանքեան սակ գտնուող բոլոր կարծիքները, որոնց, տեղի եւ ժամանակի անձկութեան պատճառով, կրցանք միայն այս թիւին մէջ անդ բանալ:

Նկատի ունենալով, որ նման այբուբենները կրնան շահեկան ըլլալ Հետաքրքիր ընթերցողներուն եւ, մասնաւորաբար՝ գրականութեան ուսուցիչներուն եւ ուսանողներուն, խմբագրութիւնը, այդ շարքին օրինակով՝ որչափ է վերաշինար բանաստեղծութիւններուն մասին կատարած մեկտեղումները եւս ներկայացնել «Բագիճի էլեբէն, պարբերաբար»:

ՄԻՐԵՐԳ

Իրիկնամուտներու այս սիրունար գրողին մէջ առաջին բանը, որ կը նշմարուի, բնութեան սերն է: Այդ սերը եւ զգացողութիւնը անոր շեղու-թիւններուն՝ զինքը կը մզեն ճշմարտապէս սիրուն գրական գիւտերու: Երանաւէտ իրիկուն մը կը ժպտի հեղինակին քիչ մը մելամաղձոտ «Սիրերգ»-ին մէջ:

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն.

Այս տողը կրնայ սփոփել փափուկ բանաստեղծը («Մասիս», 9 Յունիս 1907, թիւ 28-29):

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՐԵԱՆ



«Միաժամանակ ունի «Սիրերգ» արտղոսուած կրկու բերթուածներ:
 Անոնցմէ մէկը գորհար մըն է գիշերային ապրու մի, լուսնկայ լոյսով.
 Գիշերն անուշ է, գիշերն եեշտագի՛ն,
 հաշիշով օծուն ու բայասանով
 լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գի՞նով՝
 գիշերն անուշ է, գիշերն եեշտագի՛ն...

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
 համբոյր լոյսէն՝ որ չորս դիս կը ծագկի,
 այս գիշեր Տօն է հոգւոյս՝ կիրակի.
 համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

*Պա՛հ մը, այնքան շատերուն մէջէն, բայց արուած մա՛նաւանդ ամէնէն
 խուսափուկ նրբերանգովը, որ մութին ու լոյսին մէջտեղերը կը թափառի:
 Բայց արուած մա՛նաւանդ զգուանքի պէս մորթին վրայ քալող քաղցրու-
 թեամբը գիշերուան մեծ համբոյրին: Հողեկան վիճակ մը, շատ մօտիկ գինո-
 վութեան: Հաշիշ կայ օգին մէջ ու բայասան է մութին մեծ, անասման փաթա-
 թը սրտերու վերքին: Ու հեշտութիւնն է այս տօնական գիշերուան մէջ քալել
 լոյսերուն վրայէն, զլուսեղէն ճամբէն: Ու հեշտութիւն է դարձեալ հովին
 երկննայ, թեթեւնայ ու հալի:*

Բայց լոյսն իմ հոգւոյս էիչ-էիչ կը մաշի՛,
 շրթունքս եմ ծարաւ միակ համբոյրին...

*Չենք գիտեր, ինչո՞ւ այս ծարաւը, այսպէս անսկնկայ, սուր գիծի մը
 պէս, կը բանաստեղծը մեծ կեանքին սահմանները կը հասնի լուսեղէն ճամ-
 բաներէն:*

*Քերթուածը կ'արժէ զմայլելի երաժշտականութեանը, իր կիսաստուեր
 ու շլացիկ պայծառութեանը ու գրեթէ տարաշխարհիկ քաղցրութեանը համար
 («Հայրենիք» ամսագիր, 1924 Մայիս):*

ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ



*Երբ նա (ոուս բանաստեղծ Սամուէլ Մարշակը - «Բ.») վերջացրից Ուիլ-
 եամ Բլէյկի բանաստեղծութիւնը, յանկարծ ինքս էլ բանաստեղծական
 կոտորթի պահանջ զգացի, ճիշդ այնպէս՝ ինչպէս երբեմն մարդ երգելու պա-
 հանջ է զգում: Եւ ինքնաբերաբար սկսեցի:*

Գիշերն անուշ է, գիշերն եեշտագի՛ն,
 հաշիշով օծուն ու բայասանով.
 լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գի՞նով՝
 գիշերն անուշ է, գիշերն եեշտագի՛ն...



Հոնց բուր տունները եւ ասաց.

—Շատ գեղեցիկ է Հնչում, թարգմանեցէք:

*Ուշադիր լոնց յանպատրաստի արձակ թարգմանութիւնը, կրկնել տը-
ւնց կրկրորդ տունը.*

**Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
համբոյր լոյսէն՝ որ շորս դիս կը ծաղկի,
այս գիշեր Տօն է հոգւոյս՝ կիրակի,
համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:**

*—Ամենագուտ բանաստեղծութիւն է,— ոգեւորուեց յանկարծ:— Աղա-
մանդ է, ոսկի, բիւրիզ, լոյս, ասէջք ի՛նչ բնորոշում որ կ'ուզէք, դա ամենախո-
կական բանաստեղծութիւն է: Լսում էի այդ Հնչիւնները, մեղեդին, թարգմա-
նութիւնը, եւ աւելի լաւ էի զգում ա՛յս գիշերը ահա: Այս լիալուսինը, այս ար-
ձանագած նօսինները, այս պայծառագօծ ծովը, այս գեփիւռը, որ փչում է ծո-
վից, եւ այս բոլորի խորհուրդը. իսկապէս տօնն է Հոգւոյս համար, կիրակի: Ա՛յ
թէ ինչպիսի կախարդանք է ճշմարիտ բանաստեղծութիւնը: Եւ սովորական
բառեր են, չէ՞, գիշեր, համբոյր, լոյս, Հով, ծով... (ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԵՍՏԻ ԿԷՆ, ԵՐԵ-
ՎԱՆ, 1969):*

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ

•••

*...Սիմվոյիկ արուեստի ու ժը Հննց սրա մէջ է՝ պայմանական խորհրդա-
պաշտ բառի, բառակապակցութիւնների ու պատկերների միջոցով լայն Հնա-
բաւորութիւն ու Հող սանդձել ընկալողի մտածողութեան ծաւալումների հա-
մար.*

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...

Սա ներաշխարհի մի հոյակապ սպրուհ-տեսարան է: Գիշեր, հաշիշ, լոյս, լուսեղէն ճամբայ, գինովութիւն: Կարծում ենք այլ միջոցներով հնարաւոր չէ սիմվոլիկ առարկայական պայմանականութիւնների միջոցով ստեղծել այն-պիսի՝ մի էթերային միջավայր-պատկեր, որով հնարաւոր լինի ցոյց տալ հոգու անկաշկանդ, ազատ ու լուսաւոր ճախրը՝ Հոգու Կիրակին: Սա նուրբ ու զգայուն հոգու պարանոց-սպրուհ է, փախուստ է կոչու ու կուպտ, կաշկանդող ու նիւթապաշտ միջավայրից: «Հոգու Կիրակին» - սա մի ամբողջ գիւտ է պեղծիայում, մի զօրեղ, իմաստուն ու խորը խոսքում: Խաղաղութեան տեն-չացող հոգու յաւերժական թեման Մեծարեւոյր խոսքերէ է այս երկու հասակ բառի մէջ (Աւանդութիւնները եւ գեղարուեստական զարգացումը, յօդ-ւածներու ժողովածու, Երեւան, 1976):

ԶԱԻԷՆ ԱՒԵՏԻՍԵԱՆ

••

Գիշերուայ մի հոյակապ ձօն է նշանաւոր «Սիրերգ» (Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...), որ Մեծարեւոյր թերեւս ամէնից տարածուած ու սիրուած բանաստեղծութիւնն է, զարմել է նաեւ քաղածանօթ երգի հիմք: Գիշերը Հարազատ ու սիրելի է բանաստեղծին ո՛չ միայն այն պատճառով, որ «հաշիշով օծուն ու բալասանով» գիշերը կարող է նրա վերջերը բուժել, այլեւ ա՛յն, որ այդ պահին նրա առջեւ բացուած է մի շուտեղէն ճամբայ», որին մտքով յանձնուած կարելի է հասնել (օգտուելով ուրիշ բանաստեղծութեան պատկերից) «ծփանուտ երազի ափու նքին»: Բայց ինչո՞ւ է այս բանաստեղ-ծութիւնը «Սիրերգ» կոչուում, երբ սիրոյ մասին իսկապէս ուղղակի խօսք չկայ: Անշուշտ այն պատճառով, որ գիշերն իր բերած անանուն համբոյրներով մի պահ յագեցնում է սիրոյ ծարաւով լեցուն նրա հոգին:

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
համբոյր լոյսէն՝ որ չորս գիւ կը ծաղկի,
այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի,
համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

Այսպէս, գիշերային տեսարանների պաշտամունքը ուղղակի կապուում է լիարժէք կենքի ու սիրոյ կարօտի հետ, որը բանաստեղծի կենսազգացող հիմ-նական գիծերից է: Դա է (եւ ոչ միայն գիշերային սքանաչիւր բնակկարը), որ յափշտակում ու ոգեւորում է մեզ այդ երգի մէջ: Սակայն Եցեմագին գիշեր-ւայ» պատկերը միաձուլում է մտեցող մահուան օգրերբական սպասման եւ սիրոյ անհասանելիութեան գիտակցութեան հետ («Բայց լոյսն իմ հոգւոյն քիչ-քիչ կը մաշի», շրթունքս են ծարաւ միակ համբոյրին...), եւ բանաս-տեղծութեան ամբողջութիւնից մեզ է փոխանցում բարդ-համադրական, իր բովանդակութեամբ խորապէս դրամատիկ մի սպրուհ-պատկեր («Սիւսաբ Մեծարեւոյր», Երեւան, 1977):

ԷՆՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ



Հայկա մեծարեանցեան անսովոր փոխարեութիւններն անգրագարմանում են նրա բանաստեղծութիւնների հիւսուածքային ընդհանուր կառուցւածքը, եւ, ինչպէս անսովոր փոխարեութիւններում, այնպէս էլ հիւսուածքային համակարգում տրոփում է նարեկացու տաղերի արտայայտական հզօր զարկերակը:

Նոյն իւրօրինակութիւնները՝ նարեկացու տաղերին ազերուող այլ կողմերով, կարելի է տեսնել հանրածանօթ «Արիւրգ»-ում:

Ըլոյսի արբեցած, «խանդարորք» զերգայական տարփանք, լոյսի հոգելոր տօն, հոգու կիրակի, որի յուզական գրամատիկ հնչեղութիւնն այս անգամ էլ ապահովում է հոգու լուսեղէն ցնծութեան եւ գրա պսակումի գարձեալ երկաստիճան հակադրութեամբ ու զուգորդութեամբ:

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն,
 հաշիշով օծուն ու բայասանով,
 լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գիճով՝
 գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...

Համբարներ կու գան հովէն ու ծովէն,
 համբար լոյսէն՝ որ չորս դիտ կը ծագիլի,
 այս գիշեր Տօն է հոգւոյս՝ կիրակի,
 համբարներ կու գան հովէն ու ծովէն:

Բայց լոյսն իմ հօգուոյս քիչ քիչ կը մաշի՛...

Քնարական միջնորդութեամբ սիրոյ կենարար զօրութիւնը վերակերպւում է լոյսի եւ լուսաստրութեան կենսային զօրութեան: Գեղանկարչական վերլուծական եղանակով արբեցութիւնը սիրով նախ պատկերում է իրրեւ լուսեղէն ճանապարհի բուրմունքային անուշ ու հեշտագին գիճովութեան, ապա վերակերպում հովից ու ծովից եկող, չորս կողմը ծագկող լոյսի համբարներին լուսագոյն ու թրթուռն մթնոլորտային խրախճանքի: («XX դարի սկիզբի հայոց բանաստեղծութիւնը», գիրք 2, Երեւան, 1977):

ԱՄՄԱՍ ՁԱՔԱՐԵԱՆ



Որ Մեծարեանց ունի բնութեան շմեցուցիչ զգացողութիւն, կասկածից վեր է: Բայց նա միայն բնանկարիչ-բանաստեղծ չէ, ինչպէս թւում է շատերին: Նա խօսքի այն հազուադէպ վարպետներից է, որոնք ունեն նաեւ հարուստ երանգապնակ: Ընթերցողներին նա մեծ հմտութեամբ է հաղորդում իր նկարչական, երաժշտական բնկայումները: Հնչիւններն ու գոյները մի զարմանալի արամագրութեամբ են շնչում նրա գիշերային երգերում:

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն,
Հաշիշով օծուն ու բայասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գիճով՝
Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...

Սա այն բանաստեղծութիւնն է, որ թւում է, ո՛չ թէ Մեծարենցն է գրել, այլ ժողովուրդը: Որովհետեւ դժուար է այսքան պարզ, այսքան տրամադրող երգ գրել, որ երգ է ու երգ չի, որ բանաստեղծութիւն է ու բանաստեղծութիւն չի, որ ամբողջովին տրամադրութիւն է, օղի պէս պարզ ու շնչառութեան պէս բնական մի բան, որ ամբողջովին ընթերցողին ներքաշում է իր միկրոմիկրոլորտին մէջ:

Անկեղծ ասած, ինձ թւում է, որ աշխարհի բոլոր լաւ ստեղծագործութիւններին հեղինակը ժողովուրդն է: Հաննարեղ ստեղծագործութիւն գրում է ո՛չ թէ որեւէ գրող, երգահան, այլ ժողովուրդը, որն իր ապրածը, զգացածը ասում որեւէ բախտաւոր անհատի բերանով:

Մեծարենցի գիշերային երգերը ներծնուած են աստղափայլ շուկներով ու ձայներով, կենսաբի, մահուան ու անհունի խորհրդաւորութիւններով («Գարուն» ամսագիր, 1982, թիւ 4):

ԱՐԵՒՇԱՏ ԱԻԱԳԵԱՆ

••

Կէս դիւերին մենք թողնում ենք Այսս Նիկոլայուք եւ ճանապարհ ընկնում Հերակլիոն:

Հողեմայ այս պահին Յակոբը դանդաղեցնում է մեքենայի ընթացքը, մի ձայներից է հանում դարակից ու գործի գնում:

Եւ, ո՛վ սրտայրիկ անկնկայ. լուսնայոյսով ողողում կրկնան այս ծովափի բարձունքին մեզմ կարկաշում, հաչում է մի ամբողջ մեղեդի:

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն.
Հաշիշով օծուն ու բայասանով,
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գիճով՝
Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...

Ուկեշուշան, քնքուշ Մեծարենցը Միջնկրականի խորքում գտնուող այս հեռուար, աստուածներին ծննդավայր կղզում էլ մեզ հետ է, մասնակցում է մեր ուրախութեանը, մեր կարօտին, ազգային մեր իղձերին ու երազանքներին, որ հողիններում անթեղուած, դարբեր շարունակ տանում ենք աշխարհի բոլոր ցամաքամասերը...

Մեծարենցեան այս թախծոտ երգը ես յաճախ եմ լսել իմ հայրենի տանը, բայց այստեղ ուրիշ երանգ, ուրիշ շեշտ ու յուզականութիւն է ստանում:

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...

Մի պահ դուքս ենք գալիս մեքենայից, ու ունկնդիր լինում ծղրթնէրի յաւերժական յանկերդին, տարւում լուսաստիկների կայծկլտուն իրարան-

ցումով եւ վարտազեղ ծառերի վրայ անձրեւող լուսնայոյսով: Մեծարենցը պիտի ասէր. «Լուսնի լոյսը ծառերէն ծագիկի պէս է կախուեր» (« Գարուն», 1985, քիւ 3):

ՍՏԵՓԱՆ ԿՈՒՐՏԻԿԵԱՆ



Չարմանայի մի երկույթ. որքան էլ ծանր, կարելի է ասել՝ ողբերգական ճակատագրի տէր, Մ. Մեծարենցը շատ քիչ է դառնում իր ներաշխարհը ծուլատող այնպիսի թիւններին եւ դառնում գերազանցապէս իրենից դուրս գտնուող աշխարհի, երազի պահերի, ցայգերգերի, գիշերերգերի, աքաբանների, յիշատակների, անձրեւների, տեսիլների, այգերգերի, մթնշաղկների, ծիածանների, որինգների մէջ յայտնարեւելու կեանքի գեղեցկութիւնները: Եւ ստեղծում է բանաստեղծական գլուխ – գործոցներ, ինչպէս՝

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գիճով՝
Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն...

(«Սովետական արուեստ», 1986, Թիւ 2)

ՍՈՒՐԷՆ ԱՂԱԲԱԲԵԱՆ



Ազատ, գեղեցիկ աշխարհի կարօտը, կեանքի եւ սիրոյ ձգտումները պատկերում են երազանքի եւ իրականութեան զրամայում: Ահա անհաստի, թերեւս կարելի է ասել նաեւ ճշուած մի ժողովրդի ճակատագրի, որի գեղարուեստական անդրադարձումներից է շաբբի երկրորդ բանաստեղծութիւնը՝ «Սիրերգ»ը: Այստեղ աշխարհը բացւում է գիշերային բնութեան խնկրանքով, հեքիաթային գեղեցկութեամբ: Քնարական հերոսը արրեցած է հայիւնի ու բալասանի բուրմունքով, լուսեղէն գիշերով, կեանքի տիեզերական երազով ու կախարդանքով: Նա քայլում է գինովի պէս վերացած, անցնում է սիրոյ ճամբէն խանդավառ հողով, փառաբանում է աշխարհի քաղցրութիւնը. ծաղիկներով օծուած մթնոլորտը, անուշ գիշերը, երազային սէրն ու երջանկութիւնը: Առասել ցայտուն է ընդգծուած լուսեղէն ուղիների կարօտը, սիրոյ զգացումը լոյսի հանդէպ: Գիշերուայ մէջ բանաստեղծը լուսեղէն ճամբայ է բռնել, կիսախաւարում նա լոյս է տեսնում, խանդավառ դնում է գէպի լոյսը, գէպի կեանքի, երջանկութեան եւ արեւի խոստումը: Հենց այդ խոստումով էլ արրեցած է նա, իբրեւ յուսավառ, ողբունչ մի ճամբորդ՝ գիշերուայ անհուն ու անյայտ ուղիներում:

Չարգանում է Հոգեբանական սիւմբոլ: Թուել է աշխարհն ընդունել է նրան զրկարաց. մօտենում, միմեանց համայրներ են յղում երկինքն ու երկիրը, ծովերն ու հովերը, ասաղերն ու լուսինը եւ մինչեւ իսկ գեանից անդրա-

դարձող նրանց լոյսը: Համբոյրով, սիրով ու գեղեցկութեամբ է լցուած կեանքը եւ տիեզերքը.

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
Համբոյր լոյսէն՝ որ չորս դիտ կը ծագի,
Այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի՝,
Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

Ուշագրաւ է նոյնպէս, որ այն, ինչ տեսնում է «հերոսը», առատօրէն սփռուած է չորս կողմը: Քուռ է, բիւր բարեբնորով աշխարհը բացել է իր գիրկը՝ մարդկանց վայելքի համար: Քուռ է, կեանքի սրտամաշ, ծանր սրբից, սպասումներից յետոյ եկել է հոգու խնդութեան օրը՝ հոգու Կիրակին՝ Հանգրտի մի օր Բինկեանում, որ ինչպէս վկայում են, անցել է մի արատազօր շքեղութեամբ՝ վերածուելով վայելքի եւ բերհրութեան ասօնի: Եկիրակին քացարձակ հանգստի եւ անդորրի տօն էր...: Խաղաղութիւնը, ճոխութիւնը, անդորրութիւնը ու աշխատանքի փառաբանութիւնը կը սաւառնէին ցնծութեան նման ամէն տեղ: Կէսօրէ ետք՝ այցելուներու շարքերը կ'երկարէին տօններուն՝ ընտանիքներու մէջ: Փոխադարձ հաւատքի, վստահութեան, սիրելիութեան, մտաւոր բարոյականի անդորր միջավայր մը ամբողջ գիւղում: Գիւղին մէջ նուագարաններու ձայներ կը բարձրանային տօներէ, երիտասարդներ համախումբ տան մը մէջ կը զուարճանային, կը պարէին, գինարբուեով կը մտանային շաբթուան խօնքնակները:

Ահա՛ «Այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի» տողապատկերի ակնհայտութիւնը՝ եւ դրա ծագման ժողովրդական, կենցաղային սկուռքը:

Քնարական հերոսը իր սիրտն է բացել աշխարհին, ուղղակի ցանկանում է ճարտել գեղեցկութիւնների մէջ, վայելել կեանքը, վայելել սէր եւ համբոյր.

Երբունքս եմ ծարաւ միակ համբոյրին...

Սակայն այստեղ հոգեբանական սիւժէի զարգացումը ստանում է անսպասելի կոնֆլիկտային ընթացք: Բացայայտուած է այրող ցտեղութեան եւ աշխարհի ստունութեան դրաման: Որքան ջերմ է «հերոսը» աշխարհի եւ մարդու հանգչւյ, այնքան ժլատ է բախտը, եւ այնքան դաժան է իրականութիւնը: Որքան առատ են համբոյրները, որ գալիս են ծովից ու հովից, եւ շուրջը ծագկող լոյսերից, այնքան զուրկ է «հերոսը» աշխարհի լիութիւնից, զուրկ է կեանքի ընկերոջ, սրտակից գուրգուրանքից եւ զուրկ է մինչեւ իսկ հոգու տենչանքը մարմնացնող միակ համբոյրից: Գրամատիկ այս հակադրութեան մէջ խամբում են երազները, մաշում, սպառում է հոգու սեփական լոյսը, սպառում՝ ցուրտ աշխարհին անփոխադարձ արուելուց: Եւ սպառում է այն ժամանակ, երբ աշխարհը լողում, հրելում է ցնծագին լոյսերի առատութեան մէջ.

Ցնծագին գիշերն է լոյս ու լուսին՝
Բայց լոյսն իմ հագւոյս էի՝ էի՛ կը մաշի...

Որքան խորն է թաքնուած ճակատագրի հեղնութիւնը եւ իրականութեան անսահման դաժանութիւնը: Մինչեւ իսկ առանց բառերի, երեւում է «հերոսի» հոգու մութ, մաշող ու տանջող ցաւը: Մեծ խտութեան հասնող լակոնիկ տողերում, ինչպէս չկայ այդ մութ ցաւի, այնպէս էլ կեանքի անաղբու-

թեան նկարագրութիւնը, սակայն յստակօրէն գծագրուած են երկուսն էլ՝ ցաւը եւ շրջապատող դժբանութիւնը, երազը եւ իրականութիւնը: Գծագրուած են աներեւոյթ մեղմ, հանգիստ, առինքնող պայծառութեամբ, բայց ենթարնագրի ցնցող ու ժով: Հենց սա է զերթոյցի արունաստի սխրանքը: Պատահական չէ, որ Գուրգէն Մահարին «Սիրերգ»ը համարուի էր՝ «Ամենապեղեցիկ բանաստեղծութիւնը մեր գրականութեան մէջ՝ գիշերուայ մասին («Միսաֆ Մեծարեմեց», Երեւան, 1986):

ՀԵԿՏՈՐ ՌՇՏՈՒՆԻ

Միայն վերջերս մեր ձեռքը հասաւ հայրենի մտաւորական Հեկտոր Ռչտունի մեծարենցեան մենագրութիւնը, որմէ առնուած է «Գիշերն անուշ է» զերթուածին նուիրուած վերի ու ստի մնասիրութիւններուն վերջին հատուածը:

Հակառակ Միսաբ Մեծարենցի կեանքին ու գործին անդրադարձող եօթը-ութ մենագրութիւններուն եւ անթիւ-անհամար յօդուածներուն, Հեկտոր Ռչտունի յաջողած է յայտնարեւել կարգ մը նորութիւններ, զորս պիտի մատնանշենք «Բազմաճի յաջորդ համարի էջերուն»:

Չուզահետաբար պիտի մատնանշենք նաեւ այն թէական տեղեկութիւնները եւ թոյլ տրուած վրէպները, որոնք, ցաւօք, քանակով քիչ չեն, հետեւանք՝ ունեւելի թափթփածութեան...



Անցնայ տարի, Փարիզի «Սույ» հրատարակչու-
թիւնը, Փիլո Տեր-Սարգիսեանի Քարգմանու-
թեանը յոյս բնծայած է Կոստան Զարեանի ճեւար
լիբան վրայ: անուն հանրամատչի վէպը, որ շայն
հետաքրքրութիւն ստեղծած է Փրանսայի թէ՛ հայ
ընթերցողներու մօտ:

Ստորեւ կը ներկայացնենք անոր կցած երկուս-
տարդ Քարգմանի յատմարանը, որ կը բովան-
դակէ իրատ շահեկան գիտազօրութիւններ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին տասնամեակին տեղի ունեցած բուռն եւ
յառնաբեր ճշմարտութեան եւ արժանաւորութեան գլխի
կատարումը գործողութիւնները հայ իրականու-
թեան անսեղեակ հետաքրքրիչներուն կրնան
տեսած ըլլալ թիւ պատկեր մը, ամէն պարագայի՝
չտես անկատար. հայկական իրականութենէն հեռու
եւ այս սիմվոլայիզին մէջ թաղարկող իրապարծութիւն-
ներէն բխած տեղեկութիւնները կը մեան անբաւա-
րար: Այս առիշտութեանը ճեւար լիբան վրայ
գործը, իր վերական ձեւով, ցոյց կու տայ ուղիղ եւ
նորը ճշտելու մ'ը, բան հեւաւոր աշխարհի մը
փարկաններուն վրայ հիմնուած զատմական պատ-
կերացումը, քառական բարդ՝ Արեւմտեան տղի բնիկը-
ցողին ճամար, եւ մինչեւ անգամ այն հայերուն,
որոնք միայն Արեւոտի մէջ ապրած են:

Այս վէպը բնաւ կապ չունի 1915ին սկսած ցե-
ղասպանութեան հետ: Այնուամենայնիւ թոյլ կու
տայ լրիւ ըմբռնելու հայ ժողովուրդի պատմու-
թիւնը՝ իր ներքին եւ կենդանի իրականութեան
մէջ: Իրականութեան մէջ, հայոց պատմութեան
ամենէն ողբերգական ու բախտորոշ վայրկեանին:

Հոկտեմբերեան յեղափոխութեան հետեւանքով,
որ սակաւ տիրայնութեանէն թէեւ անժամակէս
պատարարում Կոփկասի մը մէջ, 1918ի աշնան,
Պաթմաը ենթակայ եր ամէն տեսակ բռնկումնե-
րու: Երեւանը պիտի համայնագործանար 1921ի
մտնան: Այս երկու վայրերուն եւ երկու ժամանակ-
ներուն միջեւ է, որ տեղի կ'ունենայ ճեւարու
գործողութիւնը: Անիկա կը ցոյցանէ յոյսերը, փոր-
ձութիւններն ու պայքարները բոլոր անոնց, որոնք
վերապարծ ըլլալով պատերազմէն ու շարդերէն, կը
յուսային ունենայ անկախ եւ ազատութեան մէջ
ապրելու բախտ մը՝ հայրենիքի այն Հողաշերտին
վրայ, զոր իրենց հերոսութիւնը յաջողած էր պաշտ-
պանել թրքական բարբարոսութիւններէն:

Ճեւարու գլխու որ հերոսը, Արտ Հերեան, իրա-
կանութեան մէջ կ'արտայայտ ազգային ողբեր-
գութեան եւ խորհրդային համակարգին հանդէպ
հայերուն մեծամասնութեան կեցուածքը: Ան ողի
բոխն կը հետապնդէ ծրագիր մը, որ կը ստանայ
հաւաքական խորհրդանշանի մը արժէքը: Հերեան
ստանաին չէ սահայել: Իր շուրջը, տարբեր ձեւերու



և, ստաֆանաներու սակ, շատեր կը բաժնեն էակն նոյն կերպը: Բայց Հերեան Նեուս է մրակաուր (Mou-nolithique) տիպար մը ըլլալէ. երբ եղիւթիւնները կը մտնեն Թաւրուական-պրերոպական հունի մը մէջ, պարզորոշ կ'երեւի, որ կնուծն ու երկրին ճակատադէրը Թոյլ կու տան իրեն երանգաւարչու իր հակադէպութիւններն ու վերաբերու. մը ամէն ան-սակ արկածախնդրութիւններու ընդմէջէն: Երբ Համայնագործները կը ներխուժեն Կովկաս, բոլորու-մին հակասակ ըլլալով անոնց, ստաֆանաւարք կ'ուղտի ղեկի հրամարում: Հայ ժողովուրդի մտադրացին Համար խորհրդային վարչակարգը անխուսափելի կը գտնուայ եւ իրեն կը մնայ համա-կերպի:

Եւսար լիւրան Վրայս գեղը գրուած է Համալ-խարհային Երկրորդ պատերազմէն առաջ, մարդու մը կողմէ, որ հուսանար իր կարծածէն աւելի մեծ շափով մը կապուած էր Երբ պարու Կովկասին: Երբ նոյն ազգէն եւ նոյն սերունդէն աւելի մեծ թիւով մարդ ճանչցած ենք, քան նոյն ինքն Ներսար, Եւսարուն մէջ կը գտնենք բուսականին տարրի-նակ ու խառնուրդը, կազմուած՝ մարդկային շա-րաքերու թիւանց մէջ յարմարողականութեան նշոյ-լով երանգաւարուած շերտութիւնէ, վառ յողմա-կուութիւնէ, եւ գարգարուած՝ ծաղկուն ու սաքուն-միջակաւութեամբ, որ առանց ինքնազուտմի կ'արտայայտուի յանպատարաստից պարին անվեր-ջանալի գինեճաններու եւ բառերուն անթամ ան-սակ մը ինքնուրոյն գինեճանութեան մէջ, որ պարա-զային համեմատ կրնայ թուիլ ընթացք մը առնել: Կը նշանակէ, որ Նեուս եւք շնական կնքուածք ցու-ցարկեղոջ կողմնակաւութիւններէ, ժուճկայութիւն

— Իրական կամ երեւակայական — եւ սկիզբա-կութիւն — ժպտուն կամ կերտուն — որոնց շա-տանց վարժուած ենք Արեւմուտքի մէջ: Եւսարուն մէջ չկան վայելչագարջ մթութիւններ, չկան երբին երկգիծութիւններ, չկան մտածուած սափակու-թիւններ: Եւ եւրոպացի բնթերցողին համար ապա-հովուած է տեղափոխութիւնը ժամանակին, ան-ըբարկեմին եւ մտայնութեան մէջ:

Ռուսական բանակի մէջ հրամանատարին զաւ-կը՝ Կոստան Զարեան, ծնած է 1885ին, Եամախի, Ներկայիս Սովետական Ազգայնականի մարզ: Մա-կութիւնը կ'անցընէ Բաքու, կը յանախէ ռուսական գիժնագիտ, ապա կ'երթայ Փարիզ, ուր կը ստանայ երկրորդական ուսումը, իսկ բարձրագոյնը՝ Պրիւ-սեյի մէջ, պատկուելով գրականութեան եւ ընկե-րային գիտութիւններու վկայականով: Հոն է, որ Փրանսերէն լեզուով կը հրատարակէ իր առաջին բանաստեղծութիւնները, եւ հոն է գարձալ, որ, տարրաբնակարէն, Վերհուսնի հետ հաստատուած կարգ մը կապերը վճռական անդադարով կ'ուճե-նան իր կեանքին վրայ:

— Ձեռ գրութիւն, հաստատեցեալ էք, թէ ոչ, բայց եթէ հաստատեցեալ էք, հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ ո՞ր լեզուով պիտի աշօթէիք. — կը հարց-նէ որ մը իրեն պիտի ընթացի բանաստեղծը:

— Երբ փոքր էի, մայրս լայր մերը գրաբարով սորվեցուց ինձի, հին հայերէնով, — կ'ըսէ Զարեան:

— Ռեւմե ըսենք, որ բանաստեղծութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ մշտուելով ազօթք մը:

Քանի մը շարաթ հողք, Զարեան կը մեկնի Սուրբ-Ղազար վանքը, Վենետիկ, ուր կ'անցընէ երեք տարի, 1910էն 1913, հայերէն սորվելով, ինչ-

պէս նոյն վայրին մէջ ըրած էր Պայրըն, զար ճշտասոյնը:

Ապա կ'անցնէր Պոլիս, ուր էր ճշգրիտ էր զբաղան առաջարկը, ընդունելով զոր ընտրած եւ ազատ էր, ինչը որ նախապէս միայն Փրահմաններով եւ ուսանելովով կրճար գրել: Ենթ դոյնի՜ կարեւոր բան մը ունինք, - կ'ըսէր Ջարեան, - իր զտնէք անոր Եստապատարիսան լիզու մը: Ինչ գտած էր այդ ինչուն:

Քննազատ ճշտած էր, որ իրեն նամար զգացումներն ու երեւակայութիւնը՝ Վիլյամներ են՝ հասկնլու համար գիտակցութեան բարձրագոյն կարիչութիւններուն: Կոստան Ջարեանի գործերը կը նստատանն այդ ճիշտ, անոնք համարողական եւսմիտ ըլլան, ինչպէս Վերմարսէն եւ թատերամտերը, բառաստղագիտական ժողովուրդներ ըլլան, ինչպէս Վերմարսէն (որով Քննազատ յարկենց նամատուար ճշ), Երիբու լոսակը կամ Եմատրագանի հարարը, թէ ըլլան ղեպեր, ինչպէս Եմատրոնք եւ իր նամարան կամ Եմանիտողը եւ Եմատրի ռիկարմարը: Այս գործերուն մէջ առկային երեւակայութեան նամարով ստեղծելից ստեղծանք երբեք չ'արգելիր իրեն միտելու անգիտութեան ղեկահան ժառանգութիւնը:

Կոստան Ջարեան ժառանգորդն է 19րդ դարու վախճանին մշակուած Հայկական ստանաթից, ազատական եւ առաջընթաց գրականութեան, որուն նախադրութիւնը կ'ընթաց ազգային եւ ընկերային նիւթերուն: Ան էր հետեւի այն ուղին, զոր բացու Ռաֆֆին (1837-1888), զիջական ճշտ, որ գիտցու ղերադիցնել պատմական եւ մշակութային անցնալի մը մեծութիւնը, զգացումներու այնպիսի արտայայտականութեամբ ճշ, ուր մանրճորհն իրարու կ'ընդհիւզուին Հաւաքականն ու անեմականը, ինչպէս Արեւիկան Երուսաղիմ եւ մերձակայ շրջաններու բողոքաբան ժողովուրդներու գրականութեանց մէջ: Ազգային գիտակցութեան շարքը բացայայտելն ի յայտ կու գայ Հայ Նախահայ վայրայ պատմութեան մէջ ղերիվայրումներուն նետ:

Միւս կողմէ՜ Կոստան Ջարեան կը զատուր բանաստեղծութեան արեւիկան ճիշտ մէջ կողմանան եւ Հայկական, Հաւատարիմ մտայով Բուսանձանի (1869-1923) եւ Բուսանձանի (1875-1957) քննաբերութեանց ստանգներուն, բանաստեղծներ՝ որոնք թիւրեւ ներկայ դարուն առաջին կիսուն

նայ գրականութեան մեծնդոյն ղեմերն են: Սակայն եւ այնպէս, Կոստան Ջարեան կը զանազանուր լեզուով, բառական երեւակայութեան յանգչութեամբ, որ մասնաճշտ իրարայնու եւ պատկերը ուսեղանցնելու նամար երբեմն ղինք կը մղէ ստեղծելու իրթնարարութիւններ: Բանաստեղծական եւ ղերեղանբերական այս յատկութիւններուն առջնութիւն՝ Ջարեան է՝ նաեւ անեմական ու Հար ղեմ ստեղծակալը մը, որ նորութիւն մուծած է մամանակալից նայելիս արտայայտական ընդունուած մեծութեան մէջ:

1915ին Ջարեան փարսուս կու ապ Պոլսէն, կ'անցնէր Պոլսիսիւս, ապա՝ Բուսիս: 1922ին կը մեկնէր Խորհրդային Հայաստան, ուր Պետական Համարարանին մէջ կը ստաննէ նամատեղական գրականութիւն ստանգչիլու պաշտօնը: Երեք տարի ետք, կը ղերադառնայ Երուսաղիմ եւ կ'ապրէ Չաւոս, Բուսիս, ապա՝ Միտհնայ Լուսանդներ, Միլի Արեւիկ: 1943ին, Պոսթընի մէջ կը Հրատարարի Եմատր իրան վրայ գործը, որ կ'ըլլայ էր վերջին ղիպը:

1944-1946, ներքին Պոլսիսիւս նամարարանին մէջ, ան կը պատասխանէ Հայագիտական նիւթեր, ապա՝ 1952-1954, Պէրուսի Ամերիկեան Համարարանին մէջ, կը ստաննէ արեւատի պատմութեան գաղտնաբար պաշտօնը:

Հայրենից վերադառնալու իջնով առիտունան՝ 1960ին կը մեկնէր Հայաստան եւ կը մեռնէր 1969ին, Երեւանի մէջ:

1963ին, Երեւանի մէջ, նոր ապագութեամբ ըլլալ կը սեանէ Եմատր, որ կը կրէ իրարհային ուղտփատութեան պատանդեցուցած շարք մը յապաւումներ ու արմատական փոփոխութիւններ, ներկայացնելով երկրորդ տարրերի մը: 1964ին, Եմատրիսան Եմատր իրարայրով՝ Պոլսու Մընտպան ըլլալ կ'ընենալ ղեկու կրկու Հրատարարութիւններուն բողոքական ուսումնարարութիւնը, բացայայտ ղորմանելով միտարարներն ու միլիմատութիւնները, մասնակցելով նոյն ստան իրարհային Հրատարարութեան այն Հաստատանները, որոնք կ'ընթանան 1943ի Հրատարարութեան ճիշտ Հայաստան ուղտնով:

Ընթացողին ներկայացուող այս գիրքը առաջին Հրատարարութեան ամբողջական Թարգմանութիւնն է:

Փ.Տ.—Ս.

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐՈՒ ՍՐՆԳԱՀԱՐԸ»

Անհիթիքի եւ յառաջապահ թատրոնի փառքերէն Հանդիսացող ուշադրաւ կարգ մը գործեր լիբանանահայ թատերասէր հասարակութեան հրամցուցած Վարուժան Խտըշեանի «Թատրոն 67» խումբը, իր հիմնադրութեան 20ամեակին առիթով, այս անգամ բեմ բարձրացուց Հայ գրագէտի մը մէկ թատերախաղը՝ Համաստեղի «Հայաստանի լեռներու սրբախաղը»:

«Յակոբ Տէր Մելքոնեան» թատերադրահի բեմին վրայ, 23 Յունուարէն մինչեւ 8 Փետրուար ներկայացուած այս թատերախաղը Վ. Խտըշեան բեմադրիչին համար եղաւ ո՛չ միայն դժուարին քննութիւն մը, այլեւ՝ «անկիւնադարձային հանգրուան մը», իր իսկ բնութագրումով: Արդարեւ, եթէ պահ մը զանց ընենք թրջերէնէն Հայացուած Յ. Պարոնեանի «Ալափրանկլայն» (մեծանուն երգիծարանին ամենաթոյլ գործը), կրնանք անսխալ ըսել, որ իր այս ընտրութեամբ Վ. Խտըշեան բեմ կը բարձրացնէր էպպէս Հայկական եւ այժմեական թատերախաղ մը, որ ժամանակի եւ վայրի աուհալները չբնակցելով՝ կը հնչէր նոյն ուժգնութեամբ, միեւնոյն վարակիչ յուզականութեամբ, հակասակ թատերախաղին ծանր կշիռովին, կառուցային խոցելի կէտերուն եւ կարգ մը դերակատարներու տկար խաղարկութեան:

Համաստեղի գրականութեան առանցքը Հանդիսացող կարօտի եւ Հայրենապաշտութեան բանաստեղծական հոգեպիճակները նիւթ Հայթայթած էին նաեւ «Հայաստանի լեռներու սրբախաղը» թատերախաղին: Երկրի կարօտախաղն

վարակուած տեսչահարները Հոս եւս կը բախին ամերիկեան չոր իրականութեան, սակայն կը շարունակեն ապրիլ երազային աշխարհի մը մէջ, որ իր պայծառ գոյներով եւ թաղցր թրթիտներով կը գրաւէ իրենց ողջ ներկան՝ իբրեւ անյաղթահարելի եւ յամեցող կրկնեթիւնով:

Անցեալ-երազին եւ ամերիկեան կեանքին միջեւ խարխափող Հայ գաղթականներու ներկան, Հակասակ ամերիկեան միջավայրի շօշափելի անդրադարձներուն, — հազուատ-կապուտ, գրամատան մուրհակ, ապրելակերպի որոշ գոյներ, ազօտ արձագանգն է անցեալին, աւելի ճիշդ՝ անցեալին վերապրումը, ծանրաբեռնուած՝ ամերիկեան միջավայրի խանգարիչ միջամտութիւններով: Այս իսկ պատճառով, ծննդավայր վերադարձի անկարողութեան դիմաց, խորթ միջավայրի մը բարձրուն եւ ապրելակերպին հետ չհաղուող այս օտարականները կը կառչին փրկութեան միակ լաստին՝ երազին, որ ժամանակի սլաքին թաւալումը կասեցնող մոզական գաւազանին զօրութեամբ կը ստեղծէ ամէն ինչ՝ թէ՛ ժամանակ եւ թէ՛ միջավայր, որուն իսկ բերումով երազը կը դառնայ անպարտելի եւ անժամանցելի իրականութիւն, ուր Գրիգորի, Մարգարի, Մարթայի եւ միւս տիպարներուն շօշափելի պարտութիւնը տակաւ առ տակաւ կը թօթափէ ամերիկեան պարտագրանքները՝ վերածուելու Համար ե՛ւ փախուստի, ե՛ւ յաղթանակի մութ ուղին լուսաւորող անշօշափելի ուժի:

Իրականութեան ներքին իրականութեան վրայ գրաւ դնող «Հայաստանի



լեռներու արևգահարը» Թատերախաղը, որ կը սկսի ամերիկեան ազարակի մը մէջ՝ Վարդանի ողջ էութիւնը գրաւած անիրական իրականութեամբ, հոգեւորական առ հոգեւորական կ'անցնի իրականութիւնն ու երազը իրարմէ անջատող սահմանէն անդին, կը հաստատուի երազին պարարտ ենթահողին վրայ, կ'ապրի իբր լինելութեան կախարդական հոլովոյթը՝ գառնայու համար տեսանելի իրականութիւնները իմաստաւորող գերագոյն իրականութիւնը:

Այսպէս, «Հայաստանի լեռներու արևգահարը» Թատերախաղը կը սկսի ամերիկեան ենթահողի մը վրայ, Հայրենական անբացատրելի խորհուրդով մը: Արկածի մը հետեւանքով ոտքը կտրած եւ ապաքինման շրջան բուրոյղ զլիտաւոր հերոսը՝ Գրիգորի (Վարուժան Խաչիւրի) կը ջանայ համոզել իբր կինը՝ Մարիամը (Նուարզ Մէնէշեան), գրացի Մարգարէ (Յովսէփ Գափաճեան), վերջինին կինը՝ Մարթան (Եաքէ Արփաճեան) եւ իրենց աղջիկը՝ Սաթն (Յոզիկ Էլմաստեան), որ իբր յաճ մեղեդին իրենց Հայրենի գիւղի հովիւին նշանաւոր զուարթն ձայնն է, հոշակաւոր նոյն եղանակը, թէ՛ այդ եղա-

նակը եկած է ազարակին ետեւի կողմէն, թէ՛ պատմածը երազ է, իրականութիւն է, զոր ապրած եւ շմբոյնած է իբր ամբողջ էութեամբ, թէ՛...

Գրիգորի ներաշխարհէն Թեւաւորուող կարօտի ալիքները, որոնք սկիզբը կասկածանքով կը գիժաւորուին իբր կնոջ, գիւղին մէջ վարժապետութիւն ջրած գրացի Մարգարին եւ Մարթային կողմէ, կամաց-կամաց կը գառնան համոզել նշարտութիւն, երբ գիշերով մը Մարգարինք եւս կը լսէ սրինդին ձայնը: Անձանօթ Թափառաշրջիկին՝ Վարդանի մուտքով Թատերախաղը կը ստանայ աւելի յստակ գոյներ, երբ գեղջական տարազ հազած անձանօթը ծոցէն կը հանէ իրենց ծանօթ զուարթ եւ կը նուազէ մինչ այդ Գրիգորին եւ Մարգարին յուզաշխարհը փոթորկած միեւնոյն մեղեդին: Աւելին. Սաթնի նուազումը կը լսրէ հոգեբանական-գիշարանական նոր զուպանակներ, որովհետեւ ան Վարդանի մէջ կը տեսնէ Այծեմարգը, զոր նախապէս տեսած էր լեռներուն վրայ պարտած առնն: Մարտափի վերադարձած Սաթնի նուազումը, հոգեւորական առ հոգեւորական, կը յուշէ նուազման իսկական պատճառը, երբ Վարդանի

երևում էն ետք՝ կու գայ առատութեան ժամանակը: Մարգար ականատես կ'ըլլայ անբացատրելի երևույթներու, — կովը կը սկսի անհատալիք քանակութեամբ կաթ տալ, հաւերը զոյգ-զոյգ կ'ածեն, բանջարանոցը կը վերածուի բարիքի անսպասարկերի...

Արգասաբերութեան խորհուրդը բացայայտ եւ պարզ իրականութիւն է Սաթոյի համար: Ան միայն գիտէ, որ վարդանը իր տեսած Այծեմարգն է, դիցարանական արտակարգ ուժը, գինովութեան, առատութեան եւ բեղմնաւորութեան անսպասարկ աղբիւրը, որուն հմայքին կը յանձնուի իր ողջ էութեամբ եւ մարմնով: Մարթա կը տեսնէ զոմի յարգերուն վրայ երիտասարդ զոյգին զեզման անսարանը եւ կը խնդրէ իր ամուսինէն՝ Մարգարէն, որ ճամբէ իրբեւ մշակ պահած վարդանը՝ Սաթոյի պատիւն ու ապագան փրկելու համար: Մարգար կը ճամբէ վարդանը: Վարդանի մեկնումին հետ՝ կանգ կ'առնէ նաեւ արգասաբերութեան ժամանակը: Լեռներու ուղին բռնած վարդան-Այծեմարգը, իր սրկնդին քաշողական զօրութեամբ, դէպի լեռներ կը կանչէ Սաթոն, որ կ'ընդատալէ հայրենի խորհուրդին կոնչին: Սաթոյի անհետացման կը յաջորդէ տակնուվրայութիւնը: Գրիգոր, Մարգար եւ Սաթոն կը շնորհի փնտռուէքի: Յանկարծ՝ Գրիգոր կը նշմարէ հեռուն, ապառաժի մը կատարին բնութիւնը երանգաւորող Սաթոյի եւ Այծեմարգուն պարզ, կը թափանցեն պարի խորհուրդին ոլորտներէն ներս եւ իրենք եւս կը բռնեն Սաթոյի ուղին, գէպի Հայաստանի լեռներ առաջնորդող երապի ճամբան...

Վերոյիշեալ իրերայաջորդ գէպերը կը կազմեն կմախքը շայտաւանի լեռներու սրբազանարք թատերախաղի դիպալաւրին, որ արտաքին գործողութիւններու փոխարէն՝ գլխաւորաբար կը զարգանայ ներքին իրականութեան շոքին այլեւեւրով: Խորքին մէջ՝ երազ մըն է այս թատերախաղը, կամ աւելի ճիշդ՝ խորհուրդներով եւ յոյզերով հարուստ իրականութեան մը երազային ընթերցումը, որուն համար Համաստեղ կ'օգտագործէ խորհրդանշաններու լեզուն: Օրինակ, եթէ Սաթոն հաւատարմութիւնը եւ ամբողջ-

կան ընծայաբերումը մարմնաւորող խորհրդանշանն է, վարդանը արգասաբերութեան, Հայաստանի խորհուրդին եւ սիրոյ եռեակ թելերով հիւսուած բարդ խորհրդանշանն է, իսկ Գրիգորն ու Մարգարը՝ ներկայացուցիչները այն սերունդին, որ, Համաստեղի բառերով՝ «Ծերացաւ աչքերուն մէջ բռնած կարօտը երկրին, ու ապրեցաւ, երազեց ու երազով դարձուց իր կեանքն իրակամ»:

••

Դանդաղ կը լայնով եւ մթնոլորտը առաւել ծանրաբեռնող խորհրդանշաններով բնորոշուող շայտաւանի լեռներու սրբազանարքի բնականացման համար, Վ. Խաչեան հանդիսատեսներուն ներկայացաւ նորեկ խումբով մը՝ իրբեւ հետեւանք մեկնումներու եւ դերասաններու յանձնարար փոփոխութեանց: Եթէ պահ մը զանց ընենք բնագործի-զերասան Վ. Խաչեանն ու ասորինքու փորձառութիւն ձեռք մը Յ. Գափուանանը, մընացեալ դերասանները (Շաքէ Արփաճեան, Նուարդ Մէնէշեան, Յոդիկ Էլմաստեան, Մհեր Գարագաշեան եւ Աւօ Սարգիսեան) նորեկներ էին, ինչ որ խորապէս անդրադարձաւ բնագործութեան վրայ՝ վերջիններուն խաղարկութիւնը խոցելով արհեստականութեամբ եւ բնական երկչոտութեամբ:

Նորեկ դերասաններ պատրաստելու կարողութեամբ օժտուած դերասան-բնագործի Վ. Խաչեան, ըստ երևույթին, այս անգամ բախած էր բացայայտ գծուարութեանց, որոնք, կը կարծենք, ուզողի հետեւանքն էին բնական փորձառութեան պակասին եւ բնագրին թատերական ծանրաշարժ կը լայնով: Համաստեղի մեկնարանութեան հարազատ մնալու եւ հեղինակին բնագրին հետ շիաղալու Վ. Խաչեանի նախաձեռնողութիւնը եւս ունեցած էր ոչ գրական անդրադարձ: Ճիշդ է, որ գրուածներու հարազատ եւ ճշգրիտ վերարտադրութիւնը մասամբ նպաստեց գրութեան պատգամը հանդիսատեսին փոխանցելու Խաչեանի թա-

գիտ ճիշդին, սակայն ոչ մէկ ձեռով կրցաւ զարժանել բնական այն ծանրութիւնը, թատերական աշխուժութեան բացակայութիւնը, որ հիմնական սկարու-թիւնն էր «ձայնաստանի լծոններու սրնգստարը» թատերախաղին:

Անկէկո՞ք ըլլալու համար պէտք է աւելցընել, որ դրական փառասիրութեամբ գրուած այս թատերախաղը կը կարօտէր բնական մշակման, մինչ հանդիսատեսին հրամցուած բնազիրը մնաց ներմա-փոխ ընթերցման համար գրուած թատե-րախաղ մը: Բնական հնարքներն ու դիւտերը, անկասկած, օղայնութեամբ, կենդանի շունչով եւ բնական աշխու-ժութեամբ կրնային հարստացնել Հա-մաստեղի դրական բնազիրը, մասամբ դիւրացնելով նաեւ անփորձ նորեկներու վստահուած հոգեվիճակները մարմնաւորելու գծուարին աշխատանքը:

Հաւաքական ներդաշնակ եւ համազօր խաղարկութեան մը բացակայութիւնը նաեւ խորապէս խոցելի դարձուց այս խաղարկութիւնը, հակառակ Վ. Խորչեանի եւ Յ. Գափլանեանի համոզիչ խաղարկութեան: Օրինակ, երբ Գրիգոր-Մարգար զոյգը առանձին կը մնար բեմին վրայ (սրինգի ձայնին խորհուրդին շուրջ փո-խանակուած երկխօսութիւնները), թա-տերախաղը կը գտնէր իր բնական կշիռը, շնորհիւ Խորչեանի եւ Գափլանեանի կենդանի խաղարկութեան, ներքին կշիռովէն բխած շնչառութեան եւ բա-ռերը ընդձոզ դիմախաղերուն: Նման պահերու՝ այս զոյգ տիպարները ամբող-ջական կերպարանք կը ստանային բեմին վրայ, նախ՝ իրենք իրենց մէջ ստած, ապա՝ միւս տիպարներուն հետ իրենց ու-նեցած փոխյարաբերութեանց օժանդակ զոյներով:

Ներդաշնակ այս մթնոլորտին պահ-պանման եւ դարդացման իրենց բաժինը մասամբ բերին նաեւ Նուարդ Մէնէշեան եւ Մհեր Գարազաշեան: Եթէ առաջինը քիչ մը շատախօս եւ կուտազան կնոջ տիպարը յաջողեցաւ արտաքնացնել բնական եւ անսեթեւեթ խաղարկութեամբ, երկրոր-դը՝ Մհեր Գարազաշեան, չկարողացաւ հաւասար պահել բնական խաղարկու-թեան նժարը, հակառակ իր ձայնին

թատերական լայն հնարաւորութիւննե-րուն: Ընդհակառակն, թատերախաղին ստանցքային տիպարներէն մէկը հանդի-սացող Անձնաօթ-Այծեմարդուն եւ միւս հերոսներուն մէջն ստեղծուեցաւ բնա-կան պարագ մը, Մհեր Գարազաշեանի շափազանցուած յուզականութեամբ նա-խադասութիւնները արտասանելու աս-ժուներայնութեան պատճառով: Ան պար-զապէս չէր ընդլուզուած խորշակեանական խաղարկութեան մթնոլորտին մէջ, որուն իսկ հետեւանքով տուեց ե՛ւ խմբական խաղարկութիւնը, ե՛ւ թատերախաղին կշիռը, որ սկսաւ խարխուփել պաթոսի, բնական խաղարկութեան եւ պէտք եղած չափով չթրծուած գերակատարներու (Շաքէ Արփանեան եւ Յոյնիկ Էլմաստեան) թատրոն հոտոզ սորվովի երկչոտ խաղար-կութեան մէջն:

Այս առթիւ պէտք է նշել, որ Մհեր Գա-րազաշեանի եւ խումբին խաղարկու-թիւնը շատ բան կրնար շահել, եթէ ար-տասանութեան փոխարէն բեմադրիչ Խորչեան հարազատ մնար բեմադրին՝ պահելով արտասանութեամբ հրամցուած կտորներուն երգային բնոյթը: Տակաւին, ժեստալիկն էլը ծնք տողով սկսող եւ խմբական արտասանութեամբ հարցը-ւած երգը կթէ հնչեց բնական ու ընդհա-նուր կշիռովէն հաշտ երաժշտութեամբ, Մհեր Գարազաշեանի վստահուած միւս կտորներուն մատուցումը վերածուեցաւ ասուների: Բարեբախտաբար, իր բեմ-կան ներկայութեամբ եւ սեռային բնազ-դը բացայայտող պարով՝ ան յաջողեցաւ տեսնելի գարձնել տիպարին ներքին ապրումները, որոնց մասամբ միայն կրցաւ արձագանգել Սաթրի սեռային լսելիայն տրամադրութիւնները պարով թարգմանող Պարիկը՝ Անի Վարզանեան:

Բնական անհրաժեշտ փորձառութիւն ձեռք չձգած Յոյնիկ Էլմաստեանի եւ Շաքէ Արփանեանի ժօտ զգայլէ էր բնական երկչոտութիւն մը: Եթէ առաջինը եղաւ ծայր ատիճան երազային ներկայութիւն մը (չըսելու համար՝ ցուրտ խաղարկու-թիւն մը բեմին վրայ), երկրորդը մնաց լուսանցքի վրայ՝ իր անհամոզիչ խաղար-կութեան պատճառով: Ան երբեք չյաջող-եցաւ քայլ պահել Խորչեան-Գափլա-

նեան զոյգին եւ թատերախաղին բնդհասանուր կշտոյթին հետ, որուն հետեւանքով մեծապէս տուժեց խումբին հաւաքական խաղարկութիւնը:



Ինչպէս իր նախորդ բեմադրութիւններուն պարագային, Վ. Պտըշեանի այս բեմականացումը եւս յաջողապէս գործի լծած էր բեմական լեզուին արտայայտական բոլոր հնարքները, — երաժշտութիւն, լուսաւորում, տարազ, դիմադրարում, բեմադրարում եւ բեմը լեցնելու կոչւած առարկաներու ճշգրիտ դիրքաւորում:

Զուէն Պտըշեանի ստորագրութիւնը կրող ուսումնասիրուած բեմադրարումը, թատերախաղին բներանգը եւ հոգեբանական-դիցարանական հանգոյցներն ու երազային մթնոլորտը ընդգծող իր այլարանական նկարագիրով՝ յաջողապէս ձայնակցեցաւ խաղարկութեան: Ուշագրաւ իր մանաւանդ հովհարածնե տախտակամածը՝ իր ալիքայնութեամբ, որ լուսագոյնս արտայայտեց երազային տարադնուածութիւնն ու ալիք-ալիք զարգացող կեանքի փոթորկումներուն ճշտարորոք կենսունակութիւնը: Նոյնպէս, խօսուն էր գիրկընդխառնուած գոյգին սեռային ապրումը թարգմանող միաձուլուած ծառը, որ էփ եւ տղամարդու (իմա՝ Մաթոյի եւ Անծանօթ-Այծեմարզու) ուրուականային իր գիծերով կը կատարէր հաւասարումը արգասարբութեան եւ հայրենի բնայխարհի խորհուրդներուն, իսկ բեմին խորքը գրաւած երկնաբերներ յուշող լեռները իրարու կը կամրջէին երկու տարբեր վայրեր՝ Ամերիկան ու Հայաստանը:

Պարզ ու ժուժկալ բեմադրարման հետ յաջող ներդաշնակութիւն մը ստեղծեցին անպահոյճ զգեստաւորումն ու զսպուած լուսաւորումը, իսկ թատերախաղին խորքէն բխած սուիթները (նախընտրելի պիտի ըլլար՝ եթէ օգտագործուէին գուտ սրինգի եղանակներ) Եկան աւելի շեշտելու «Հայաստանի լեռներու սրնգահարը» թատերախաղին բեմական մթնոլորտը: Տակաւին, այս առիթով պէտք է նշել նաեւ Փօլ Կոկանեանի կատարած յաջող դիմադրարումը, որուն շնորհիւ յստակ ու տեսանելի դարձան տիպարներուն նկարագրային գիծերը: Մանաւանդ ուշագրութեան արժանի էր Անծանօթ-Վարդան-Այծեմարզու խօսուն դիմադրարումը, որ եղաւ լուսագոյն ապացոյց տիպարին հոգւոյն խորքը թափանցելու իր արուեստագէտ դիմադրարի հմտութեան:

Եզրակացնելու համար պէտք է ըսել սակայն, որ այս բոլորով հանդերձ՝ «Հայաստանի լեռներու սրնգահարը» յաջողեցաւ մերձենալ «Թատրոն 67»-ի հաւաքական խաղարկութեան այն մակարդակին, որուն ապացոյցը բազմիցս տուած է Վ. Պտըշեան՝ իր «Ետնադիւրան» յարդէ գլխարկով, «Ո՛վ կը վախճայ Վերնիճիս վալփէնով, «Մարա Սատնով, «Վերակացուն»-ով եւ «Վամուրջն» դիտուածքով:

Այսուհանդերձ, երբ պահ մը մեր աչքին առջեւ կ'ուենանք Թատրոնը աժան եւ անիմաստ ծիծաղի հասարակ շուկայի վերածող լիրանանահայ պատեհապաշտ բեմադրիչներուն սպառողական արտադրութիւնները, կ'ողջունենք Վ. Պտըշեանի ազգային դիմագիծ ու ճասնիքը ու նեցող թէկուզ խոցելի գործի մը բացուելու ճիգը եւ «Թատրոն 67»-ին ու անոր արուեստագէտ բեմադրիչ-դերասանին կը մաղթենք բեղուն ու արդիւնաշատ նորանոր 20ամեակներ:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վ Ա Ձ Է Ա Տ Ր ՈՒ Ն Ի Ի «Փ Ա Յ Տ Ո Ջ Ի Լ Ն Ե Ր ՈՒ Պ Ա Հ Ա Ր Ա Ն Ը»

Ուրբաթ, 9 Յունուար 1987ին, Պուրճ Համուտի մէջ, կատարուեցաւ բացման հանդիսութիւնը «Գեղեցիկ Արուեստներու Քատերասրահ»ին (Գեղ. Ար. Ք.), որուն բեմին վրայ Վաչէ Ատրուների «Երջուն Քատերասրահ»ը սկսաւ ներկայացնել նոյնիսկ բեմադրչին հեղինակած «Փայտոջիլներու պահարան» անուն երգիծախաղը:

«Փայտոջիլներու պահարան»ը արհեստավարժ գրողի մը գործն է, որ գրուած է անմիջապէս բեմադրուելու մտքով: Այս գործով, հեղինակ-բեմադրչին դիտելու եւ գրելու կարողութեան կողքին, կը բացայայտուի նաեւ Քատերական շուկան ուսումնասիրած ըլլալու կարողութիւնը: Պատճառը այս է, որ ան չէ խորացած իր իսկ ստեղծած կերպարներուն ներքին ծաղեկուն մէջ, բաւարարուած է անոնց արտաքին եւ անմիջական հակազդեցութիւնները ցուցաբերելով, ինչպէս նաեւ՝ զիպաշարին յարմարող ծիծաղաչարժ պարզանկերու ստեղծումով: Յաւօք, խօսքի սրամտութեան փոխարէն, Վաչէ Ատրուներն զիմած է խօսքի անկապու թեան հետեւանքով առաջացող ծիծաղաչարժ երեւոյթներու: Այս բեմականացու մը, ինչպէս կը հաստատէ հեղինակը, զազու թին մէջ զարդացող բացասական երեւոյթներու ծաղրանկարն է:

Գործող անձերը նահապետական ընտանիքի մը անդամներն են, մեծ հայր մը, որդին՝ Սեղբակ, հարսը՝ Սաթենիկ, եւ երկու թոռները՝ Յակոբ եւ Սոնա: ասոնց կողքին կան անհանգիստ դրացին, Սոնայի սիրականը՝ Յարութիկ, մայրը՝ Նազելի, Յակոբի սիրած աղջիկը՝ Աշխէն եւ վիզայի ապօրինի գործերով զբաղող Յարութի:

Մեծ հայրը՝ Տէտէն, ջարդէն մազապուրծ եւ երկրի բոյրը վրան համակրելի ծերունի մըն է, որ հասած է նիւթական երեւելի զէրքի մը: Փաղքենի միջավայրի

մը մէջ ինկած զաւակը կը վայելէ հօր խնայողութիւնները, իսկ կինը՝ Սաթենիկ, որ կը տառապի ամուսնոյն պէս խաթարուած բնաւորութեամբ մը, անհոգ եւ թափթփած տանտիրէն մըն է, մինչ իրենց որդիները բռնած են այլասերման ճամբան: Բոլորն ալ, ծնողներ թէ զաւակներ, մաս կը կազմեն հանրային կեանքին, Սեղբակ թաղական է, կինը՝ եկեղեցատէր փկնաց միութեան անդամ, իսկ Յակոբ եւ Սոնա կը յաճախեն հայկական ակումբ: Ամէնքն ալ սակայն հանրային այդ հանգամանքները կ'օգտագործեն՝ ի հայտ բերնց անձնական հակումներուն եւ մոլուրի ներքուն: Սեղբակը Տէտէին հաշուոյն մօտեմներ կը կատարէ, Սաթենիկ նոյնը կ'ընէ պրինի եւ նորածնութիւններու առիթով կատարած իր շուքուրթի ներքով, Յակոբ, դարձեալ գրածի ուժով, կը զայիթակղեցնէ իր ընկերու հինքը, իսկ Սոնա սիրահարած է իրենցմէ աստիճան մը աւելի հարուստ Յարութիին: Կը պարզուի, որ տիկին Նազելի դէմ է Սոնայի եւ Յարութիին սիրահարութեան, մինչ Յարութիկ վճռած է ամէն զնով միանալ Սոնային, իսկ Յակոբ դիմել հանած է դրացիին աղջիկը՝ յի ձգելով զայն: Յակոբին խնդիրին տեղեակ է հայրը, աղջկան խնդրին՝ մայրը: Զերբազատուելու համար հաւանական փորձանքէն, Սեղբակ կ'որոշէ ընթացք տալ աղուն Ամերիկա խոյս տալու մտազրուութեան: Իր կարգին՝ Սաթենիկ, Յարութիկէնց հարստութեան իրականութեամբ տարուած, կ'ուզէ անպայման հանդիպում մը ունենալ Յարութիին հետ: Հայրը կը պահանջէ զաւակէն, որ վիզա կարգադրող վայխառուն իրենց մօտ կանչէ: Իրպուածը այնպէս կը բերէ, որ տղուն թէ աղջկան հաշուոյն սարքուած հանդիպումները զուգադիպեն իրարու:

Կը վերջանայ առաջին արարը: Ընկերու հոս «Փայտոջիլներու պահարան»



րանքը թէ՛ իբրև գրական և թէ իբրև թատերական երկ ու նի իր բնականոն և հասարակ ընթացքը, որ յաջողեցաւ յուզել հանդիսատեսին հետաքրքրութիւնը:

Սակայն նոյնը չենք կրնար ըսել երկրորդ արարին մասին, որուն ընթացքին տրամաբանական լուծումի մը պետք է յանգլին թէ՛ տիպարները և թէ անոնց անձնա որած հոգեկիճակները:

Ամփոփենք երկրորդ արարին տեղի ունեցած անցումը դարձերը ևս:

Յարութի որոշում ժամուն կը ներկայանայ և, փոխանակ Սեդրակին հանդիպելու՝ կը հանդիպի Սաթենիկին, որ, իր կարգին, կանուխ վերադարձած էր տուն, Յարութիկին հետ հանդիպում մը ունենալու համար: Այս անսպասելի հանդիպումները, ինչպէս նաև Յարութիկին և Սեդրակին հանդիպումները, իրենց անբնականութեամբ ծիծաղք կը շարժեն հանդիսատեսին: Այս պատկերին մէջ, ինչպէս պարզ կ'երևի, Յարութի կը փոխարինուի Յարութիկով, իսկ Յարութիկը՝ Յարութով: Այսպէսով, տան մէջ կը ստեղծուի իրարանցում մը: Յարութի և Յարութիկ սեննակ սեննակ կը տեղափոխու-

ին և ի վերջոյ բաղնիքին մէջ կը հանդիպին իրարու: Յարութիկին մայրը՝ տիկին Նազելի, կու գայ իր ընդդիմութիւնը յայտնելու Սոնայի և Յարութիկի ամուսնութեան: Թիւրիմացութիւնը, որուն վրայ կառուցուած էր երկրորդ արարը, կը բացայայտուի Նազելիին մուտքով: Հանգոյցը աւելի ևս կը քակուի Աշիկէնին երևումով և Տէտէն, որսի հրացանը ձեռքին՝ կը պարտադրէ կամքը, թէ արտագաղթել չկայ և զոյգերը պիտի ամուսնանան ու ապրին իր յարկին տակ:

Կը վերջանայ երկրորդ արարը:

Վաչկ Ատրունի մտայղացած է այնպիսի բեմայարդարում մը, որ հարազատ է գաւառի ոճին: Սեննակներու պատրանքը տուող նշանները, պարաններով կամարում անոնց մուտքերը, ցիրուցան հագուստները, լուսացքի թելերու վրայ շարած զգեստները, ինչպէս նաև կաշկարատիներուն դիրքը, լուրջ և ուսումնասիրուած աշխատանքներու արդիւնք են: Եթէ «Փայտոցի»ներու պահարանը գաւառի իբրև գրականութիւն ընթերցողին քիչ բան կը թելադրէ, ապա անոր բեմականացումը, հակառակ գրականօրէն թոյլ

կատոյցին, կը ձգէ յաջող բեմադրութեան մը տպաւորութիւնը:

Դերերու բաշխումը, որ հիմնուած էր դերակատարներուն բեմական փորձառութեանց, ձայնային երանդներու եւ արտաքին յարմարութիւններուն վրայ, կատարուած էր արհեստագործ բեմադրիչի մը հստատութեամբ:

Դերակատարները, մասնաւորաբար առաջին արարին մէջ, հանդիսատեսին ծիծաղող որսայու համար աւելորդ չափազանցութիւններու չդիմեցին, անոնք մնացին զրուածքին հաստատիւ եւ ցուցարեւոյցին իրենց կատարողական շնորհները:

Նոյն տպաւորութիւնը չկրկնուեցաւ սակայն երկրորդ արարին, յատկապէս պաւելտին թոյլ կատոյցին հետեւանքով: Հեղինակը չէր կրցած արամարանական լուծում մը գտնել իր գործին եւ ստացած էր շինծու ասարտ մը, որ այդ իսկ պատճառով երբեմն նաեւ դերասանները մղեց բռնազրօսիկ ճիգերու:

Միջատաստպանի լուր գերին մէջ, Գեորգ Գեորգեան ցուցարեւոյց մնջախաղի զգալի ընդունակութիւնը: Այս միակ մունջ կերպարը, բեմադրիչին աշխարհայեցողքը պարզող կերպարն էր, որ իր ծուռ ծիծաղով եւ ցուցատարակով մը յայտնած մտածումներով պարզեց կրկին դիտարեւոյցը ու նայնութիւնը:

Սակնեկի կերպարը հարազատօրէն մեկնարանեց Հայկուհի Տէր Վազարեան. ան բացառյալեց ծախքեր ու նայնամիտ, շտեմ, թեթեւ արարող կնոջ մը կերպարին եւ իր խաղարկութեամբ զարձաւ փնտռուած ներկայութիւն մը: Յակոբի գերը տուաւ Վարդան Մկրտիչեան, որ, հակառակ իր անփորձութեան, խոստումնային դերասանի մը տպաւորութիւնը ձգեց: Վազարու Ալթուսեան, որ կ'անձնաւորէր Մեղրակի կերպարը, ինքնավրտահ փորձառու եւ լուրջ դերասանի խաղարկութեամբ հանդիսացաւ թատերախաղին տիրական ղեկըրէն մէկը: Սոսի Տէր Վուկասեան ներկայացաւ Սոնայի վերով եւ եթէ չունենար առողջական կարգ մը սայթաքումներ, անկասկած աւելի լաւ տպաւորութիւն մը պիտի ձգէր: Յակոբ Պոպուսեան, Տէալի գերով, անա-

կրնկայ մը եղաւ հանդիսատեսին համար: Խաղարկութեամբ, արտաքինով, բեմական ձայնով ան նոյնացաւ Տէալի կերպարին հետ, ծանրանայով նախադասութիւններու հոգեբանական շեշտին վրայ:

Յարութիւն Պօշնակեան, զրացիի դերով, ներկայացուց միամիտ ժարդը: Վարդան Գեորգեան, Յարութիւնի գերով, տուաւ խոստմնային դերասանի մը գրասականը:

Ինչ կը վերաբերի Մանուկ Մարգարեանին, ան իսկապէս ստեղծեց վախառու Յարութիւն կերպարը, ցուցարեւոյցի զերասանական բարձր կատարողութիւն ու արուեստի ըմբռում, եւ հակառակ իր գերին գոեհուութեան՝ չգոեհացաւ ո՛չ ձեւերով եւ ոչ ալ աւելորդ բացազանչութիւններով: Իր անձնաւորած կերպարին տուաւ պորճ-համուտեան հարազատ երանգ մը: Տեղին է ըսել, որ Վախտոյցիւներու պահարանը երգիծախաղին երկրորդ արարը բոլորովին փուլ կու գար, եթէ Մանուկ Մարգարեան բացակայէր բեմէն:

Անահիտ Ատրուսի, Նազիլի կարճ գերով, բերաւ իր բաժինը, հանդիսատեսին վրայ ձգելով ամենայն լրջութեամբ խաղին պատրաստուած ըլլալու տպաւորութիւնը: Լինտա Կերկրեան, Ալթուսի լաւ կարճ գերով, ցուցարեւոյց համոզիլ խաղարկութիւն մը:

Վախտոյցիւներու պահարանը գաւելտով, Վերոնի թատերախումբը ցուցարեւոյց գործի լրջութիւն, գերասանական կատարողութիւն եւ թատերական հասկացողութիւն:

Վաչէ Ատրուսի փաստեց իր լուրջ եւ արհեստագործ բեմադրիչի կարողութիւնը, թէեւ ինք եւ իր բեմադրութիւնը աւելի պիտի չահլէին, եթէ գործին կատոյցը խոցիլ չըլլար:

Ատրուսի Վախտոյցիւներու պահարանը գաւելտը, ժամանցի թատրոն ըլլալով հանդերձ, քայլ մը առաջ անցաւ նախապէս ներկայացուած ժողովրդական բնոյթի գողին տակ ծածկուած քիչ մը այլանդակ եւ գոեհիկ այն բեմադրութիւններէն, որոնք վերջերս անպատասխանատու ըլլալու աստիճան ողողած են մեր բեմերը: ՍԱՐԳՍԻ ՏԵՐ ԽԱՉԱՏԱՌԻԵԱՆ



ԳԱՌՆԻԿ

ԱԴԴԱՐԵԱՆԻ

ՄԱՀԸ

Կերպի, 30 Նոյեմբեր 1946ի առաջ անհանձնելի և անհասկանալի ծրագրերով՝ 81 տարեկան հասակին ժառանգորդական իրավունքները հանձնարեց հարազատական գործիչ Գառնիկ Ազգարեանին:

Գ. Ազգարեան ծնած է 25 Մարտ 1925ին, Հալեպու Նախնական կրթություն ստացած է անգլո-սլոնիական և Փրանսական վարժարաններում: 1942ին Հասարակական է Գլխավոր, որ պարտեզու ու գործիչ մինչև իր մահը:

1966ին, Վահագնյանի և ԱՊԻԿ ամսագրերին միջև կր ստորագրել իր առաջին բանաստեղծությունները, որոն կր լավագույն այլ բանաստեղծություններ և հրատարակագրական յոզու աններ՝ սփիռքական շարք մը թերթերում միջ:

1949ին, ան կ'ըլլայ Գլխավոր Գրքական լրջանակի մշակութային միության հիմնադիրներից մեկը և 1971ին սկսեայ վերջինից միության նախագահը:

1945ին, Գլխավոր միջ Գառնիկ Ազգարեան լոյս կ'ընծայ իր բանաստեղծություններու առաջին հատորը՝ «Պատմելիմ վրայ», 1965ին՝ «Մատնանցալի և հատուցմանը երկարաշունչ բանաստեղծություններ», 1968ին՝ «Վազգեն Եռյանեան ուսուցիչներու թիւեր», 1969ին՝ «Ապրիլ-Մեծնիմ» թերթագրերը, իսկ 1974ին՝ «Սեւ և կարմիր» արձակ լինու ծոցովմունք:

Գ. Ազգարեան իմրագրած է «Մեր ճշմարտագույն լեզու», «Կանչ» և «Ազգային մշակույթ» շարքային թերթերը և այնպես էլ «Նախապատմական» և «Արարատ» ժամույններ:

Գ. Ազգարեանի հատորները ապուած են նաև Հայաստանի միջ, իսկ իր բանաստեղծությունները՝ Երևանի, Երասխանի, Երասխանի, Երասխանի և այլ լիպուներում: Ան բացմիջս մասնակցած էր Հայաստանի գրողներու միության համապու մարտերում:

Ա.ՊՐԻՄ – ՄԵՌՆԻՄ

Ես դեռ մամուկ
Սորվեցայ քեզ թերթի յոյսիս ժպտում ձեռքով
Ես ամեն հեղձ
Ապրիմ – մեռնիմ, դու՛մ վերջ գտար լուկ ապրիմ-ով:

digitised by A.R.A.R.@

Բայց այն տարի,
 Հայոց ազգի անմեղունակ մատներում տակ,
 Ինչպէ՞ս, ինչպէ՞ս յանկարծ վերջին թերթոյ բարի՝
 Դարձաւ մեռնիմ՝ ապրիմ-ի տեղ,
 Դարձաւ արեամ հեղուող կաթիլ,
 Որ կաթիլ չէր, այլ ծո՛վ անծիր,
 Շի՛թ էր լեզի արտասուքի,
 Ու վիրատը թռչունի պէս թայտացող
 Մանուկի սի՛րտ մ'արմատախիլ:

Ա՛խ, այն տարի,
 Միլիոն հայեր ապրիմ-մեռնիմ ըսին դազով,
 Ըսին յոյսով՝ որ ինչպէս միշտ՝ թերթոյ վերջին
 Կ'ըսէ ապրիմ գարավագին,
 Ըսին վախով՝ որ յանկարծ ձեռքն արդարութեան՝
 Զսխալի
 Եւ մէկի տեղ խլէ անմեղ երկու թերթիկ,
 Ըսին ողորձ ու աղօթքո՛վ,
 Բայց ողբն եղաւ այրո՛ղ կապար,
 Աղօ՛թքը՝ քա՛ր,
 Եւ ծաղիկներն ամէն՝ կարծես մէկ բերանով,
 Մրմնջեցին — մնա՛ք բարով:
 Ապրիմ-ի տեղ մեռնի՛մ ըսին արտասուագին,
 Աշունի պէս թառամելով:

Ա՛խ, այն տարի,
 Ապրիմ-մեռնիմ չմնաց մեր երկմէին տակ,
 Մնաց միայն սեփ-սեւ մեռնիմ,
 Հրածեշտի իրրեւ տխո՛ւր ծաղկեպսակ,
 Իրրեւ մահա՛գոյ արիւնագիր:
 Ու ես ի գուր հիմա ամէն երիցուկի
 Հարց կու տամ դեռ՝
 — Ապրի՞մ — մեռնի՞մ, ապրի՞մ — մեռնի՞մ...

Ճի՛շդ է, կ'ապրիմ ես անբեղուած հին աւիւնով,
 Ճի՛շդ է, այնտեղ, Արաքսի միւս ափին վրայ
 Ամէն ծաղիկ ապրի՛մ է բորբ,
 Բայց անարմատ թուփին համար՝ ապրիլն անգամ
 Մեռնելու՛ պէս բան մըն է լոկ,
 Առանց հողի՝ ծառը՝ փտող
 Կ'ըլլայ գերան մը ամաւիշ,
 Ու ես իմէս՝
 Դարձած եմ հեզ ապրիմ-մեռնիմ մը հիմա որբ,
 Զոր կը թերթեն պանդխտութեան մատներն անգուք,
 Եւ անխնայ կը տորեն
 Ամենակալ ժամանակի քայլերը կոյր:
 Ապրիմ — մեռնիմ մը՝ հիմա ես,
 Որ մերթ ապրի՛մ է բազմաթերթ,
 Ու լսելիայն մեռնի՛մ է մերթ...

ԳԱՌՆԻԿ ԱՂԴԱՐԵԱՆ



ՀԱՅԿ ՊԱԼԵԱՆԻ ՄԱՀԸ

բար էր զբաղի վարչական գործերով: Երբ Նիթան կան պատճառներով ընտր փիսիկոր էր գաղթի յայտ տեսնել, Հ. Պալեան էր զիմ ընտր փիսիկոր տատերն ու զոչքերը եւ յայտ էր ընծայել ընկղակե հոտրեան՝ 6 Մարտ 1927ին:

1930ին թերթը էր զտոնայ երկտրեայ, իսկ 1 Մարտ 1932ին՝ օրաթերթ:

1965ին, Հայկ Պալեան ընկղակե Հրատարակման իրաւունքն ու պատասխանատուութիւնը էր փոխանցել Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտեին:

Ամբողջ կեանքը մը Հայ մամուլին ծախարան Հայկ Պալեան, ընկղակե կողքին յայտ էր ընծայել Ծախարանի թերթեր — Սուրիանայ տարեցոյց (Ա. տարի. 1929, 316 էջ), ընկղակ շաբաթօրեայ (1944-1952) եւ ընկղակ մարգարեան (1952-1958):

Բազմապատասխան խմբագրողութեան թաղման եւ յուզարկատրութեան արտադրութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 21 Փետրուար 1946ին, Անթիլիասի մայրավանդի Ս. Գրիգոր Լուսաւորի մայր տանարին մէջ, նախագահութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Արամ Արք. Քելլեհանի: Սկզբնական արտադրութեան ներկայ գտնուեցան պետական հայ երեսփոխաններ, կուսակցական եւ ազգային մարմիններու ներկայացուցիչներ, մասնաբաժաններ եւ վստասկալատ ծախարանի յիշատակը յարգող ընդամուսնիներ:

Արտադրութեան աւարտին, իսոյք առաւ առաջնորդ արտադար, որ ընդգծեց իր անձը ընդհանրական շահերու շարժումով եւ կեանքի պատերազմը ինքնավստահութեան մղան ու շահան Հայկ Պալեանի մարդկային ու ազգային տարմանիքները: Անդրադատեալ էր անոր կենսագրական մանրամասնութիւններուն, որոնք իրենց մէջ էր խտացնել կէտարու ծախարան եւ պաշտար, առաջնորդ արտադար կողմ ուղղեց շարունակելու հայ կեանքի պատերազմը՝ Լիբանանի մէջ թէլ ալլուր: Իր խօսքի աւարտին, յանուն Գարեգին Բ. Կաթողիկոսին, իր եւ Ազգային Իշխանութեան առաջնորդ արտադար ցաւակցութիւն յայտնեց ողբացեալ ծախարանի ընտանեկան պարզաներուն եւ զազափարի ընկերներուն:

Սկզբնական արտադրութիւններն էր, Հայկ Պալեանի Հարազատները, զազափարի ընկերները եւ ներկայ բազմութիւնը խմբուեցան մայրավանդի շրջափակին մէջ, որ զամբանական խօսքեր արտասանեցին ընկերներ Արամայէս Տէր Յայատուրեան եւ Անդրանիկ Ռ.Փայլեան:

Ծամբանական զոյգ խօսքերն էր, յուզարկատրներու թափօրը ուղղուեցաւ Ծրքն Երպիւնի Ազգային զերեզմանատունը, որ տեղի ունեցաւ թաղման կարգը:

Ետքի, 21 Փետրուար 1987ին երեկոյան, էր ծահանացուն կնքեց քիւրտաբանայ մամուլի հիմնադիր անունով վերջին ներկայացուցիչը՝ ընկղակ օրաթերթի հիմնադիր, քիւրտաբանութիւն, ետեկին տնօրէն եւ բազմամեայ խմբագրողու Հայկ Պալեան:

Հայկ Պալեան ծնած էր 1897ին, Ծորք Մարզպան (Տէրթ Ծոյ): 1911ին էր սկիզ յանարեկ Ծորանի Ամերիկեան գոյէնը, որուն ուսման շրջանը, բոնազաղթի հետեւեալով՝ 1915ին կիտաւ էր թողու եւ ծնողքին հետ էր փոխադրուի Ծորք Եղուր (Կիւրտսային Սուրիա):

Դաշնակից ու ժերու յաղթանակէն ետք, էր վերադառնայ Ծորք Մարզպան (1918) եւ ուսումը էր շարունակել Ծորանի Ամերիկեան գոյէնին մէջ, ուրիմ շրջանաւարտ կ'ըլլէ 1920ին:

Իրեն ուսուցիչ՝ էր պաշտանավարտ Ծորք Մարզպանի Ազգային գոյէնին մէջ: Կիլիկիոյ պարպումի օրերուն, էր մասնակից Ծորք Մարզպանի ինքնապաշտպանութեան կռիւներուն եւ էր վերադարձի արուսեցին:

Այնուհետեւ, կ'անցնի Ալեքսանդրիթ, իսկ անկի ուշ՝ Նար Իպրահիմի օրրանոցը, մեն օրրերուն հետ էր փոխադրուի Երպիլլ, ուր Հաստատուան օրրանոց թայնին մէջ, զաստատուութեան կողքին էր կազմակերպել լաւաններ եւ աշակերտութիւնը էր մշտ գրական ծարգանքներու: Կր ստանձնէ շՅԱՆ ամսաթերթի խմբագրութիւնը, որ էր օրով անկի բովանդակութիւն էր գտնուայ:

1923ին, էր մայրաքաղաք պատճառով էր փոխուի Նար Իպրահիմի օրրանոցը, մեն օրրերուն հետ էր փոխադրուի Երպիլլ, ուր Հաստատուան օրրանոց թայնին մէջ, զաստատուութեան կողքին էր կազմակերպել լաւաններ եւ աշակերտութիւնը էր մշտ գրական ծարգանքներու: Կր ստանձնէ շՅԱՆ ամսաթերթի խմբագրութիւնը, որ էր օրով անկի բովանդակութիւն էր գտնուայ:

1926-1927 տարիներուն մաս էր կազմել Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտեի պաշտօնաթերթին՝ ընտր փիսիկի խմբագրական կազմին եւ զիշտաւարտ

ԳՈՒ... ԳՈՐԾՆ ԵՍ ԱՐԵԼ,

ՄԵՆՔ... ՅԱՆՁՆ ԵՆՔ ԱՌԵԼ

Յառաջացած տարբեր մէջ դանուողներուն պարագային, մարզս որքան ալ ի յառաջագոյնն հաշտուած ըլլայ իմացած բոժին հետ, տիրութիւնը կը համակէ էութիւնը, կորուստին պատճառով թէ ստեղծուած պարագին, որ կը լեցուէր, կրնար լծցուիլ մեկնողին խառնուածքային բխումներով միայն, ապրած կեանքին հարստութեամբ կուտակած գործին հմայքով:

Անդարձ մեկնողներու այդ շարքին կը պատկանէր Հայկ Պալեան, որ ինեսունի հանգրուաններուն պատահած իր մահով այնքան լցնցեց հաւանարար իր մտերմութեան մէջ ահարար կամ ասին ժը ապրած մերձաւորները, որքան զգացուց, կը զգացնէ, պիտի՛ զգացնէ կարօտը իրմով լեցուող այն պահերուն, որոնք այլևս պիտի չկրկնուին, պիտո՛ւ...

«Ազդակ»ը Հ.Յ. Դաշնակցութեան կեդրոնական կոմիտէին փոխանցելէ ետք, անոր հետ պարագայական կապեր միայն ունեցաւ, ընդհանրապէս վարչական մարզէն ներս, ու թէ՛ ղի վերածման նախօրեակին, յանձնախմբային դերով ժը՛ աւելի լայն տեղի, աւելի մեծ մեքենաներու, աւելի մեծ թիւով խմբագիրներ ունենայու հարցերուն լուծման առընդութեամբ: Բայց ասկէ առաջ թէ ասկէ ետք, օրաթերթին հետ իր հոգեկան կապը միշտ նոյնը մնաց, ամէնօրեայ, ամուր, անբեկանելի, անուշա՛ղն տաքը տարի, մինչև 1975ի առաջին ամիսները:

Ամէն օր, գրեթէ անանց բացառութեան, տուօտեան ժամը Յի ատեններուն կ'երեւէր, միշտ նոյն շահագրգռութեամբ, հոգածութեամբ, աւելի լուսին բաղձանքը սրտին, շրթներուն: Երեւնալէն առաջ արդէն կարգացած կ'ըլլար թերթը, արդէն կազմած իր ուրախտիթ թէ տխրայի գիտողութիւնները, զորս կը փոխանցէր այն նախանձախնդրութեամբ, որ մարդ ժը կ'ունենայ իր զուգէին հանդէպ, հիմնադիր ժը՛ իր գործին ներկային ու ապագային նկատմամբ, գաղափարապաշտ ժը՛ իր որդեգրած գաղափարին այսօրուան ու վաղուան կապակցաբար:

Երբեմն, երբ դեռ գործերը իրենց առօրեայ կշռոյթին մէջ մտած չէին ըլլար, կը պատմէր դրուագ ժը, միշտ «Ազդակ»ին կապուած, ի մասին անոր կրած բարդ գծուարութիւններուն, արձանագրած յաջողութիւններուն, վատտակաւոր յօգուածագիրներուն, սկսնակներուն, բացառիկներուն պատրաստութեան, դասի ժը հետապնդումին, պայքարներուն, գործին հանդէպ բարեացակամութեամբ լեցուած հոգիներուն, շարակամներուն, թշնամիներուն ու կը հասնէր այն հանգրուանին, ուր կատարուեցաւ փոխանցումը: Հիմնելու, հունուորելու, հաստատելու, անցնելու փաստերը իր հպարտութեան մաս կը կազմէին եւ հոգեկան հրճուանքէն անբաժան էր անհերքելի այն միւս տուեալը, որ լաւագոյն պայմաններու մէջ կատարած է թերթին փոխանցումը:

Վերջին տարիներուն քիչ անգամ կ'անցնէր Արեւմտեան Պէրուի եւ պարբերաբար միայն դուրս կու գար ընտանեկան շրջանակէն: Տնտեսական մասնագումբիւններէ զերծ եւ հարապատենք շրջապատուած մարդու մը բախտով որը իրիկուն կ'ընէր, բայց այլապէս նախանձնի այդ երջանկութիւնը քիչ կու գար իրեն, կը տանջուէր մեկանի հոտէն ու սպարանի եռու գետէն հետու մնացած ըլլալու ստիպումին հետեւանքով: Անգամ խոր ծերութեան՝ անսահման էր գործելու իր եռանդը, մասնակցելու իր տենդը, ծառայելու պապակը:

Անձնական բարեկամութիւնը դէր ունի այս տողերու գրառման մէջ, բայց անձնական որեւէ կապ երբեք էր մինակը չէ կրցած գրական թերթի մը մէկ էջը գրուի: Գրականութեան ընծայուած նպատը պայման է նման պարագաներու, եւ Հայկ Պայեան քիչ չէր նպատած տարազիր մեր գրականութեան ծաղկման, մանաւանդ Վեպիակի առաջին տասնամեակներուն: Ամբողջ քանակական մը, առնուազն միջեւ Համալսարանային Երկրորդ պատերազմին վախճանը, նաեւ գրական թեմ էր Վեպիակը, սկսնակներուն թէ վաստակաւորներուն համար հաստատարապէս, ու նաեւ Հայոց թանկագին գրականութեան ու միջնադարին գրականութեան գլուխ-գործոցները ընթերցողին փութացնող միջոց մը: Կրանանի եւ Սուրիոյ ընթերցողներէն շատեր ամբողջ գրողարաններ կազմեցին Վեպիակի թերթիներուն ճամբով, նորէն Հայկ Պայեանի պատանով, ընտրութեամբ, քաջայերանքներով:

Յիշելու բարեկամութիւններուն առընթեր՝ ուրիշներ քացասական գիծեր եւս կը յիշեն Պայեանի գործերուն ու բնաւորութեան մէջ: Թող այդ մասին խօսին այդ ուրիշները, մենք զինք ճանչցած ենք իր հանրանունը գործերուն ընթացքին, Վեպիակի մէջ, Վեպիակի շուրջ, Վեպիակի տեր եւ տնօրէն եղած տարիներուն, անկէ ետք, Վեպիակը իր հոգեհատորը եւ անոր անձնակազմը իր զաւակները համարելու շարունակուող սպրուսին մէջ:

Գործին կապուած յուշերուն ու գեղումներուն ի լուր, երբեմն, առանց իրեն նայելու, աշխատակից ընկերներէս մէկուն կամ միւսին նայելով՝ ինքս խօսք կ'առնէի ու հանդարտօրէն եւ մե՞ծ լըջութեամբ կը կրկնէի նոյն յանկերգը.

— Պարոյր Աւետիսեանի քննադատութիւն մը ունի, խորագիրը՝ «Իսոսփ եւսաստիքի», որուն եզրափակիչ տողերը խորագիր ընտրելով՝ որ մը յօդուած մը պիտի գրեմ, անպայման այդ խորագիրով յօդուած մը պիտի գրեմ որ մը...

«Ի ու... գործն ես արեւ, Մեմֆ... յանձն եմք առել...»:

— Գիտեմ, գիտեմ, սրիկայ, — կ'ընդմիջէր զիս Պայեան փաղաքշական եղանակով մը — բայց այդ յօդուածը շուտ պիտի գրես դուն, շուտ ուշ պիտի վայելես այդ հանոյքը, շուտ ուշ...

Կ'ըսէր այնպիսի՝ զուարթախոսութեամբ եւ այնպիսի՝ վարակիչ եղանակով մը, որ եթէ մեր երկուքն առաջին մեկնողը ինք պիտի ըլլար անպայման, ի սրտէ կը բաղձայի, որ իրապէ՛ս ուշ գրուէր այդ յօդուածը, որպէսզի ուշ հասնի վաստակած, փորձառու, զուարթախոս, խելացի եւ մեր դասութի բաներուն քաջատեղեակ բարեկամ մը բաժնուելու ցաւաւորի պահը:

Նախախնամութիւնը ընթացք առաւ այս անգամ մեր բաղձանքին: Հայկ Պայեան աչքերը գոցեց տարիքի լիութեան մէջ, երբ գործը ըրած էր արդէն ու մենք յանձն առած էինք շարունակել իր երախտաշատ ժառանգութիւնը...

Գ. Ս.



ՀՈՅՍ ՏԵՍԱՆ

ՀՈՅՍ ՏԵՍԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

— Բանաստեղծություն —

- 1986, Անթիլիաս, տպ. կիլիկիոյ կաթողիկոսութեան, 341 էջ: Հրատարակութիւն՝ Գէորգ Մելիտինեցի գրական հիմնադրամի, թիւ 19:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԵՐԿԵՐ

— Բանաստեղծություններ —

- 1986, Անթիլիաս, տպ. կիլիկիոյ կաթողիկոսութեան, 615 էջ: Հրատարակութիւն՝ Դանիէլ Վարուժան գրական հիմնադրամի, թիւ 1:

ՌՈՒԲԷՆ ՍԵՐԱԿ

ԵՐԿԵՐ

— Բանաստեղծություններ, պատմուածքներ եւ արձակ էջեր —

- 1986, Անթիլիաս, 651 էջ: Հրատարակութիւն՝ ՀԵՀՈՄԻ Խ. Գաբրիէան հիմնադրամի, թիւ 2:



ԼԻՔԱՆԱՆ
Հատազանգառ 40 Լ.Ո.
Տարեկան բաժնեգին 400 Լ.Ո.

ԱՌՌԻՐԻԱ
Հատազանգառ 25 Ա.Ո.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد اوتين كارنيك قرانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE
LITTERAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄԱՍՊԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
Ա. ՏԷՐ ԽԱՀԱՏՈՒՐԵԱՆ

•

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
Tel. 296898

شباط ١٩٨٧

digitised by A.R.A.R.@